

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# **CONTEMPORARY EURASIA**

CLASH OF POLITICAL INTERESTS

EDITED BY RUBEN SAFRASYAN

**VOLUME III (1)**

YEREVAN – 2014

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# **СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ**

**СТОЛКНОВЕНИЕ ПОЛИТИЧЕСКИХ ИНТЕРЕСОВ**

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСЯНА

**ТОМ III (1)**

ЕРЕВАН – 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՏՈՐ III (1)

ԵՐԵՎԱՆ – 2014

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**

**Ռուբեն Սաֆրաստյան**, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Լիլիթ Հարությունյան**, պ.գ.թ., դոցենտ

**Գոհար Իսկանդարյան**, պ.գ.թ., դոցենտ

**Վահրամ Տեր-Մաթևոսյան**, պ.գ.թ.

**Լևոն Հովսեփյան**, պ.գ.թ.

**Նազելի Նավասարդյան**, պ.գ.թ. (հատորի պատասխանատու)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի սույն հատորն ընդգրկում է մերձավորարևելյան առանցքային հիմնախնդիրներին և գործընթացներին նվիրված վերլուծական ուսումնասիրություններ: Հեղինակների ուշադրության կենտրոնում են նաև Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում հետխորհրդային շրջանում ձևավորված աշխարհաքաղաքական մարտահրավերները, ներտարածաշրջանային վերափոխումներն ու դրանց ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա:

Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

PUBLISHED BASED ON THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL OF  
THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

EDITOR IN CHIEF

**Ruben Safrastyan**, Prof., Dr., Corresponding Member of NAS RA

EDITORIAL BOARD

**Lilit Harutyunyan**, Assoc. Prof., PhD

**Gohar Iskandaryan**, Assoc. Prof., PhD

**Vahram Ter-Matevosyan**, PhD

**Levon Hovsepyan**, PhD

**Nazeli Navasardyan**, PhD, Responsible for the Volume

The current volume of the “Contemporary Eurasia” includes analysis of the key issues and the ongoing political processes in the Middle East. The articles deal with the geopolitical challenges, intraregional transformations in the South Caucasus and Central Asia in the post-Soviet period and their impact on regional developments.

The volume may be of interest for scholars, politologist, experts and students.

ISSN 1828–3948

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РА

ГЛАВНЫЙ РЕДАКТОР

**Рубен Сафрастян**, д. и. н., профессор, член–корреспондент НАН РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

**Лилит Арутюнян**, к.и.н., доцент

**Гоар Искандарян**, к.и.н., доцент

**Ваграм Тер–Матевосян**, к.и.н.

**Левон Овсепян**, к.и.н.

**Назели Навасардян**, к.и.н., ответственная за выпуск

Настоящий том периодического сборника “Современная Евразия” включает аналитические исследования, посвященные ключевым проблемам и процессам на Ближнем Востоке. В статьях рассматриваются геополитические вызовы и внутрирегиональные преобразования на Южном Кавказе и в Центральной Азии в постсоветский период, а также их влияние на регион в целом.

Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся современной Евразией.

ISSN 1828–3948

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քաղաքական զարգացումները Լիբանանում.  
«Մայրիների հակահեղափոխություն»  
(2006 թ. վերջ – 2007 թ. սկիզբ) . . . . . 10

## ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

Քաղաքական իսլամը «Արաբական գարնան»  
համատեքստում . . . . . 29

## ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Թուրքական ռազմական բազաների խնդիրը  
Իրաքյան Քուրդիստանում . . . . . 39

## ՆԵԼԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ

Հետխորհրդային Կենտրոնական Ասիայում Թուրքիայի և Իրանի  
մշակութային քաղաքականության առանձնահատկությունների ու  
նպատակների շուրջ . . . . . 63

## ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ, ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Եվրամիության քաղաքականությունը Հարավային Կովկասում  
և ՌԴ հակազդեցությունը . . . . . 75

## ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

Վրաստանի քաղաքական վերնախավի հետխորհրդային  
արտաքին քաղաքականության կողմնորոշումների  
ձևավորման պատմությանից. հետադարձ հայացք . . . . . 90

## ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՔՅԱՆ

«Հարավային Ադրբեջանի» առասպելի կայացումը.  
խորհրդային և հետխորհրդային Ադրբեջանի Հանրապետության  
դերը . . . . . 103

## CONTENTS

### **LILIT HARUTYUNYAN**

Political Developments in Lebanon.

“Cadets’ Conterrevolution”

(The End of 2006 – The Beginning of 2007) . . . . . 10

### **ARAKS PASHAYAN**

The Political Islam in the Context of “Arab Spring”. . . . . 29

### **VAHRAM PETROSYAN**

The Problem of Turkish Military Bases in Iraqi Kurdistan . . . . . 39

### **NELLY MINASYAN**

On Specifics and Purposes of the Cultural Policy of Turkey and

Iran in Post-Soviet Central Asia. . . . . 63

### **VARDAN ATOYAN, SHUSHAN MOVSISYAN**

The EU Policy in the South Caucasus and Russia’s Reaction . . . . . 75

### **BENIAMIN MAILYAN**

From the History of the Formation of the Post-Soviet Foreign Policy

Orientations of the Ruling Elite in Georgia: A Retrospective Look . . . . 90

### **GEVORG AVETIKYAN**

The Creation of the “Southern Azerbaijan” Myth:

The Role of the Soviet and Post-Soviet Azerbaijani Republic . . . . . 103



## СОДЕРЖАНИЕ

### **ЛИЛИТ АРУТЮНЯН**

Политические процессы в Ливане. “Кедровая контрреволюция”  
(конец 2006 – начало 2007 гг.) . . . . . 10

### **АРАКС ПАШАЯН**

Политический ислам в контексте “Арабской весны” . . . . . 29

### **ВАГРАМ ПЕТРОСЯН**

Проблема турецких военных баз в Иракском Курдистане . . . . . 39

### **НЕЛЛИ МИНАСЯН**

Об особенностях и целях культурной политики Турции и  
Ирана в постсоветской Центральной Азии . . . . . 63

### **ВАРДАН АТОЯН, ШУШАН МОВСИСЯН**

Политика Евросоюза на Южном Кавказе и противодействие  
России . . . . . 75

### **БЕНИАМИН МАИЛЯН**

Из истории формирования постсоветских внешнеполитических  
ориентаций правящей элиты Грузии: ретроспективный взгляд . . . 90

### **ГЕВОРГ АВЕТИКЯН**

Становление мифа о «Южном Азербайджане»: роль советской  
и постсоветской Азербайджанской Республики. . . . . 103

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԼԻՔԱՆԱՆՈՒՄ.  
«ՄԱՅՐԻՆԵՐԻ ՀԱԿԱՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ»  
(2006 Թ. ՎԵՐՋ – 2007 Թ. ՍԿԻՉԲ )**

2006 թ. նոյեմբերի 21-ին՝ Լիբանանում անկախության օրվա նախօրեին, սպանվեց հակասիրիական կողմորոշում ունեցող ևս մեկ քաղաքական գործիչ՝ արդյունաբերության նախարար Պիեր Ժմայելը<sup>1</sup>: Պատահական չէ, որ վերջինիս սպանությունը կանխորոշեց երկրում հակադիր ճամբարների և նրանց տարածաշրջանային ու միջազգային հովանավորների միջև հակասությունների հերթական սրումը:

2006 թ. նոյեմբերի 23-ին Պիեր Ժմայելի հուղարկավորությունը վերաճեց սգո ցույցի, որին իրենց մասնակցությունը բերեցին Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի որդու՝ Սաադ Հարիրիի գլխավորած հակասիրիական դաշինքում համախմբված «Մարտի 14-ի» ուժերը<sup>2</sup>: Նրանք Ժմայելի սպանության մեջ մեղադրեցին Դամասկոսին:

<sup>1</sup> Լիբանանի կառավարման հիմքում ընկած կրոնադավանական համակարգի համատեքստում շարունակում են զգալի դեր խաղալ կրոնատոհմային ընտանիքները: Նրանց շարքում ազդեցիկ դիրքեր ունի քրիստոնյա մարոնի Ժմայելների ընտանիքը: Պիեր Ժմայել ավագը (սպանվածի պապը) Լիբանանյան փառանգներ (Քաթաիր) կուսակցության հիմնադիրն էր, իսկ հորեղբայրն ու հայրը եղել են երկրի նախագահներ: 1975 թ. Պիեր Ժմայել ավագի դեմ իրականացրած հարձակմանը հետևած իրադարձությունները սկիզբ դրեցին Լիբանանում երկարատև քաղաքացիական պատերազմին, իսկ 1982 թ. սեպտեմբերի 14-ին նորընտիր նախագահ Բաշիր Ժմայելի (սպանվածի հորեղբայրը) սպանությանը հետևեց իսրայելցիների արևմտյան Բեյրութի գրավումն ու պաղեստինյան փախստականների Սաբրա և Շաթիլա ճամբարներում հազարավոր պաղեստինցիների սպանությունը:

<sup>2</sup> Հակասիրիական դաշինքում համագործակցում են Սաադ Հարիրիի գլխավորած Ապագա (արաբերեն՝ Ալ-Մուաթակբալ) շարժումը, հիմնականում դրուզներից կազմված Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, որի ղեկավարն է Վալիդ Ջունբլաթը, մարոնիական որոշ ուժեր և այլն:

Սպանության հետևանքով երկրում ստեղծված լարվածությունն էլ ավելի ուժեղացավ, քանի որ հենց այդ օրերին լիբանանյան կառավարությունը՝ Ֆուադ Սինիորայի գլխավորությամբ, քննարկեց և հավանության արժանացրեց նոյեմբերի 21-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում (ԱԽ) ընդունված որոշումը: Այն նախատեսում էր Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորում: ՄԱԿ-ի ԱԽ-ում ներկայացված 15 երկրները միաձայն քվեարկեցին դատարանի ստեղծման օգտին: Դատարանի կազմավորման ողջ պատասխանատվությունը դրվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի և լիբանանյան կառավարության վրա: Որոշման համաձայն՝ դատարանի ֆինանսավորման համար անհրաժեշտ գումարի մի մասը տրամադրվելու էր ՄԱԿ-ի բյուջեից, իսկ մյուս մասը ներդնելու էր լիբանանյան կառավարությունը: Դատարանի անաչառության պահպանման նպատակով այն կազմավորվելու էր Լիբանանից դուրս և կազմված էր լինելու 3 դատավորից՝ 2-ն օտարազգի և 1-ը՝ լիբանանցի: Նախատեսվում էր ստեղծել նաև վերաքննիչ պալատ, որը կազմված էր լինելու 2 լիբանանցի և 3 օտարազգի դատավորներից:

Թեև լիբանանյան կառավարությունն արդեն իսկ հավանություն էր տվել միջազգային դատարան ստեղծելու որոշմանը, սակայն նախագահ Էմիլ Լահուդը, որին իրենց աջակցությունը հայտնեցին ընդդիմադիր ճակատում համախմբված շիական Ամալ<sup>3</sup> և Հիզբալլահ<sup>4</sup> շարժումները, ինչպես նաև նրանց հետ սերտորեն համա-

<sup>3</sup> 1974 թ. շիական համայնքում Մուսա Ալ-Սադրի գլխավորությամբ կազմավորվեց Կեղեքվածների շարժում (արաբերեն՝ Հարաբաթ ալ-մահրումին) կազմակերպությունը, որի հիմքի վրա 1975 թ. գարնանը ձևավորվեցին կիսառազմական ջոկատներ՝ Լիբանանյան դիմադրության գումարտակներ (արաբերեն՝ Աֆուաջ ալ-մուկատամա ալ-լուբնանիյա): Կերջիններս հետագայում ընդլայնվեցին և կոչվեցին Ամալ: Այն շատ կարճ ժամանակաշրջանում դարձավ շիա համայնքի նոր քաղաքականության ձևավորողն ու իրականացնողը: Ամալի նախաձեռնությամբ Լիբանանի հարավային շրջաններում ձևավորվեցին նաև մի քանի շիական ռազմականացված ճամբարներ: Շիական համայնքում տարածայնությունների առկայության պայմաններում 1982 թ. ամռանն Ամալի հրամանատարական խորհրդի անդամ Հուսեյն Մուսավիին լքեց շարժումը՝ ձևավորելով իր զինված խմբավորումը, որն անվանվեց Իսլամական Ամալ: Մուսավիի համախոհների թիվը սահմանափակ էր, սակայն այն աջակցություն էր ստանում Իրանից, որտեղից Իսլամական հեղափոխության պաշտպանների էլիտար ստորաբաժանումների 3000 մարտիկներ Սիրիայի տարածքով անցել էին Լիբանան և ակտիվ օժանդակություն էին ցույց տալիս Մուսավիին:

<sup>4</sup> 1982 թ. ամռանը Բեքաայի հովտում կազմավորվեց մեկ այլ առավել ծայրահեղական շիական շարժում, որն ինչպես և Իսլամական Ամալը, խիստ քննադատության էր ենթարկում Ամալ չափավոր քաղաքականությունը: Այս շարժումն անվանվեց Հիզբալլահ (արաբերեն՝ Ալլահի կուսակցություն), որը գլխավորեց խարիզմատիկ շիա ղեկավար շեյխ Մուհամմադ Հուսեյն Ֆադլալահը: Նրա-

գործակցող մարոնի գեներալ Միշել Աունի<sup>5</sup> ղեկավարած Ազատ հայրենասիրական շարժումը, հայտարարեց, որ կառավարության որոշումը ոչ սահմանադրական էր, քանի որ այն ընդունվել էր այն բանից հետո, երբ հրաժարական էր տվել 6 նախարար: Հրաժարական տված նախարարներից 5-ը շիական Հիզբալլահ շարժման անդամ էր, իսկ 1-ը՝ քրիստոնյա, ով ներկայացնում էր Միշել Աունի ղեկավարած Ազատ հայրենասիրական շարժումը:

Նախագահն ու ընդդիմադիր ճակատի ղեկավարները պահանջեցին գործող կառավարության հրաժարականն ու ազգային միասնության կառավարության ձևավորումը:

2006 թ. դեկտեմբերին Լիբանանում կատարված հարցումների համաձայն՝ շիաների 95%, իսկ լիբանանյան քրիստոնյաների 50%-ը պաշտպանում էր Ֆուադ Սինիորայի կառավարության հրաժարականի պահանջը: Սուննիների 87%-ը, քրիստոնյաների 50%-ը և դրուզների մեծ մասն իրենց աջակցությունն էին հայտնում կառավարությանը<sup>6</sup>: Այս տվյալները լավագույնս ի ցույց էին դնում լիբանանյան հասարակության երկփեղկվածությունը:

ՄԱԿ-ի ԱԽ-ի անդամները ևս մտահոգված էին լիբանանյան կառավարության վերոնշյալ որոշման օրինականությամբ: Այս առիթով կասկածներ հայտնեցին մասնավորապես Կատարն ու Ռուսաստանը<sup>7</sup>: Սակայն ԱԽ-ում ի հայտ եկած տարաձայնությունները հնարավոր եղավ հարթել և լիբանանյան կառավարությանը հնարավորություն տրվեց ինքնուրույն լուծելու իր ներքաղաքական խնդիրները:

---

նում ներգրավվեցին ինչպես Ամալի առավել ծայրահեղական թևը՝ Հուսեյն Մուսավիի գլխավորությամբ, այնպես էլ տարբեր շիական կրոնական և ռազմական միավորումների որոշ անդամներ, որոնք սերտ կապեր ունեին Իրանի ղեկավարության հետ:

<sup>5</sup> Հետաքրքրական է, որ դեռևս 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին՝ քաղաքացիական պատերազմի վերջին փուլում, Լիբանանում սեփական ազդեցության ուժեղացման և մարոնիների շրջանում մենիշխանության հաստատման նպատակով Միշել Աունը երկրի տարածքից սիրիական զորքերի դուրսբերման կարգախոսով նախաձեռնեց «Սիրիայից ազատագրման» պատերազմ: Սակայն պարտություն կրելուց հետո ստիպված եղավ 1990 թ. հոկտեմբերին լքել Լիբանանի տարածքը և հաստատվել Ֆրանսիայում: Աունը հնարավորություն ստացավ վերադառնալ Լիբանան միայն 2005 թ. մայիսի 7-ին՝ նույն թվականի փետրվարի 14-ին Ռաֆիկ Հարիրիի սպանությանը հետևած զարգացումների արդյունքում սիրիական զորքերի՝ Լիբանանից դուրսբերումից հետո:

<sup>6</sup> Михаил Зыгарь, “Ливанский кризис взял курс на Москву: Фуад Синьора пригласит Россию в посредники”, Коммерсант, М., 14.12.2006.

<sup>7</sup> Питр Еж, Сирия попадает под трибунал. Совбез ООН создал суд по политическим убийствам в Ливане, Коммерсант, М., 13.11.2006.

ՄԱԿ-ի ԱԲ-ի Լիբանանում քաղաքական սպանությունների գործով միջազգային դատարան ստեղծելու որոշումը պետք է ստանա նաև լիբանանյան խորհրդարանի, ապա նաև երկրի նախագահի հավանությունը: Սակայն այդ հարցով խորհրդարանական նիստի գումարումը հետաձգվում է մի շարք պատճառներով: Շիական Ամալ շարժման ղեկավար և խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրին, աջակցություն ստանալով ինչպես լիբանանյան ընդդիմությունից, այնպես էլ տարածաշրջանային այնպիսի ուժերից ինչպիսիք էին Սիրիան և Իրանը, հրաժարվում էր այդ հարցի քննարկման առնչությամբ խորհրդարանի նիստ գումարելուց:

Սաադ Հարիրիի ղեկավարած հակասիրիական իշխող դաշինքի համար դատարանի կազմավորման հարցը սկզբունքային էր, իսկ ընդդիմադիր սիրիամետ և իրանամետ դաշինքում համագործակցող ուժերի համար՝ անընդունելի<sup>8</sup>: Դա էր պատճառը, որ վերոնշյալ ուժերը փորձում էին երկրի խորհրդարանում, ուր հակասիրիական դաշինքն ուներ մեծամասնություն, հնարավորինս հետաձգել դատարանի կազմավորման հետ առնչվող ցանկացած հարցի քննարկումը: Հարիրիի սպանության հետաքննության հարցը երկրում 2006 թ. վերջին սկսված ներքաղաքական ճգնաժամի (որ սպառնում էր վերաճել զինված հակամարտության) սրման հիմնական պատճառներից էր:

Լիբանանում քաղաքական ճգնաժամն էլ ավելի խորացավ, երբ ի պատասխան Ֆուադ Սինիորայի այն հայտարարությանը, որ կառավարությունը չէր պատրաստվում հրաժարական տալ, Հիզբալլահ շարժման նախաձեռնությամբ երկրի մայրաքաղաքի գլխավոր հրապարակում կազմակերպվեցին բազմահազարանոց ցույցեր և քաղաքացիական անհնազանդության այլ գործողություններ:

2006 թ. հուլիս-օգոստոս ամիսների լիբանանախորայելյան վերջին պատերազմը գլխավորապես կանխորոշեց լիբանանյան իշխանությունների շրջանում առկա հակասությունները: Իսրայելի նկատմամբ «հաղթանակ» տանելուց հետո Հիզբալլահ շարժման ղեկավար Հասան Նասրալլահը 2006 թ. նոյեմբերից ձեռնամուխ եղավ 2005 թ. «մայրիների հեղափոխության» արդյունքում երկրի ներքաղաքական կյանքում որոշակիորեն թուլացած իր դիրքերի ամրապնդմանը:

<sup>8</sup> Ռաֆիկ Հարիրիի սպանության գործը վարող միջազգային հատաքննչական խումբը քննության ընթացքում մեղադրանքներ էր ներկայացրել ինչպես լիբանանցի սիրիամետ, այնպես էլ սիրիացի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ, այդ թվում նաև Սիրիայի նախագահ Բաշար Ասադի մտերիմ շրջապատից:

Նա պահանջեց կառավարության նախարարական աթոռների 1/3-ը՝ հետևաբար նաև գործադիր մարմնի որոշումների վրա վետո դնելու իրավունք, ինչը սակայն մերժվեց: Ստեղծված իրավիճակում Հիզբալ-լահը փորձեց դիմել վերջին շրջանում տարբեր վարչակարգերի (այդ թվում՝ 2005 թ. նաև Լիբանանում) փոփոխման համար կիրառվող տարբերակին՝ խաղաղ հեղափոխության, որ ստացավ «մայրիների հակահեղափոխություն» անվանումը:

Լիբանանում իրավիճակի սրումն ինչպես միշտ այդ երկրի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի նկատմամբ համաշխարհային տերությունների և նրանց տարածաշրջանային գործընկերների միջև պայքարի սրման հետևանք էր: Հատկանշական է, որ այս ընթացքում ԱՄՆ-ում ավելի հաճախակի էին խոսում Մերձավոր Արևելքում կայունության հաստատման նպատակով Սիրիայի և Իրանի հետ ուղղակի շփումներ հաստատելու մասին: Այդ գաղափարի հիմնական ջատագովներն ԱՄՆ-ի Կոնգրեսի ընտրություններում հաղթանակ տարած դեմոկրատականներն էին: Եթե Վաշինգտոնի և Թեհրանի միջև մերձեցման հեռանկարները դեռևս տեսանելի չէին, ապա Դամասկոսն այդ ուղղությամբ որոշակի նշաններ սկսեց ցուցադրել արդեն 2006 թ. վերջին<sup>9</sup>:

Սիրիայի և ԱՄՆ-ի դիրքորոշումների հնարավոր մերձեցումն այդ փուլում որպես հետևանք կարող էր հանգեցնել Իրանի դիրքերի թուլացմանը: Վերջինս կարող էր զրկվել տարածաշրջանում իր հիմնական դաշնակցից: Այս տեսանկյունից Լիբանանում իրավիճակի սրումը որոշակիորեն բխում էր նաև Իրանի շահերից: Լիբանանում հնարավոր քաղաքացիական պատերազմի բռնկման պարագայում Վաշինգտոնի և Դամասկոսի միջև որևէ հնարավոր մերձեցում կրկին հետաձգվում էր անորոշ ժամանակով:

Լիբանանյան ճգնաժամի կարգավորման նպատակով նախ դեկտեմբերի 2-ին այդ երկիր ժամանեցին Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի արտաքին գործերի նախարարները<sup>10</sup>:

Նշենք, որ եվրոպական դիվանագետների հետ ճգնաժամի հաղթահարմանն ուղղված քայլեր ձեռնարկեց նաև Սաուդյան Արաբիան: Այն նպաստեց ընդդիմադիր ուժերի ցույցերի դադարեցմանն ու քաղաքական հակասությունները փողոցից բանակ-

<sup>9</sup> Այդ տեսանկյունից հետաքրքրական էր 2006 թ. նոյեմբերի վերջին Սիրիայի արտաքին գործերի նախարար Վալիդ Մուալլիմի՝ Բաղդադ այցելությունը, որի ընթացքում Դամասկոսն առաջին անգամ ճանաչեց Իրաքի հետսադրամական կառավարությունը:

<sup>10</sup> Александр Реутов, Ливанский кризис вышел на улицу. “Хезболла” заручилась поддержкой сотен тысяч митингующих, Коммерсант, М., 04.12.2006.

ցությունների սեղան տեղափոխմանը: Դեկտեմբերի 3-ին ճգնաժամի կարգավորման գործընթացին միացավ նաև Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) քարտուղար Ամր Մուսան<sup>11</sup>:

Վերջին անգամ Արևմուտքի և Արևելքի ջանքերի նման համատեղում տեղի էր ունեցել 1990 թ. հակասադդամական դաշինքի ձևավորման ընթացքում: Թերևս այս անգամ համագործակցության հիմնական դրդապատճառը համեմատաբար չափավոր և ազատական Լիբանանում շիական արմատականության ակտիվացման սպառնալիքն էր:

Բավական երկար ընդմիջումից հետո՝ 2006 թ. դեկտեմբերի կեսերին, Ռուսաստանը ևս ստացավ Լիբանանում և ընդհանրապես Մերձավոր Արևելքում միջնորդական առաքելությամբ հանդես գալու իրական հնարավորություն: Դեկտեմբերի 14-ին Լիբանանի վարչապետ Ֆուադ Սինիորան ժամանեց Ռուսաստան<sup>12</sup>: Արևմտամետ կողմնորոշմամբ աչքի ընկնող լիբանանյան վարչապետի Մոսկվա այցելությունը խիստ հետաքրքրական էր: Լիբանանյան իշխանությունները երկրում քաղաքական ճգնաժամի կարգավորման նպատակով փորձեցին օգտագործել նաև Մոսկվայի և Դամասկոսի միջև վաղուց հաստատված գործընկերային հարաբերությունները, մանավանդ որ Սինիորայի այցին հաջորդեց դեկտեմբերի 19-ին Սիրիայի նախագահ Բաշար Ասադի Մոսկվա եռօրյա այցելությունը:

Բեյրութում վստահ էին, որ զգալի չափերի հասնող դժգոհության ալիքը կազմակերպվում և ուղղորդվում էր ինչպես Իրանից, այնպես էլ Սիրիայից: Պատահական չէր, որ մայրաքաղաքի գլխավոր հրապարակում հավաքված ցուցարարների շրջանում զգալի թիվ էին կազմում սիրիական հատուկ ծառայությունների աջակցությամբ կազմավորված խմբավորումները<sup>13</sup>:

Մոսկվա այցելության ընթացքում Ֆուադ Սինիորան առաջարկեց հետևյալ փոխզիջումային տարբերակը. Լիբանանի հակասիրիական կառավարությունը հրաժարվում էր Դամասկոսի հասցեին մեղադրանքներ հնչեցնելուց, իսկ Սիրիան՝ Սինիորայի կառավարությունը տապալելու փորձեր հրահրելուց:

<sup>11</sup> Nada Bakri, Hizballah Smiles on Arab League Plan, But Cabinet Stays Quiet, Daily Star, Beirut, 12.12.2006.

<sup>12</sup> Сергей Строкань, С кратким дружеским Ливаном; прибыл в Москву президент Сирии Башар Асад, М., 19.12.2006.

<sup>13</sup> Rym Ghazal, Opposition Promises Series of Protests at “Major Sites ” across Lebanon, Daily Star, Beirut, 10.12.2006.

2006 թ. վերջին Մերձավոր Արևելքում ստեղծված իրավիճակը Ռուսաստանը դիտում էր որպես միջազգային ասպարեզում սեփական նշանակությունը կարևորելու հարմար հնարավորություն:

Միջազգային հանրության ջանքերի համատեղմամբ հնարավոր եղավ 2006 թ. դեկտեմբերին նպաստել Լիբանանում իրավիճակի ժամանակավոր հանդարտեցմանը: Սակայն ճգնաժամի առաջացման պատճառներն ու դրանց արդյունքում ի հայտ եկած խնդիրները մնում էին դեռևս չլուծված: Երկրի ընդդիմադիր ուժերն իրենց հերթին սպառնում էին սկսել ժամանակավորապես դադարեցված քաղաքացիական անհնազանդության միջոցառումների 2-րդ փուլը, որ ներառելու էր համընդհանուր գործադուլ: Այն անդառնալի հետևանքներ կարող էր ունենալ երկրի առանց այդ էլ զգալի վնասներ կրած տնտեսության համար:

Հունվարի 23-ի առավոտյան լիբանանյան ընդդիմությունը երկրում հայտարարեց համընդհանուր գործադուլ: Հիզբալլահի կոչով Բեյրութի և երկրի այլ քաղաքների փողոցներ դուրս եկան տասնյակ հազարավոր մարդիկ: Պահանջելով Ֆուադ Սինիորայի «արևմտամետ կառավարության» հրաժարականը՝ նրանք այրվող անվադողերով փակեցին երկրի գլխավոր մայրուղիները: Կառավարամետ և ընդդիմադիր ճամբարների կողմնակիցների միջև տեղի ունեցան նաև մի քանի փողոցային բախումներ, որոնց ընթացքում զոհվեց 3 մարդ<sup>14</sup>: Արդեն հունվարի 24-ին լիբանանյան ընդդիմությունը հայտարարեց համընդհանուր գործադուլի դադարեցման մասին, որն անդամալուծել էր ողջ երկիրը:

Լիբանանում ներքաղաքական իրավիճակի սրման հերթական դրսևորում էր հունվարի 25-ին Բեյրութի արաբական համալսարանի սրճարաններից մեկում բախումների բռնկումը: Ապագա և Հիզբալլահ շարժումների կողմնակիցների միջև վիճաբանությունը վերաճեց շիա-սուննի բախումների: Արդյունքում կար 4 սպանված և 158 վիրավոր<sup>15</sup>:

Վերոնշյալ բախումների առնչությամբ կառավարական դաշինքի ղեկավարներից դրուզ Վալիդ Ջունբլաթը նշեց, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը պատասխանատու էր Լիբանանում ընթացող զարգացումների համար: Նա շեշտեց, որ խնդիրը Լիբանանի ներսում չէր, այլ Սիրիայում: Վերջինս պետք է զերծ

<sup>14</sup> Rym Ghazal, Siniora Cabinet Girds for Rough Ride as Opposition Launches General Strike, Daily Star, Beirut, 23.01.2007.

<sup>15</sup> Iman Azzi, Rival Mobs Plunge Beirut into Anarchy: Army Imposes Curfew End Mayhem between Pro-and-Anti-Government Rioters, Daily Star, Beirut, 26.01.2007.



մնար լիբանանյան քաղաքական ուժերի միջև հակասությունների սրման հրահրումից և հիմնովին հրաժարվելը Լիբանանից<sup>16</sup>:

Հունվարի վերջին իրավիճակի անկայունացման հետևանքով կրկին ակտիվացան լիբանանյան ճգնաժամի կարգավորմանն ուղղված արտաքին և ներքին նախաձեռնությունները: Տեղական և միջազգային շատ քաղաքական գործիչներ համատեղում էին իրենց ջանքերը՝ ճգնաժամից դուրս գալու ուղղությամբ:

Հունվարի 29-ին Լիբանան այցելեց Բելգիայի խորհրդարանի փոխխոսնակը, ով հանդիպեց ինչպես կառավարամետ, այնպես էլ ընդդիմադիր ուժերի ղեկավարների հետ և կոչ արեց լիբանանյան հակամարտող ճակատների ղեկավարներին գնալու զիջումների և ուղի հարթելու դեպի ներքաղաքական ճգնաժամի լուծում<sup>17</sup>:

Թեև Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահը բազմիցս հայտարարել էր, որ «Իրանը փորձում է տարածաշրջանում մուսուլմաններին համախմբել շիայականության հովանու ներքո<sup>18</sup>», սակայն Լիբանանում իրավիճակի սրումը և քաղաքացիական պատերազմի վերսկսման վտանգը ստիպեց երկու երկրներին, տվյալ փուլում իրենց շահերից ելնելով, համատեղել ջանքերը և նպաստել երկրում կայունության վերահաստատմանը:

Իրանը՝ Հիզբալլահի հիմնական հովանավորը, և նրա տարածաշրջանային մրցակից Սաուդյան Արաբիան, որն աջակցում էր Ֆուադ Սինիորայի կառավարությանը, վարում էին բանակցություններ, որոնց նպատակը Լիբանանում հակամարտող կողմերի միջև առկա հակասությունների լուծումն էր:

Հունվարի 25-ին, երբ Բեյրութում ներքաղաքական իրավիճակը բավական լարված էր, Փարիզում՝ Լիբանանին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով գումարված *Փարիզ 3* միջազգային համաժողովի ընթացքում Բեյրութին խոստացվեց 7,6 միլիարդ ԱՄՆ դոլարի օգնություն<sup>19</sup>: Սակայն ֆինանսական աջակցությունը պայմանավորված էր երկրում կայունության հաստատմամբ և բարեփոխումների իրականացմամբ, որի պատասխանատվությունը դրվեց Ֆուադ Սինիորայի կառավարության վրա:

<sup>16</sup> Mohammad Zaatari, Army Refers Files of Riot Participants to Judiciary, Daily Star, Beirut, 27.01.2007.

<sup>17</sup> Hani M. Bathish & Maher Zeineddine, Diplomats Renew Effort to Calm Beirut, Daily Star, Beirut, 30.01.2007.

<sup>18</sup> Tehran, Riyadh Scramble to Forge Lebanon Deal, Daily Star, Tehran, 26.01.2007.

<sup>19</sup> Rym Ghazal, Siniors Picks up \$ 7.6 Billion at Paris III, Daily Star, Beirut, 26.01.2007.

Ֆինանսական օգնությունն ուղղվելու էր ոչ միայն Լիբանանի ընդհանուր պարտքի մարմանը, այլև նպաստելու էր երկրի փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավմանը: Համաժողովին մասնակցում էր 40 երկիր և մի շարք կազմակերպություններ:

Փարիզում խոստացված 7,6 միլիարդ ԱՄՆ դոլարից մոտ 2 միլիարդը տրամադրվելու էր դրամաշնորհների և վարկերի տեսքով, որոնք ուղղվելու էին Լիբանանի 40,4 միլիարդ ընդհանուր պարտքի (2006 թ. վերջի տվյալների համաձայն՝ այն կազմում էր Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 188 տոկոսը) մարմանը և կառուցվածքային բերափոխումների իրականացմանը<sup>20</sup>: Եվրոպական ներդրումային բանկը (European Investment Bank) տրամադրելու էր 3 միլիարդ ԱՄՆ դոլար, որից 520 մլն-ը նախատեսված էր երկրի էներգետիկ ոլորտում «առաջնահերթ ներդրումների» համար: 700 մլն դոլար խոստացել էր Արաբական դրամական հիմնադրամը (Arab Monetary Foundation): Որոշ դոնորներ ֆինանսավորելու էին մի շարք սոցիալական ծրագրեր, ինչպես նաև աջակցություն էին ցույց տալու ոչ կառավարական (NGO) կազմակերպությունների ծրագրերին: Օրինակ՝ Շվեդիան խոստացավ 5,85 մլն դոլար տրամադրել Լիբանանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի իրականացմանը<sup>21</sup>:

Միջազգային ֆինանսական ընկերությունը (International Finance Corporation) (IFC) Լիբանանին խոստացավ տրամադրել 275 մլն դոլար արժողությամբ վարկեր, որոնցից 200 մլն-ը՝ լիբանանյան ընկերություններին<sup>22</sup>:

Եվրոպական բանկի 78 մլն առաջին փոխանցումը նախատեսվում էր երկարաժամկետ վարկերի տեսքով տրամադրել այն միջին ձեռնարկություններին, որոնք նախատեսում էին ներդրումներ իրականացնել երկրի արդյունաբերության, գյուղատնտեսական մթերքների արտադրության, առողջապահության և կրթության ոլորտներում:

Փետրվարի 7-ի լույս 8-ի գիշերը լիբանանախորայելյան սահմանի վրա՝ իսրայելյան Ավավիմ և լիբանանյան Մարուն Ալ-Ռաշ գյուղերի շրջանում, տեղի ունեցավ փոխհրաձգություն: Այն առաջին լուրջ միջադեպն էր 2006 թ. օգոստոսի 14-ից՝ լիբանանախ-

<sup>20</sup> Michael Bluhm, Siniora Hopes Paris III Will Help Slay Debt Dragon, Daily Star, Beirut, 23.01.2007.

<sup>21</sup> Michael Bluhm, Paris III Includes Something for Private Sector, Too, Daily Star, Beirut, 30.01.2007.

<sup>22</sup> Նույն տեղում:

րայելյան վերջին պատերազմի ավարտից հետո<sup>23</sup>: Այն լուրջ մտահոգություն առաջացրեց հատկապես վերոնշյալ պատերազմից հետո Հարավային Լիբանանում տեղակայված ՄԱԿ-ի ժամանակավոր զինված ուժերի (UNIFIL) հրամանատարության շրջանում: Ականազերծման աշխատանքները, որ սահմանի շրջանում իրականացնում էին իսրայելցի զինվորները, լիբանանյան կողմն ընկալեց որպես ներխուժման փորձ և հրագենային կրակ բացեց, որին հետևեց Իսրայելի պատասխան հրետանային հարվածները: Արդյունքում վիրավորվեց 4 լիբանանցի զինծառայող<sup>24</sup>:

Իսրայելցիները նախօրոք տեղեկացրել էին իրենց ծրագրերի մասին ինչպես Հարավային Լիբանանում UNIFIL-ի հրամանատարությանն, այնպես էլ լիբանանյան կողմին: Դեռևս դրանից երկու օր առաջ իսրայելցիները նմանատիպ պայմաններում հայտնաբերել և ոչնչացրել էին 4 հզոր ականներ, իսկ երկու շաբաթ առաջ վերջիններս պայթեցրել էին Հիզբալլահի մարտիկներին պատկանող 2 ստորգետնյա պահեստարան: Բեյրութը որևէ առարկություն չէր ներկայացրել: Սակայն այդ անգամ լիբանանյան կողմը Իսրայելին մեղադրեց սահմանը խախտելու մեջ, և գործողությունն ընկալվեց որպես ագրեսիա:

Փետրվար 8-ին այն շրջանում, որտեղ գրանցվել էր միջադեպը տեղակայվեցին ՄԱԿ-ի խաղաղապահների լրացուցիչ ուժեր՝ հիմնականում իտալացի և ֆրանսիացի զինվորներ: UNIFIL-ի հրամանատարությունը կողմերին հորդորեց դադարեցնել ցանկացած թշնամական գործողություն և ապագայում թույլ չտալ միջադեպի կրկնություն<sup>25</sup>:

<sup>23</sup> Александр Реутов, Ливан отразил вторжение бульдозера, Коммерсант, М., 09.02.2007.

<sup>24</sup> Այն բանից հետո, երբ 2000 թ. Իսրայելն ամբողջությամբ իր զորքերը դուրս բերեց Հարավային Լիբանանից, Իսրայելն իր սահմանային շրջաններում կառուցեց պատնեշներ: Ձինվորականների կարծիքով դրանք պետք է կանխեին Հիզբալլահ շարժման մարտիկների ներթափանցումը հրեական պետության տարածք: Որոշ շրջաններում, ռազմավարական տեսանկյունից ելնելով, պատնեշները մի քանի տասնյակ մետրով խորանում են Իսրայելի տարածքում: Այդպիսի շրջաններից մեկում էլ, որ գտնվում է պատնեշներից դուրս, բայց դեռևս Իսրայելի տարածքում, զինվորականները հայտնաբերել էին մի քանի հզոր ականներ, որ տեղադրել էին Հիզբալլահի մարտիկները:

<sup>25</sup> Իսրայելը պնդում էր, որ Հիզբալլահի մարտիկները կրկին ակտիվացրել էին իրենց գործողությունները լիբանանաիսրայելյան սահմանի շրջանում: Մասնավորապես նշվում էր, որ Իսրայելի տարածքում շարունակվում էին տեղադրվել հզոր ականներ, որոնք կարող էին ոչնչացնել նաև տանկեր: Հիզբալլահն իր հերթին հայտարարում էր, որ վերջին շրջանում իսրայելցիների հայտնաբերած ականները տեղադրվել էին մինչ 2006 թ. պատերազմը:

Ակնհայտ էր, որ լիբանանյան և տարածաշրջանային որոշ ուժեր շահագրգռված էին լիբանանախորայելյան սահմանի շրջանում իրավիճակի կրկին անկայունացմամբ և փորձում էին իրավիճակը լարել նաև այդ ճանապարհով:

2007 թ. փետրվարի 13-ին՝ Ռաֆիկ Հարիրիի սպանության երկրորդ տարելիցի նախօրեին, Լիբանանում պայթյուններ իրականացվեցին 2 մարդատար ավտոբուսներում: Վարչապետ Ֆուադ Սինիորան հայտարարեց, որ պայթյունների ետևում կանգնած էին այն ուժերը, որոնք 2005 թ. իրականացրին նախկին վարչապետի սպանությունը: Ահաբեկչության արդյունքում սպանվեց 3 և վիրավորվեց 23 մարդ<sup>26</sup>:

Թեև վերջին շրջանում Լիբանանում ավելացել էր քաղաքական սպանությունների թիվը (ինչն ընդհանրապես բնորոշ էր Լիբանանին), սակայն այս ընթացքում առաջին անգամ էր, որ հարձակման ուղղակի թիրախ դարձան քաղաքացիները<sup>27</sup>:

«Մարտի 14-ի ուժերը» հերթական անգամ Սիրիային մեղադրեցին ահաբեկչության կազմակերպման մեջ, որի նպատակն էր խոչընդոտել փետրվարի 14-ին Հարիրիի մահվան երկուամյակի կապակցությամբ կազմակերպվող սգո միջոցառումներին լիբանանցիների մասնակցությանը:

Խորհրդարանի պատգամավոր Ֆարես Սուեյդը Լիբանանյան փաղանգներ կուսակցության գրասենյակում հանդիպումից հետո ԱՊԼ-ին, ՄԱԿ-ին, արաբական և միջազգային հանրությանը մեղադրեց Լիբանանում ընթացող զարգացումների նկատմամբ անտարբերություն դրսևորելու մեջ և կոչ արեց պատժամիջոցների կիրառման ճանապարհով երկրում վերջ դնելու սիրիական ցանկացած ազդեցությանը<sup>28</sup>:

Ապագա շարժման ղեկավար Սաադ Հարիրին հայտարարեց, որ փետրվարի 13-ի ահաբեկչությունը փաստում էր այն իրողությունը, որ քաղաքական սպանությունների գործով միջազգային դատարանի ստեղծումը Լիբանանի համար անհրաժեշտություն էր, այլ ոչ թե քաղաքական պահանջ:

Մարտի 28-ին Ռիադում (Սաուդյան Արաբիա) կայացած ԱՊԼ-ի հերթական գագաթնաժողովից առաջ միջազգային հան-

<sup>26</sup> Rym Ghazal, Attack Spurs Fears of Lethal Mew Focus on Private Citizens, Daily Star, Beirut, 14.02.2007.

<sup>27</sup> 1975 թ. ապրիլին պաղեստինցիներով լեցուն ավտոբուսի նկատմամբ իրականացված ահաբեկչությունը պատմագրության մեջ ընդունված է համարել շուրջ 15 տարի տևած 2-րդ քաղաքացիական պատերազմի սկիզբը:

<sup>28</sup> Mira Borji, Siniora Vows “Justice”, Links Perpetrators to Hariri Killing, Daily Star, Beirut, 14.02.2007.

րությունն ակտիվացրեց Մերձավոր Արևելք իր դիվանագիտական այցելությունները: Մարտի 14–15–ին տարածաշրջան այցելեց Եվրոպական Միության (ԵՄ) արտաքին գործերի նախարար Խավիեր Սոլանան: Նա իր աջակցությունը հայտնեց Սաուդյան Արաբիայի դիվանագիտական ջանքերին, որոնք ուղղված էին լիբանանյան ճգնաժամի քաղաքական կարգավորմանը<sup>29</sup>:

Մարտի 14–ին Խավիեր Սոլանան հանդիպեց Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հետ և կոչ արեց Սիրիային օգտագործելու լիբանանյան հակամարտող կողմերի հետ իր կապերը և նպաստելու Լիբանանում խաղաղության և անվտանգության պահպանմանը: Փոխարենը Սոլանոն խոստացավ, որ ԵՄ–ն կպաշտպաներ Սիրիայի դեռևս 1967 թ. արաբաիսրայելյան պատերազմի ընթացքում Իսրայելի գրաված Գոլանի բարձունքները հետ վերադարձնելու ջանքերը: ԵՄ արտաքին գործերի նախարարը հորդորեց Ասադին նպաստել նաև Սիրիայի տարածքից Լիբանան ապօրինի զենքի ներմուծման դադարեցմանը<sup>30</sup>:

Մարտի 26–ին միաժամանակ տարածաշրջան այցելեցին ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար Բան Կի–Մունը և ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը: Երկուսն էլ հանդիպումներ ունեցան Իսրայելի վարչապետի, Պաղեստինյան ինքնավարության ղեկավարի և տարածաշրջանային այլ ղեկավարների հետ: ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարն այցելեց Հորդանան, ապա նաև Սաուդյան Արաբիա, որտեղ նա ելույթ ունեցավ ԱՊԼ հերթական գագաթնաժողովի բացման արարողության ընթացքում<sup>31</sup>:

Մարտի 28–ից 30–ը Ռիադում անցկացված ԱՊԼ–ի հերթական գագաթնաժողովի ընթացքում արաբական ղեկավարները որոշեցին առաջ քաշել պաղեստինաիսրայելյան հակամարտության կարգավորման սեփական նախաձեռնությունը: Նրանք ԱՄՆ–ին մեղադրեցին Իրաքի «անօրինական օկուպացման» մեջ, ինչպես նաև Լիբանանում, Սուդանում և Սոմալիում ճգնաժամերի պատասխանատվությունը դրեցին «արտաքին ուժերի» վրա:

Արաբական ղեկավարներն իրենց համախմբվածությունն առավել ընդգծելու նպատակով որոշեցին ավելի հաճախակի հանդիպել նոր ձևաչափով: Գումարվելու էին դռնփակ «խորհր-

<sup>29</sup> Solana Lends Support for Saudi Effort to End Impasse in Beirut. Rival Camps May Be Invited to Reconciliation Talks in Riyadh, Daily Star, Beirut, 14.03.07.

<sup>30</sup> Solana Urges Assad to Work for Peace in Lebanon. EU Foreign Policy Chief Pledges Support for Damascus' Goal of Regaining Golan Heights, Daily Star, Beirut, 15.03.07.

<sup>31</sup> Габриэль Вольфсон, ООН и США взяли за Ближний Восток, Независимая газета, М., 26.03.07.

դատվական գազաթնաժողովներ», որոնցում քննարկվելու էին առկա սուր խնդիրները:

Ռիադում անցկացված գազաթնաժողովի շրջանակներում բանակցություններ տեղի ունեցան Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահի և Բաշար Ասադի միջև: Դրանք առաջինն էին 2006 թ. ամռանը Իսրայելի՝ Լիբանան նեխուժումից հետո: Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ Բաշարը համաձայնվեց ուղղակի երկխոսություն սկսել Ֆուադ Սինիորայի հետ, ով Սիրիային մեղադրում էր Լիբանանի գործերին միջամտելու մեջ: Այսպիսի երկխոսություն սկսելու անհրաժեշտության մասին Ռիադը նախապես համաձայնության էր եկել նաև Սինիորայի հետ<sup>32</sup>:

Ռիադի համաժողովից հետո՝ ապրիլի 2-ից 3-ը, տարածաշրջան այցելեցին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն ու ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Պելոսին: ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի տարածաշրջան այցելությունից հետո վերջին երկուսի այցերը Մերձավոր Արևելքում «կանացի դիվանագիտության» շրջանի շարունակությունն էին: Վերջիններս հանդիպումներ ունեցան Իսրայելում, Պաղեստինյան ինքնավարությունում, Հորդանանում և Լիբանանում: Իսրայելից Լիբանան մեկնելուց առաջ Պելոսին հանդիպեց 2006 թ. Հիզբալլահ շարժման մարտիկների գերի վերցրած իսրայելցի զինվորների ընտանիքների հետ:

Ինչպես ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի խոսնակը, այնպես էլ Գերմանիայի կանցլերը Լիբանանում հանդիպումներ ունեցան հակամարտող ճամբարների ղեկավարների հետ, որոնց ընթացքում կողմերին կոչ արվեց նպաստելու երկրում կայունության վերահաստատմանը<sup>33</sup>:

Տարածաշրջան այցելության շրջանակներում Նենսի Պելոսին այցելեց նաև Սիրիա և հանդիպում ունեցավ Բաշար Ասադի հետ: Թեև ԱՄՆ նախագահի մամլո խոսնակի պաշտոնակատար Դանա Պերինոն այս կապակցությամբ նշեց, որ Սպիտակ տունը չի ողջունում Պելոսիի այցելությունը Դամասկոս և, որ Սիրիան պաշտոնապես շարունակում է ներգրավված լինել «ահաբեկչությունը հովանավորող» պետությունների ցուցակում, «մեղադրվում է Լիբանանում Ֆուադ Սինիորայի կառավարությունը տապալելու փորձեր հրահրելու, ինչպես նաև Իրաք գորհայինների մուտքն

<sup>32</sup> Иван Грошков, Арабы обвинили США в незаконной оккупации Ирака, Независимая газета, М., 30.03.07.

<sup>33</sup> Иван Грошков, Дипломатическая двустолвка. Меркель и Пелоси мирят Израиль с арабами, Независимая газета, М., 03.04.07.

ապահովելու մեջ»<sup>34</sup>, սակայն ակնհայտ էր, որ այդ այցելությունը համաձայնեցված էր Սպիտակ տան ղեկավարության հետ: Պելոսին իր հերթին շեշտեց, որ կարևորում էր Սիրիայի հետ երկխոսության շարունակումը:

Դամասկոսում հանդիպման ընթացքում քննարկվեցին հարցեր, որոնք վերաբերում էին արաբախորայելյան հակամարտության կարգավորմանը, Մերձավոր Արևելքում Սիրիայի և ԱՄՆ–ի շահերի համատեղմանը, ինչպես նաև շոշափում էին Դամասկոսի և Թեհրանի միջև հարաբերությունները: Քննարկման առարկա էին նաև Լիբանանում առկա ճգնաժամը, Սիրիայի և Հիզբալլահ շարժման ու պաղեստինյան Համաս կազմակերպության հարաբերությունները (որոնք ներգրավված էին «ահաբեկչական կազմակերպությունների» ցուցակում), ինչպես նաև արաբական աշխարհի և Իսրայելի միջև բնականոն հարաբերությունների հաստատման հարցը<sup>35</sup>:

**ՌԱՖԻԿ ՀԱՐԻՐԻԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ՝  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ**

Դեռևս ապրիլի սկզբին Նաբիհ Բերրին իր հարցազրույցներից մեկում նշեց, որ Սինիորայի հետ ձեռք էր բերվել համաձայնություն՝ ազգային միասնության կառավարություն ձևավորելու հարցում: ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսայի և Սուդանի բանագնաց Մուստաֆա Իսմայիլի հետ խորհրդակցությունների ընթացքում որոշվել էր, որ ազգային միասնության կառավարությունն ունենալու էր հետևյալ ձևաչափը՝ 19+10+1, որից 19 նախարարական աթոռ տրամադրվելու էր իշխող մեծամասնությանը, իսկ 10 աթոռ՝ ընդդիմությանը: Կառավարության կազմում ներգրավվելու էր մեկ անկախ պատգամավոր, որին ընտրելու էր Սինիորան՝ Բերրիի ներկայացրած թեկնածուներից:

Նշենք, սակայն, որ չնայած վերոնշյալ համաձայնության ձեռքբերմանը՝ լիբանանյան ընդդիմությունը շարունակում էր ձախողել խորհրդարանական նիստի գումարումն ու Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորման հարցի քննարկումը պայմանավորում էր գործող կառավարության

<sup>34</sup> Артур Блинов, Женская дипломатия на Ближнем Востоке, Независимая газета, М., 02.04.07.

<sup>35</sup> Иван Грошков, Демократичная дипломатия, Независимая газета, М., 04.04.07.

հրաժարականով և ազգային միասնության նոր կառավարության ձևավորմամբ:

Ստեղծված պայմաններում «Մարտի 14-ի» ուժերի ղեկավարներն ապրիլի 2-ին հայտարարեցին, որ միջազգային դատարանի կազմավորման հարցի քննարկումը խորհրդարանում ձախողելու պայմաններում իրենք դիմել էին ՄԱԿ-ի ԱԽ և խնդրել, որ միջազգային դատարանը կազմավորվեր առանց լիբանանյան խորհրդարանում հարցի քննարկման՝ ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ հոդվածի համաձայն<sup>36</sup>:

Ազատ հայրենասիրական շարժման ղեկավար Միշել Աունն ապրիլի 4-ին ընդդիմության անունից նշեց, որ կառավարամետ պատգամավորների խնդրագիրը և ՄԱԿ-ի 7-րդ հոդվածի համաձայն միջազգային դատարանի կազմավորումը սպառնալիք էր՝ ուղղված Լիբանանի ազգային անվտանգությանն ու պետականությանը և չէր կարող նպաստել երկրում կայունության վերահաստատմանը<sup>37</sup>:

Լիբանանի կառավարամետ ուժերի ՄԱԿ-ի ԱԽ-ին ուղարկված խնդրագիրը կրկին ստիպեց լիբանանյան, տարածաշրջանային և միջազգային ուժերին խոսել ներլիբանանյան երկխոսության ակտիվացման անհրաժեշտության մասին:

Ապրիլի 12-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը լրագրողներին հայտնեց, որ ԱԽ-ում դատարանի կազմավորման հարցի քննարկումն առժամանակ հետաձգվել էր: Վերջինս հույս հայտնեց, որ լիբանանյան հակասությունները հնարավոր կլինեին հարթել և դատարանի կազմավորման հարցը լուծում կստանար Լիբանանի ներսում: Այդ փաստը կնպաստեր ազգային միասնականության վերահաստատմանը<sup>38</sup>:

Ապրիլի կեսին ներլիբանանյան հակասությունների կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերին միացավ նաև Ռուսաստանը: Ապրիլի 17-ին Լիբանան այցելեց Ռուսաստանի փոխարտգործնախարար Ալեքսանդր Սուլթանովը: Նա կարծիք հայտնեց, որ ՄԱԿ-ի 7-րդ հոդվածի համաձայն միջազգային դատարանի կազմավորումը կարող էր էլ ավելի անկայունացնել Լիբանանում

<sup>36</sup> Ըստ 7-րդ հոդվածի՝ ՄԱԿ-ի ԱԽ-ն միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքի պայմաններում կարող է միջամտել և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել՝ տնտեսական պատժամիջոցներից մինչև ռազմական միջամտություն: Nada Baki, March 14 Forces Expand Talk of Chapter 7 Option, Daily Star, Beirut, 03.04.07.

<sup>37</sup> Նույն տեղում:

<sup>38</sup> Hani M. Bathish, Ban Urges Lebanese to Resume Dialogue, Daily Star, Beirut, 13.04.07.



իրավիճակը: Վերջինս հորդորեց լիբանանցիներին այդ հարցում հասնել ներքին համաձայնության:

Այցի ավարտին Սուլթանովը նշեց, որ ներլիբանանյան խնդիրների կարգավորման հարցում (հաշվի առնելով Սիրիայի և լիբանանյան ընդդիմության կապերը) Ռուսաստանը կփորձեր օգտագործել նաև Դամասկոսի և Մոսկվայի միջև հարաբերությունները: Դրանք անպայմանորեն հաշվի կառնվեին նաև դատարանի կազմավորման վերաբերյալ որևէ միջազգային որոշման ընդունման պարագայում:

Դատարանի կազմավորման հարցում լիբանանյան հակադիր ճամբարների միջև հակասությունների կարգավորման նպատակով ապրիլի 17-ին Լիբանան այցելեց նաև ՄԱԿ-ում իրավական հարցերով գլխավոր խորհրդական Նիկոլաս Միչելը: Նա հանդիպումներ ունեցավ Նաբիի Բերրիի, Ֆուադ Սինիորայի և նախագահ Էմիլ Լահուդի հետ: Միչելը նշեց, որ դատարանի կազմավորման հարցով ՄԱԿ-ն ակնկալում էր նաև Սիրիայի աջակցությունը՝ հաշվի առնելով վերջինիս ազդեցությունը լիբանանյան ընդդիմության շրջանում:

Վերջինս շեշտեց, որ ՄԱԿ-ի ԱԽ-ի անդամները նախընտրում էին, որ դատարանի կազմավորման հարցը լուծում գտներ լիբանանյան մակարդակում և իր առաքելությունն էր այդ հարցում աջակցել լիբանանյան քաղաքական ուժերին: Նա իր այցելության հիմնական խնդիրը համարեց լիբանանյան համապատասխան մասնագետների՝ արդարադատության նախարար Շարլ Ռիզքի, դատավորներ Ռալֆ Ռիաչի և Շուքրի Սադրի հետ դատարանի կազմավորման վերաբերյալ լիբանանյան իշխանությունների և ՄԱԿ-ի միջև երկկողմ համաձայնագրի նախնական տեքստի կազմումը<sup>39</sup>:

Նշենք, որ դեռևս ապրիլի 16-ին Լիբանանի արդարադատության նախարար Շարլ Ռիզքն իր հեռուստատեսային ելույթում նշեց, որ եթե նույնիսկ դատարանը կազմավորվեր ՄԱԿ-ի 7-րդ հոդվածի համաձայն, լիբանանյան կառավարությունը պետք է երաշքիխներ ունենար, որ այն կգործեր ՄԱԿ-ի և լիբանանյան կառավարության միջև նախապես կնքված համաձայնագրի սկզբունքներին համապատասխան: Սակայն համաձայնագրի նախնական տեքստի հաստատման և նրա կնքման հարցում ևս լիբանանյան հակադիր ճամբարները չէին կարողանում համաձայնության հասնել: ՄԱԿ-ի 7-րդ հոդվածի համաձայն՝ նման դեպքում ԱԽ-ն կարող էր միջամտել և դատարանի կազմավորման որոշում կայացնել առանց լիբանան-

<sup>39</sup> Hani M. Bathish & Nafez Qawas, Sultanov, Michel Take Temperature on Hariri Tribunal. Envoys Hold Separate Rounds of Talks, Daily Star, Beirut, 18.04.07.

յան կառավարության հետ համաձայնագրի կնքման<sup>40</sup>, ինչն իհարկե, չէր բխում Լիբանանի շահերից և կարող էր հանգեցնել լիբանանյան ճգնաժամի միջազգայնացմանը:

Ապրիլի 18-ին Միչելը Լիբանանում իր վերջին հանդիպման ընթացքում նշեց, որ Հարիրիի սպանության հարցով դատարանը պետք է լիներ «անկախ և հիմնված լիներ միջազգային քրեական իրավունքի վրա»<sup>41</sup>:

Ապրիլի 20-ին կայացավ Լիբանանի կառավարության նիստ, որի ընթացքում քննարկումներ տեղի ունեցան նաև դատարանի կազմավորման հարցով ՄԱԿ-ի ԱԽ երկրորդ խնդրագիրն ուղարկելու հարցի շուրջ: Կառավարությունը, սակայն, որոշեց հետաձգել երկրորդ խնդրագրի ուղարկումն ու ակտիվացրեց ընդդիմության հետ բանակցությունները<sup>42</sup>:

Ապրիլի 20-ին իրանական “Etimad Mali” թերթին տված հարցազրույցում Սինիորան նշեց, որ լիբանանյան ընդդիմությունը, օգտվելով իր հովանավորների աջակցությունից, հրաժարվում էր բանակցել դատարանի կազմավարման հարցով և սպառնում էր, որ եթե դատարանի կազմավարումը տեղի ունենար ՄԱԿ-ի 7-րդ հոդվածի համաձայն, ապա կառավարամետ ուժերը պատասխանատու կլինեին երկրում նոր քաղաքացիական պատերազմի բռնկման համար: «Ընդդիմությունը նշում է, որ չի ցանկանում քաղաքականացնել դատարանը, սակայն, երբ այն դատարանի կազմավորման հարցի քննարկման համար նախապայման է առաջ քաշում կառավարության փոփոխությունը, ապա դա արդեն իսկ խնդրի քաղաքականացում է», — շեշտեց Սինիորան<sup>43</sup>:

Լիբանանյան ճգնաժամի կարգավորման, լիբանանասիրիական սահմանով անօրինական զենքի տեղափոխման և միջազգային դատարանի կազմավորման խնդիրները քննարկվեցին նաև ապրիլի 24-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի Դամասկոս այցելության շրջանակներում:

Բաշար Ասադի հետ հանդիպումից հետո «Ֆրանս պրես» գործակալությանը տված հարցազրույցում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը նշեց, որ Ասադին հորդորել էր օգտագործել «իր ազդեցությունը» և նպաստել լիբանանյան տարբեր քաղաքական ուժերի միջև դատարանի կազմավորման հարցում համաձայնության

<sup>40</sup> Hani M. Bathish, Russian, UN Envoys Will Try to Break Lebanese Logjam, Daily Star, Beirut, 17.04.07.

<sup>41</sup> Nada Bakri, Hizballah Says Chapter 7 Court “Will Make the Truth Lost”, Daily Star, Beirut, 19.04.07.

<sup>42</sup> Nafez Qawaz, Daily Star News, Daily Star, Beirut, 21.04.07.

<sup>43</sup> Hani M. Bathish, Michel Insists UN Not Seeking to “Impose” Tribunal on Lebanon, Daily Star, Beirut, 21.04.07.

հաստատմանը: Ասադն իր հերթին նշել էր, որ դատարանի կազմավորման որոշումը պետք է ընդունեն իրենք՝ լիբանանցիները, բայց Սիրիան պատրաստ է ամեն կերպ աջակցել համաձայնության հաստատմանը<sup>44</sup>:

Թեև միջազգային հանրությունն ամեն կերպ փորձում էր նպաստել Լիբանանի ներսում դատարանի կազմավորման որոշման կայացմանը, ինչպես նաև լիբանանյան քաղաքական ուժերի շրջանում համաձայնության հաստատմանը, սակայն այս խնդիրն ուսումնասիրվող շրջանում դեռևս շարունակում էր մնալ քաղաքական հիմնական շահարկումներից մեկը:

Ուսումնասիրվող շրջանում հայերը Լիբանանի խորհրդարանում ունեին 6 պատգամավորական տեղ, որից 4-ը (3-ն առաքելական և 1-ը կաթոլիկ) ընտրվում է Բեյրութի ընտրաշրջանից, իսկ մյուս երկուսը՝ Լեռնալիբանանի և Բեքաայի ընտրատարածքից:

Երկրի օրենսդիր մարմնում Բեյրութի ընտրաշրջանից խորհրդարան անցած բոլոր 4 հայ պատգամավորներն էլ ներգրավված էին Սաադ Հարիրիի գլխավորած դաշինքում: Նրանք էին Հակոբ Քասարջյանը (Ռամկավար ազատական կուսակցություն), Եղիա Ճերեճյանը (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն), անկախ պատգամավոր Ժան Օղասափյանը և հայ կաթոլիկ Սերժ Թուրսարգսյանը:

Լեռնալիբանանի և Բեքաայի հովտի շրջաններից երկրի խորհրդարան ընտրված երկու հայ պատգամավորները ներկայացնում էին ՀՅԴ-ն, որ սերտորեն համագործակցում էր ընդդիմադիր ճակատում համախմբված ուժերի, հատկապես Միշել Աունի ղեկավարած Ազատ հայրենասիրական շարժման հետ: Պատահական չէր, որ Լեռնալիբանանից ընտրված Հակոբ Բագրատունին ընդգրկված էր հենց Միշել Աունի գլխավորած ընտրացուցակում: Վերջին հայ պատգամավորը Ժորժ Քասարջին էր, ով թեև կուսակցական չէր, սակայն սերտորեն համագործակցում էր ՀՅԴ-ի հետ:

Թեև լիբանանահայ քաղաքական գործիչներն ու կուսակցություններն ըստ իրենց կողմորոշման համագործակցում էին երկրի տարբեր ուժերի և խմբավորումների հետ, սակայն հայ համայնքն ընդհանուր առմամբ, իր շահերից ելնելով, փորձում էր հավատարիմ մնալ դեռևս 1975 թ. բռնկված քաղաքացիական պատերազմի ընթացքում որդեգրած «դրական չեզոքության» քաղաքականությանը:

Փաստենք, որ Լիբանանում 2006 թ. վերջին և 2007 թ. սկզբին սրված ներքաղաքական ճգնաժամը տարածաշրջանային և

<sup>44</sup> Hani M. Bathish & Nafez Qawas, Ban Says Assad Has Pledged to Help Seal Deal on Hariri Court, Daily Star, Beirut, 25.04.07.

ոչ տարածաշրջանային ուժերի միջև պայքարի ուժեղացման հետևանք էր:

Քաղաքական ճգնաժամն ուներ նաև ներքին պատճառներ.

1. Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորման հարցում երկրի հակադիր քաղաքական ճամբարներն ունեին տարբեր դիրքորոշումներ: Սա մեծապես նպաստում էր երկրում իրավիճակի անկայունացմանը և հնարավորություն էր տալիս տարածաշրջանային որոշ ուժերի ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջամտելու Լիբանանի ներքին գործերին:

2. 2006 թ. հուլիս–օգոստոս ամիսների լիբանանախորայելյան պատերազմում «կասկածելի հաջողություններ» ունենալուց հետո Հիզբալլահ շարժումը փորձում էր օգտագործել լիբանանյան հասարկության որոշ շրջանակներում իր վայելած ժողովրդականությունը և մեծացնել իր քաղաքական ազդեցությունն ու ներգրավվածությունը երկրի կառավարման մարմիններում: Վերոնշյալն իր հերթին ավելի ակնհայտ էր դարձնում լիբանանյան հասարակության ներսում առկա պառակտվածությունը:

Լիբանանյան հակամարտության քաղաքական կարգավորմանը միտված միջազգային հանրության ջանքերի համատեղմանը զուգահեռ՝ երկրի որոշ շրջանակներ իրենց տարածաշրջանային հովանավորների աջակցությամբ փորձում էին ներքաղաքական ճգնաժամը տեղափոխել զինված բախումների հարթություն:

2006 թ. վերջին և 2007 թ. սկզբին թեև Լիբանանին հաջողվեց խուսափել նոր քաղաքացիական պատերազմի բռնկումից, սակայն քաղաքական ճգնաժամը դեռևս մնում էր չկարգավորված: Լուծում չէր ստացել ճգնաժամի առաջացման հիմնական խնդիրներից մեկը՝ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորման հարցը: Վերոնշյալ խնդրի լուծումը հետաձգելու ընդդիմության որոշումը ստիպեց երկրի կառավարամետ ուժերին հարցի քննարկումը տեղափոխել ՄԱԿ–ի ԱԲ:

Միջազգային հանրությունը, մի կողմից ընդունելով դատարանի կազմավորման անհրաժեշտությունն ու կարևորությունը, իսկ մյուս կողմից՝ փորձելով խուսափել ներլիբանանյան հակասությունների էլ ավելի սրումից, ջանքներ էր գործադրում, որ դատարանի կազմավորման որոշումը կայացվեր լիբանանյան մակարդակում, ինչը կնպաստեր հակադիր ճամբարների միջև հակասությունների թուլացմանը:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՍԼԱՄԸ «ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

2010 թ. վերջերից, իսկ ավելի ստույգ՝ 2011 թ-ից ի վեր, արաբական մի շարք երկրներում սկիզբ առան հակակառավարական բողոքի աննախադեպ ցույցեր, որոնք հայտնի դարձան «արաբական գարուն» անունով: Մասնավորապես Եգիպտոսում, Թունիսում, Լիբիայում և Եմենում դրանք ուղեկցվեցին իշխանափոխությամբ, իսկ այլ երկրներում՝ հասարակական-քաղաքական հուժկու շարժումներով: Դրանք չունեին հստակ առաջնորդներ, առաջնորդող քաղաքական ուժեր, չէին ղեկավարվում մշակված հայեցակարգերով: Դրանցում ամենահանգուցային ուժը երիտասարդությունն էր, իսկ համացանցը՝ այն հենքը, որը նպաստեց համախմբմանն ու պայքարի հետագա ծավալմանը: Միտված լինելով հասարակական-քաղաքական բարեփոխումների իրականացմանն ու ժողովրդավարության հաստատմանը՝ «արաբական գարունն» իրականում որոշակիորեն բարդ, խրթին ու հակասական իրավիճակներ ստեղծեց արաբական աշխարհում, որոնք դեռևս հանգուցալուծման փուլում են: «Արաբական գարնան» արդյունքում մեծացավ արտաքին գործոնի նշանակությունն արաբական երկրների ներքաղաքական գործընթացներում: Նորանոր քննարկումներ ծավալվեցին Մերձավոր Արևելքի արդիականացման հարցի շուրջ<sup>1</sup>:

«Արաբական գարնանն» առնչվող դեպքերի արդյունքում հազարավոր անմեղ մարդիկ զոհվեցին, փախստական դարձան, կորցրեցին իրենց տները: Արաբական մի շարք երկրներ կրեցին տնտեսական ու նյութական վիթխարի կորուստներ: Ներքաղա-

<sup>1</sup> Մանրամասն տես Գ. Գևորգյան, Մերձավոր Արևելքի արդիականացման խնդիրը. «արաբական գարունը» և Եգիպտոսը, Ժամանակակից Եվրասիա, Մերձավոր Արևելք. Քաղաքական փոխակերպումներ, հատոր II (1), Երևան, 2013, էջ 10-29:

քական լարվածությամբ հիմնականում առանձնացան Թունիսը, Եգիպտոսը, Լիբիան, Եմենը, Սիրիան, Բահրեյնը, որոշ չափով՝ Հորդանանը, Լիբանանը, Մարոկկոն և այլն: Մասնավորապես սիրիական ճգնաժամը վերաճեց միջազգային հակամարտության:

«Արաբական գարնան» գործընթացների բնորոշ կողմերից մեկը դարձավ իսլամական գործոնի, այլ կերպ ասած՝ «քաղաքական իսլամի», ինչպես նաև սալաֆիական հոսանքների և քրիստոնեական խմբավորումների ակտիվացումը: Իսլամի դաշտում գործող տարաբնույթ ուղղությունները միմյանցից տարբերվում էին թե՛ հայեցակարգային, թե՛ ռազմավարական առումներով: Արաբական վարչակարգերին ընդդիմադիր և «քաղաքական իսլամը» ներկայացնող իսլամամետ ուժերը նախքան «արաբական գարունը» հիմնականում գործել են վտարանդիության մեջ, ընդհատակում կամ կիսաօրինական դաշտում: Նրանք միշտ էլ եղել են տվյալ երկրի հասարակական-քաղաքական խճանկարի մասը և ունեցել են համախոհների լայն շրջանակներ: Հակակառավարական շարժումներին իսլամամետներն արձագանքեցին ավելի ուշ, իսկ հետագայում, առանձին երկրներում, իշխանության եկան: Այս առումով հատկապես հետաքրքիր են «արաբական գարնան» ավանգարդներ համարվող Թունիսի և Եգիպտոսի օրինակները<sup>2</sup>:

«Արաբական գարունը» սկսվեց Թունիսից և կապված է 2010 թ. դեկտեմբերի 17-ին թունիսցի երիտասարդ Մուհամեդ Բուազիզի ինքնահրկիզման հետ: Վերջինս այդ քայլին էր դիմել՝ բողոքելով ոստիկանության գործողությունների դեմ, երբ նրան արգելվել էր փողոցում զբաղվել բանջարեղենի վաճառքով: Համաժողովրդական հուզումների արդյունքում (որ հայտնի են «Հասմիկների հեղափոխություն» անվամբ) 2011 թ. հունվարի 14-ին նախագահ Զինեդդին Բեն Ալին 23 տարի երկիրը ղեկավարելուց հետո հեռացավ իշխանությունից: Ինը ամիս անց Թունիսում հոկտեմբերի 23-ին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում հաղթանակ տարավ 1981 թ. հիմնված չափավոր իսլամամետ «Ան-Նահդա» («Վերածնունդ») կուսակցությունը: Վերջինս անցումային խորհրդարանի 217 տեղերից զբաղեցրեց 89-ը (մոտ 41 տոկոս)<sup>3</sup>: Հաջորդ տեղերը զբաղեցրեցին

<sup>2</sup> Հարկ է նշել, որ նախքան «արաբական գարունը» իսլամամետները հաղթանակ տարան Պաղեստինի Ինքնավարությունում: Այստեղ 2006 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում հաղթանակ տարավ իսլամամետ «Համալը» առաջ անցնելով իշխող «Ֆաթհին»:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Anna Mahjar-Bardussi, Tunisia after the Elections. Part I: A Guide to Interpreting the Elections Results, <http://www.memri.org/report/en/print5924.htm>, December 16, 2011. Inquiry & Analysis Series Report No. 774.

ձախակողմյան ուղղվածությամբ «Հանրապետական կոնգրեսը» (29 մանդատ), «Ազգային պետիցիան» (26 մանդատ) և «Աշխատանքի և ազատության ժողովրդավարական ֆորումը» («Էթաքաթուլ») (20 մանդատ): «Ան-Նահդան» դաշինք կազմեց քաղաքական աշխարհիկ ուժերի հետ: Նորընտիր խորհրդարանը 2011 թ. դեկտեմբերի 12-ին անցումային շրջանի նախագահ ընտրեց միասնական թեկնածու Մունսիֆ Ալ-Մարզուկիին, ով դեկտեմբերի 14-ին անցումային շրջանի վարչապետ նշանակեց «Ան-Նահդայի» գլխավոր քարտուղար Համադի Ջեբալիին<sup>4</sup>:

Թունիսում ազատ ընտրությունների և այդքան ակտիվ մասնակցության փաստն աննախադեպ էր: Աշխարհիկ երկիր համարվող Թունիսում ընտրությունը կանգ առավ չափավոր իսլամամետ «Նահդայի» վրա: Կուսակցության առաջնորդը՝ երկար տարիներ Անգլիայում վտարանդիության մեջ ապրած ազդեցիկ քաղաքական գործիչ Ռաշիդ Ալ-Ղաննուշին մինչ այդ թունիսյան հասարակությանը շատ պարզ հասկացնել տվեց, որ իշխանության գալու դեպքում իրենք չեն ձգտելու ստեղծել շարիաթական պետություն, այլ նախապատվությունը տալու են թուրքական մոդելին՝ եզրեր փնտրելով իշխող «Արդարություն և զարգացում կուսակցության» քաղաքականության հետ, ինչը ենթադրում էր՝ բազմակարծություն, բազմակուսակցականություն, տնտեսության զարգացում և այլն<sup>5</sup>: Ղաննուշին նույնիսկ նշեց, որ համագործակցելու է քաղաքական ու քաղաքացիական ուժերի հետ՝ Թունիսը օրենքի պետություն դարձնելու համար<sup>6</sup>:

«Ան-Նահդան», որ 1992 թ-ից ի վեր չէր մասնակցել Թունիսի քաղաքական գործընթացներին, նախքան իշխանության գալը կարողացավ շատ ճկուն դիսկուրս վարել՝ քննադատելով կրոնաքաղաքական պահպանողական և արմատական ուժերին, աջակցություն հայտնելով ժողովրդավարական արժեքներին ու մարդու հիմնարար իրավունքներին, հավաստիացնելով, որ գիտակցում է շարիաթականացման ոչ շահեկան հետևանքները երկրի հիմնական եկամուտներն ապահովող զբոսաշրջության զարգացման համար: Ղաննուշին հայտարարեց, որ ընտանեկան օրենսգիրքը կհենվի շարիաթի վրա, սակայն կարգելվի բազմակնությունը, դպրոցներում հիջաբի արգելք գոյություն չի ունենա, կնոջ և

<sup>4</sup> Veyssel Ayhan, Results of the Tunisian Constituent Assembly Elections: Winners and Losers, <http://www.orsam.org.tr/en/showArticle.aspx?ID=887>

<sup>5</sup> Profile. Tunisia's Ennahda Party, <http://www.bbc.co.uk> 25 October 2011

<sup>6</sup> What role for the Islamists?, Al-Ahram weekly on-line, 27 January – 2 February 2011 Issue No. 1033, <http://weekly.ahram.org.eg>

տղամարդու միջև կհաստատվի հավասարություն, շարիաթով ամրագրված քարկոծումը և անդամահատումը չեն դիտարկվի որպես պատժամիջոցներ և այլն<sup>7</sup>:

Սակայն նույնիսկ չափավոր հայացքներ ունեցող «Ան-Նահդայի» հաղթանակը որոշակի մտահոգություն ստեղծեց Թունիսի աշխարհիկ շրջանակներում: Ասվածի ապացույցն այն բուռն ու բացասական արձագանքն էր, որ հաջորդեց կուսակցության գլխավոր քարտուղար, իսկ հետագայում վարչապետ Համադ Ջեբալիի՝ «վեցերորդ խալիֆայության» (հինգերորդն օսմանյանն էր, որը կործանվեց 1924 թ–ին) դարաշրջանի սկսվելու մասին արված հայտարարությանը, որով նկատի էր առնվում Թունիսը: Հասարակության ազատական և աշխարհիկ շերտերի մտավախությունը փարատելու համար հետագայում թե՛ «Ան-Նահդայի», թե՛ իշխող դաշինքի մաս կազմող ուժերի կողմից հնչած գնահատականը համարվեց թյուրըմբռնում<sup>8</sup>:

Հարկ է նշել, որ Թունիսում հեղափոխությունից և իսլամամետների՝ իշխանության գալուց հետո երկրում կայունությունը չվերականգնվեց: Թունիսում մի կողմից աննախադեպ ակտիվացան սալաֆիական խմբավորումներն ու շարժումները, որոնք սկսեցին կոշտ ձևով պայքարել Թունիսը շարիաթական պետություն դարձնելու համար<sup>9</sup>: Մյուս կողմից՝ մեծ թափ ստացան աշխարհիկ հենք ունեցող քաղաքացիական շարժումները: 2013 թ. փետրվարի 6–ին աշխարհիկ ընդդիմադիր Բելաիդ Շուքրիի սպանությունից հետո Թունիսում սկիզբ առան հակակառավարական նոր ցույցեր, որոնց արդյունքում փետրվարի 19–ին Ջեբալին հրաժարական տվեց: Ի վերջո, ազգային երկխոսության արդյունքում 2014 թ. հունվարին իշխող դաշինքի և ընդդիմադիրների միջև համաձայնություն ձեռք բերվեց: Գործող իշխանությունը որպես զիջում իր լիազորությունները փոխանցեց արհեստավարժների կառավարությանը: Անցումային շրջանի նոր վարչապետ դարձավ արդյունաբերության նախարար Մեհդի Ջոմասան<sup>10</sup>: «Ան-Նահդայի» դեմ հասարակական դժգոհությունների ալիքին հընթացս շարունակվում են խմորումները կուսակցության ներսում: Առանձին գնա-

<sup>7</sup> Rajaa Basly, The future of al-Nahda in Tunisia, <http://carnegieendowment.org> (April 20, 2011).

<sup>8</sup> Ennahda Discourse: The Sixth Caliphate or Misunderstanding?, <http://www.tunisia-live.net> (16 November, 2011).

<sup>9</sup> Tunisia's Nahda-led government takes on the Salafist challenge, <https://www.middleeastmonitor.com> (20 March, 2013).

<sup>10</sup> Tunisia PM Ali Larayedh hands over to Mehdi Jomaa, <http://www.bbc.co.uk> (9 January, 2014).



հատականների համաձայն՝ չի բացառվում, որ 2014 թ. աշնանը նախագահական և խորհրդարանական ընտրություններում «Ան-Նահդան» պարտություն կրի<sup>11</sup>:

Նշենք, որ թունիսյան հեղափոխությունն առաջինն անդրադարձավ Եգիպտոսի վրա, որտեղ 2011 թ. հունվարի 25-ից սկիզբ առան հակակառավարական լայնածավալ ցույցեր ու հանրահավաքներ: Որոշ ժամանակ անց նախագահ Հոսնի Մուբարաքը (1980–2011 թթ.) հայտարարեց, թե պատրաստ է անմիջապես հեռանալ, սակայն մտավախություն ունի, որ երկիրը կհայտնվի քաոսի մեջ, իսկ իշխանությունն անմիջապես իրենց ձեռքը կվերցնեն «Մուսուլման եղբայրները»<sup>12</sup>: Սակայն հեղափոխական իրավիճակի արդյունքում փետրվարի 11-ին Մուբարաքը հրաժարական տվեց:

Թվում էր, թե հակակառավարական հուզումները Եգիպտոսի տարբեր քաղաքներում ու շրջաններում կարող էին կազմակերպել հասարակության ծանրակշիռ շրջանակներում լայն ժողովրդականություն վայելող 1928 թ. ստեղծված «Մուսուլման եղբայրները»<sup>13</sup>, որի գործունեությունն արգելվել էր դեռևս 1954 թ.՝ այն ժամանակ վարչապետ, իսկ 1956–1970 թթ. Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերի դեմ իրականացված մահափորձից հետո: Սակայն հեղափոխական շարժման սոցիալական հենարանը ոչ թե իսլամամետներն էին կամ վարչակարգի ավանդական աշխարհիկ ընդդիմադիր ուժերը՝ Ալ-Վաֆդը, Ալ-Ղադդը և այլն, այլ հիմնականում երիտասարդության այն իրազեկ ու կրթված շրջանակները, ովքեր հնարավորություն ունեին օգտվելու համացանցից, հետևաբար և՛ սոցիալական ցանցերից (մասնավորապես՝ Facebook և Twitter), ինչն էլ համախմբման վճռորոշ ազդակ դարձավ:

Հատկանշական է, որ արաբական երկրների հասարակությունների մեծամասնությունը հենց երիտասարդներն են, որոնք

<sup>11</sup> Տե՛ս А. Быстрова Тунис: внутривластьные проблемы “Ан-Нахды”, <http://www.iimes.ru> (6 мая, 2014).

<sup>12</sup> Մասնավորապես Հոսնի Մուբարաքի իշխանության շրջանում (1980–2011 թթ.) կառույցը գործել է կիսաօրինական դաշտում, 1984 թ-ից մասնակցել խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին տարբեր դաշինքների կազմում և «անկախ» թեկնածուների միջոցով՝ շարունակելով առճակատման մեջ լինել իշխանությունների հետ: 2000 թ. խորհրդարանական ընտրություններում Մուսուլման եղբայրները Եգիպտոսի բարձրագույն օրենսդիր մարմնում ստացան 17, իսկ 2005-ին՝ 88 տեղ: Իսկ ամենավերջին՝ 2010-ի ընտրությունները բոլորտեցին:

<sup>13</sup> Eric Trager, The Unbreakable Muslim Brotherhood: Grim Prospects for a Liberal Egypt, Foreign Affairs, September–October 2011, <http://www.washingtoninstitute.org>

անմիջականորեն բախվում են հիմնական սոցիալական խնդիրներին (աղքատություն, գործազրկություն, ցածր աշխատավարձ, կոռուպցիա, կաշառակերություն, սոցիալական անհավասարություն, հովանավորչություն և այլն): Արդյունքում Ապրիլի 6-ի շարժումն<sup>14</sup> առաջ քաշեց երկրում վարչակարգի անհապաղ հրաժարականի և քաղաքական ու սոցիալական բարեփոխումներ իրականացնելու պահանջներ:

Աստիճանաբար բողոքի հակակառավարական ակցիաները սկսեցին համալրվել սոցիալական ու գաղափարական նորանոր շերտերով: Դրանց միանալու հրամայականը գիտակցեցին նաև «Մուսուլման եղբայրները», որոնք այդ փուլում, բնականաբար, չէին կարող լայն օրակարգ բերել իսլամիզմի իրենց հռետորաբանությունը, քանի որ շարժումն առաջ էր քաշում համընդհանուր, լայն գաղափարներ, որոնց կողմ էին Եգիպտոսի շարքային քաղաքացիները՝ հանուն մարդու իրավունքների և ժողովրդավարական ազատությունների: «Մուսուլման եղբայրներին» այլ բան չէր մնում, քան խոսել իսլամական ժողովրդավարությունից<sup>15</sup>:

Իշխանափոխությունից հետո «Մուսուլման եղբայրներ» շարժումն օրինականացվեց<sup>16</sup>: Ստեղծվեց շարժման քաղաքական կամ քաղաքացիական թևը՝ «Ազատություն և արդարություն» անունով, որի առաջնորդ դարձավ շարժման ղեկավարներից Մուհամմադ Մուրսին: Վերջինս փորձեց փարատել իսլամիզմից զգուշացողների մտավախությունը՝ նշելով, որ իրենք մտադիր չեն թեոկրատ պետություն ստեղծել և փորձելու են համագործակցել աշխարհիկ ուժերի հետ<sup>17</sup>: 2011–2012 թթ. Եգիպտոսի խորհրդարանական ընտրություններում «Ազատություն և արդարությունը» հավաքեց ձայների մեծամասնությունը<sup>18</sup>, իսկ որոշ ժամանակ անց Մուհամմադ Մուրսին հաղթեց 2012 թ. նախագահական ընտրություններում՝ առաջ անցնելով իր հակառակորդին՝ նախկին վար-

<sup>14</sup> Ապրիլի 6-ը երիտասարդական շարժում է, որ ստեղծվել էր դեռևս 2008 թ.-ի գարնանը Facebook սոցիալական ցանցում՝ աջակցելու եգիպտական Ալ-մահալա Ալ-քուբրա քաղաքի աշխատավորներին, որոնք ծրագրել էին ապրիլի 6-ին գործադուլ կազմակերպել:

<sup>15</sup> Egypt's Muslim Brotherhood Faces Prospect of Democracy Amid Internal Discord <http://www.washingtonpost.com> (21 February, 2011).

<sup>16</sup> Egypt Declares Muslim Brotherhood Legal, Voice of America, <http://www.voanews.com> (6 June, 2011).

<sup>17</sup> Egypt: Muslim Brotherhood Sets up New Party, <http://www.bbc.co.uk> (30 April, 2011).

<sup>18</sup> Egypt's Parliamentary Elections End; Muslim Brotherhood Wins Majority, <http://www.christianpost.com> (6 January, 2012).

չապետ և զինվորական Ահմադ Շաֆիկին, ով ներկայացնում էր քաղաքական դաշտի աշխարհիկ հատվածը<sup>19</sup>:

Հետհեղափոխական շրջանում Եգիպտոսում անկախությունից հետո իսլամիզմն առաջին անգամ հաղթանակ տարավ: Եգիպտոսի խորհրդարանի մաս կազմեցին նաև սալաֆիական ուժերը՝ ի դեմս «Նուռ» շարժման<sup>20</sup>: Սակայն որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ «Մուսուլման եղբայրները» չկարողացավ արդարացնել հեղափոխության հույսերը: Շոշափելի առաջընթաց չգրանցվեց ո՛չ երկրի տնտեսության կայունացման, ո՛չ ժողովրդավարության ասպարեզում: Հատկապես ճակատագրական եղավ Եղբայրների կողմից մշակված նոր Սահմանադրության նախագիծը, որն աննախադեպ ընդլայնում էր նախագահի լիազորությունները՝ հետընթաց գրանցելով հեղափոխության պահանջներից<sup>21</sup>: Թույլ տրված բազմաթիվ սխալների պատճառով թե՛ Մուրսիի, թե՛ Եղբայրների հեղինակությունը սկսեց անկում ապրել<sup>22</sup>: Հ. Մուբարաքի իշխանափոխությունից ի վեր սկիզբ առած ներքաղաքական անկայնությունն այդպես էլ չհաղթահարվեց: Ի վերջո, հասարակության շրջանում իսլամիզմի հարցում դժգոհությունները լավագույնս օգտագործեցին զինվորականները, ովքեր Մուբարաքի իշխանափոխությունից հետո կարողացան բավական երկար ժամանակ՝ թե՛ մինչև նոր իշխանության ձևավորումը, թե՛ դրանից հետո, պահպանել կառավարման լծակները: Զինվորականների կազմակերպած պետական հեղաշրջման արդյունքում 2013 թ. հուլիսի 3-ին Մուհամմադ Մուրսին մոտ մեկ տարի պաշտոնավարելուց հետո հեռացվեց իշխանությունից և ձերբակալվեց: Բախումների արդյունքում «Մուսուլման եղբայրներ» շարժման բազմաթիվ անդամներ մահացան, շատերը՝ ձերբակալվեցին: Մուրսիի պաշտոնանկության մասին հայտարարեց Աբդ Ալ-Ֆաթահ Ալ-Սիսիսն՝ Եգիպտոսի բանակի գերագույն հրամանատարը, ով մտադիր էր երկրի նախագահ դառնալ: Անցումային շրջանի ժամանակավոր նախագահ նշանակվեց Սահմանադրական դատարանի նախագահ Ադլի Ալ-Մանսուրը: Հայտարարվեց

<sup>19</sup> Muslim Brotherhood's Mohammed Morsi Wins Egypt's Presidential Race, <http://www.theguardian.com> (24 June, 2012).

<sup>20</sup> Եգիպտոսում սալաֆիականության մասին տես Khalil Al-Anani, Pious Ways to Politics: The Rise of Political Salafism in Post-Mubarak Egypt, <https://www.academia.edu>

<sup>21</sup> See Draft of the Constitution of the Arab Republic of Egypt, [http://www.constitutionnet.org/files/2012.09.20\\_-\\_draft\\_constitution\\_-\\_english.pdf](http://www.constitutionnet.org/files/2012.09.20_-_draft_constitution_-_english.pdf)

<sup>22</sup> Morsi and Muslim Brotherhood Have Failed, <http://www.spiegel.de> (2 July, 2013).

նոր ընտրությունների անցկացման մասին<sup>23</sup>: 2013 թ. հունվարի 14–15–ին Եգիպտոսի քաղաքացիները քվեարկեցին նոր Սահմանադրության օգտին (98,1 տոկոս)<sup>24</sup>, որն ավելի մոտ էր Մուբարաքի շրջանում գոյություն ունեցող Սահմանադրությանը<sup>25</sup>: 2013 թ. Եգիպտոսի դատարանն արգելեց «Մուսուլման եղբայրների» գործունեությունը: 2014 թ. մայիսի 26–28–ը անցկացված նախագահական ընտրությունների արդյունքում Ալ–Սիսին ձայների մեծամասնությամբ (92,9 տոկոս՝ 23 264 306 ձայն) ընտրվեց Եգիպտոսի նախագահ և հունիսի 8–ին ստանձնեց իր պարտականությունները:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Թունիսի և Եգիպտոսի օրինակներն ի ցույց դրեցին, որ «արաբական գարնան» գործընթացներում առանձնահատուկ դեր խաղացին իսլամի քաղաքականացման դրսևորումները, որոնք նպատակ ունեին հետհեղափոխական շրջանի գաղափարախոսական և քաղաքական բացը լցնել իսլամիզմով: Արաբական մի շարք երկրներում հասարակության շատ ու շատ շերտեր համոզված էին, որ իսլամական սկզբունքների որոշակի կամ նույնիսկ ամբողջական ներդրամբ հնարավոր կլիներ լուծել սոցիալ–տնտեսական և քաղաքական այն բարդ ու խրթին հիմնահարցերը, որոնք ձևավորվել էին տասնամյակների ընթացքում: Իսլամամետների հաջողությունը կապված էր նաև այն փաստի հետ, որ անկախության ձեռքբերումից հետո արաբական իսլամական մի շարք երկրներում իշխանության եկած աշխարհիկ վերնախավը, ներմուծելով եվրոպական արժեքներ, այդպես էլ չկարողացան լիովին արդարացնել սեփական հասարակությունների հույսերը: Ամեն պարագայում, իսլամամետների իշխանության գալը պատահական չէր, քանի որ մասնավորապես Եգիպտոսում հասարակության բավական լայն շրջանակներ աչքի էին ընկնում կրոնասիրությամբ և կրոնապետության ջատագովությամբ:

- «Արաբական գարնան» ավանգարդներ համարվող Թունիսն ու Եգիպտոսը դարձան այն երկրները, որտեղ հետհեղափո-

<sup>23</sup> Egyptian Army Ousts Morsi, Orders New Elections <http://www.usatoday.com> (4 July, 2013).

<sup>24</sup> Official Vote Result: 98.1% Approves Egypt's Post-June 30 Constitution, Ahrām Online, Saturday 18 Jan 2014

<sup>25</sup> Sisi Constitution of the Arab Republic of Egypt 2014, <http://www.sis.gov.eg/Newvvr/Dustor-en001.pdf>

խական շրջանում հաղթանակ տարավ «քաղաքական իսլամը»: Թվում էր, որ թե՛ Թունիսում և թե՛ Եգիպտոսում իսլամամետների իշխանության գալը շահեկան էր պահպանողական և արմատական սալաֆիական կրոնաքաղաքական ուժերին հակազդելու առումով, սակայն վերջիններիս առաջխաղացումն աստիճանաբար ընդլայնվեց:

- Թե՛ Թունիսի և թե՛ Եգիպտոսի օրինակներն ի ցույց դրեցին, որ իսլամամետները չկարողացան լուծել գոյություն ունեցող հիմնահարցերը և պահպանել այն հեղինակությունը, որն ունեին նախքան հեղափոխությունները: Իշխանափոխության հետևանքով ձևավորված նոր վարչակարգերը չկարողացան լիովին արդարացնել սեփական հասարակության հույսերը: Սկիզբ առած նորանոր դժգոհություններն ու հիասթափությունները դարձան սոցիալ-քաղաքական վայրիվերումների պատճառ:

- Իսլամամետների և աշխարհիկների առճակատումը թե՛ Եգիպտոսում և թե՛ Թունիսում դարձավ անխուսափելի՝ փաստելով, որ արաբական երկրների նորագույն շրջանի պատմությանը միշտ էլ բնորոշ է եղել պայքարը զարգացման կրոնաքաղաքական և աշխարհիկ ուղղությունների միջև:

- Եգիպտոսում 2014 թ. զինվորականների՝ իշխանության գալն ի ցույց դրեց, որ «արաբական գարունը» չկարողացավ արմատական փոփոխություններ անել արաբական երկրների հասարակական և քաղաքական համակարգերում: Իսլամամետների իշխանության գալը կարելի է բնորոշել որպես անցումային շրջանի իրողություն: Արաբական հասարակությունները սկսեցին խորհել նախքան հեղափոխություններն ունեցած առավելությունների մասին և սկսեցին երազել նախկին իրադրությունը վերականգնելու մասին:

- «Արաբական գարնան» գործընթացներում նոր թափ ստացած իսլամիստական ուժերին էական օժանդակություն ցուցաբերեցին արտաքին դերակատարները (թե՛ իսլամական աշխարհի ներսից, թե՛ դրա սահմաններից դուրս):

- «Արաբական գարնան» արդյունքում իշխանության եկած իսլամամետ ուժերի սխալերը, բացթողումներն ու ձախողումներն ի ցույց դրեցին, որ իսլամիզմը այդքան էլ կենսունակ չէ համարժեք արձագանքելու գոյություն ունեցող մարտահրավերներին և դառնալու արաբական պետությունների հավասարակշռված զարգացման երաշխիք:

- Արաբական երկրներում հասարակական-քաղաքական զարգացումների հեռանկարները և դրանցում իսլամի դերակատարության հարցը դեռևս անորոշ են: Օրակարգում են արաբական երկրներում ազատ ու արդար ընտրությունների, բազմաբևեռ քաղաքական համակարգի, սոցիալական արդարության, տնտեսական առաջընթացի զարգացման հետ կապված հարցեր: Արաբական երկրներում գլուխ բարձրացող սալաֆիական շարժումներն առաջ են քաշում Ումմայի կազմակերպման նոր՝ դասական միջնադարյան մոտեցումներ, ինչը հակասության մեջ է մտնում ոչ միայն արդիականության, այլև Մերձավոր Արևելքի բարեփոխումների ու արդիականացման տարբեր հայեցակարգերի հետ: Ի վերջո ինչ դեր կունենա իսլամն «արաբական գարնան» դեպքերից հետո, ցույց կտա ժամանակը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ արաբական երկրների հասարակական-քաղաքական բարեփոխումների իրականացման համար ոչ միայն երկար ժամանակ, այլև մեծ ռեսուրսներ ու նպաստավոր պայմաններ են անհրաժեշտ՝ անկախ այն հանգամանքից՝ այդ բարեփոխումները կրոնական, թե աշխարհիկ արժեքների համատեքստում կիրականացվեն: Այսօր արաբական իսլամական երկրներում կան մի շարք օբյեկտիվ դժվարություններ (ժողովրդագրական աճի բարձր տեմպեր, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններ, արտաքին միջամտություն, անվտանգության խնդիրներ, ոչ բարենպաստ վիճակում ժառանգություն եկած տնտեսություն, նոր աշխատատեղերի ապահովման հարց, մոլեկրոնության, կրոնական ծայրահեղականության և արմատականության հարածուն դրսևորումներ, սոցիալական այլևայլ հիմնահարցեր), որոնք լրջագույն խնդիրներ են ցանկացած վարչակարգի համար:

## **ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԻՐԱՔՅԱՆ ՔՈՒՐԴԻՍԱՆՈՒՄ**

Իրաքյան Քուրդիստանում թուրքական զորքերի ու ռազմական բազաների տեղակայման և թուրքական Հատուկ զորքերի հրամանատարության կապի գրասենյակների կամ հետախուզական բազաների ստեղծման տարեվի և դրա իրավունքը տրամադրող կողմի մասին թուրքական աղբյուրների տվյալները խիստ հակասական են: Պաշտոնաթող գեներալ Նեջաթի Էոզգենը Հյուսիսային Իրաքում թուրքական զորքերի տեղակայման և ռազմակայանների հիմնադրման ուղղությամբ աշխատանքները վերագրում է 1992–1993 թթ.: Իսկ ռազմակայանների ստեղծման համաձայնագրի տակ ստորագրած անունների շարքը Էոզգենի պնդմամբ, գլխավորում էր այն ժամանակ պարզապես ՔՀՄ առաջնորդ, իսկ ներկայումս նաև Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին<sup>1</sup>: Թուրքական այլ աղբյուրներ պնդում են, թե Հյուսիսային Իրաքում թուրք զինվորները տեղակայվել են 1995 թ. ՔԴԿ-ի ու ՔՀՄ-ի ցանկության համաձայն՝ վերջիններիս միջև ընդհարումները կանխելու նպատակով: Նշվում է նաև, որ թուրքական ուժերն այստեղ են հաստատվել 1995 թ. ՔԴԿ-ի ու PKK-ի միջև հակամարտության ընթացքում ՔԴԿ-ին աջակցելու նպատակով՝ ձգտելով բացառել իշխանության վակուումից PKK-ի օգտվելը, և որ թուրք զինվորները հաստատվել են Բամերնիի, Բատուֆայի, Քանըմասըի կարգի բնակավայրերում, իսկ Հատուկ զորքերի հրամանատարությունն իր կապի գրասենյակներն է բացել Սուլեյմանիեի ու Էրբիլի կարգի քաղաքներում<sup>2</sup>: Սակայն միևնույն աղբյուրում բերվում է նաև

<sup>1</sup> Mert İnan, ‘Çuval’ın asil nedeni Irak’taki üsler’ (03.10.2012), <http://haber.gazetevatan.com/cuvalin-asil-hedefi/484995/1/Haber>

<sup>2</sup> Sñu Genelkurmay’dan, Kuzey Irak’taki Türk üslerini kapatmak isteyen Barzani’ye sert cevap (March 5, 2008), <http://www.habervitrini.com/haber/genelkurmaydan-kuzey-iraktaki-turk-uslerini-kapatmak-isteyen-barzaniye-sert-cevap-329040/>

մեկ այլ տեսակետ, որ Հյուսիսային Իրաքում թուրքական ռազմական բազաները ստեղծվել են 1997 թ.՝ ՔԴԿ-ի ու ԲՀՄ-ի ցանկության համաձայն՝ վերջիններիս միջև ընդհարումները և PKK-ի՝ ստեղծված իրավիճակից օգտվելը կանխելու, ինչպես նաև PKK-ի գործողությունները վերահսկողության տակ առնելու նպատակով: Նշվում է նույնիսկ, որ այդ «ռազմակայանների ստեղծման գործում կարևոր էր նաև ՔԴԿ-ի ու ԲՀՄ-ի համապատասխան խնդրանքը, իսկ իրաքյան կառավարության հետ կնքված մի համաձայնագրով Հյուսիսային Իրաքում թուրքական զորքերի առկայությունը իրավական հիմքեր ստացավ»<sup>3</sup>: Սակայն կա նաև տեսակետ, որ PKK-ի հետ պայքարելու նպատակով Հյուսիսային Իրաքում թուրք զինվորների ներկայության ու ռազմակայանների տեղակայման իրավունքը բխում է 1995 թ. Սադդամ Հուսեյնի հետ կնքված պայմանագրից, որից հետո՝ 1996 թ. սկսած Բամերնիի ռազմական բազայում տեղակայվեց թուրքական տանկային գումարտակը<sup>4</sup>: Թուրք փորձագետ Նամըք Դուրուքանի կարծիքով, «ՔԴԿ-ի ու ԲՀՄ-ի համապատասխան կառավարությունների հետ հիշյալ խնդրի վերաբերյալ առաջին համաձայնագիրը թուրքական կողմը ստորագրել է դեռ 1996 թ.»<sup>5</sup>: Սակայն նույն Նամըք Դուրուքանը, վկայակոչելով ֆրանսիական AFP գործակալությունը, նշում է, որ Հյուսիսային Իրաքի Դոհուկի շրջանում թուրքական զորքերի ներկայության վերաբերյալ պայմանագիրը Սադդամ Հուսեյնի հետ կնքվել է 1995 թվականին՝ միաժամանակ նշելով, որ ՔԴԿ-ում երկրորդ անձը հանդիսացող Նեչիրվան Բարզանին Թուրքիայի՝ Իրաքյան Քուրդիստանում ռազմակայաններ ունենալն ապահովագրող պայմանագրի ստորագրումը վերագրում է 1997 թվականին<sup>6</sup>: Դոկտոր Էմրուհան Յալչընն էլ հետևյալն է պնդում. «1995 թ.

<sup>3</sup> Sñu Genelkurmay'dan, Kuzey Irak'taki Türk üslerini kapatmak isteyen Barzani'ye sert cevap, March 5, 2008, <http://www.habervitrini.com/haber/genelkurmaydan-kuzey-iraktaki-turk-uslerini-kapatmak-isteyen-barzaniye-sert-cevap-329040/>

<sup>4</sup> Irak'tan üs ve sınır ötesi hareket resti! (02 Ekim, 2012), <http://haber.gazetevatan.com/iraktan-us-ve-sinir-otesi-harekat-resti/484736/1/Haber>, տես նաև Bağdat Türkiye'den ne talep etti,- Hürriyet (2 Ekim 2012) <http://www.hurriyet.com.tr/planet/21607395.asp>

<sup>5</sup> Namık Durukan, Askeri üslerde kararı Kürt yönetimi verecek,- Milliyet.com.tr (04 Ekim 2012) <http://gundem.milliyet.com.tr/askeri-uslerde-karari-kurt-yonetimi-verecek/gundem/gundemdetay/04.10.2012/1606316/default.htm> 1996 թ. հիշատակվում է նաև այլ տեղեկատվություններում: Sñu 'Türk askeri altı yıl daha Kuzey Irak'ta' (16 Kasım 2011),- <http://www.yeniaksen.com/haber/siyaset/turk-askeri-alti-yil-daha-kuzey-irakta/29608.html>

<sup>6</sup> Namık Durukan, Üslerini kapatın askeri çekin,- Milliyet.com.tr 03 Ekim, 2012, Namık Durukan, Iraq to Expel Foreign Troops, End Turkish Military Presence,- Al-Monitor, October 3, 2012 <http://www.al-monitor.com/pulse/security/01/10/iraq-ejects-turkish-armed-forces.html>



թուրքական բանակը Հյուսիսային Իրաքում եղած PKK-ի ճամբարների դեմ իրագործեց «Պողպատ օպերացիա» անվան տակ հայտնի գործողությունը: Այդ շրջանակներում, գործողությանը մասնակցած խմբավորումների մի մասը Իրաքի այն ժամանակվա առաջնորդ Սադդամ Հուսեյնի հետ բանավոր ձեռք բերված համաձայնության շրջանակներում թողնվեց Հյուսիսային Իրաքում: Թեև իրական նպատակը PKK-ի և Թուրքիայի սահմանի միջև բուֆերային գոտու ստեղծումն էր, ժամանակի ընթացքում հանգամանքների բերումով այն իրագործել չհաջողվեց: Ձեռք բերված հիշյալ համաձայնությունը թուրքական ուժերին Իրաքի հյուսիսում PKK-ին տաք հետքերով հետապնդելու իրավունք էր վերապահում: Բացի այդ՝ արդեն 1997 թ. Թուրքիայի՝ քրդական շրջանի սահմաններում բազա ունենալու վերաբերյալ որոշում կայացվեց: Թուրքիայի և Իրաքի միջև այս կապակցությամբ ստորագրված որևիցե պայմանագիր գոյություն չունի»<sup>7</sup>:

Մեր կարծիքով, թուրքական զորքերը չեն հրավիրվել իրաքյան քրդերի կողմից Իրաքյան Քուրդիստանում միջքրդական խաղաղությունն ու կայունությունը ապահովելու նպատակով, ինչպես դա պնդում են որոշ թուրք պաշտոնյաներ ու թուրքական ՉԼՄ-ներ, առավել ևս, որ դրանք սկսել են կայանել հիշյալ տարածքում նախքան 1994 թ. սկսված միջքրդական քաղաքացիական պատերազմը: 1990-ական թթ. սկզբներին, երբ թուրքական զորքերը մուտք էին գործում Իրաքյան Քուրդիստանի PKK-ի դեմ գործողություններ իրագործելու նպատակով, գործողությունների ավարտից հետո նրանցից ոչ բոլորն էին հեռանում. մի մասը մնում կամ տեղակայվում էր Իրաքյան Քուրդիստանում իրադրությունն ու PKK-ի գործողությունները վերահսկելու նպատակով<sup>8</sup>: Իրաքյան Քուրդիստանի՝ Թուրքիայի հետ սահմանամերձ գոտին, որտեղ Թուրքիան ապահովեց ու աստիճանաբար մեծացրեց իր ռազմական ու հետախուզական կայանների ներկայությունը, գերազանցապես ՔԴԿ-ի վերահսկողության ներքո էր: Հետ-

<sup>7</sup> Doç. Dr. Emruhan Yalçın, Kuzey Irak'taki Türk askerî varlığının sonlandırılması,– 21. Yüzyıl Türkiye Enstitüsü, Terörizm ve Terörizmle Mücadele (08.10.2012), <http://www.21yyte.org/tr/arastirma/terorizm-ve-terorizmle-mucadele/2012/10/08/6759/kuzey-iraktaki-turk-asker-varliginin-sonlandirilmas-i>, տես նաև [http://www.21yyte.org/tr/yazi6759Kuzey\\_Iraktaki\\_Turk\\_Asker%C3%AE\\_Varliginin\\_Sonlandirilmasi.html](http://www.21yyte.org/tr/yazi6759Kuzey_Iraktaki_Turk_Asker%C3%AE_Varliginin_Sonlandirilmasi.html)

<sup>8</sup> Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq,–Terrorism Monitor Volume: 6 Issue: 6, March 24, 2008, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1)

Լաբար սկզբնական շրջանում Թուրքիան ապահովել էր ՔԴԿ-ի համաձայնությունը: Դա բարդ չէր, քանզի Թուրքիա-ՔԴԿ համագործակցությունն առկա էր դեռ 1990-ական թթ. սկզբներից, և ՔԴԿ-ն նույնիսկ մասնակցում էր PKK-ի դեմ Թուրքիայի ձեռնարկած ռազմական որոշ գործողություններին՝ փոխարենը Թուրքիայից ստանալով Իրաքյան Քուրդիստանում առկա PKK-ի բազաներից ու ճամբարներից բռնագրավված զենքն ու զինամթերքը: Իսկ արդեն միջբրդական (ՔԴԿ-ՔՀՄ) քաղաքացիական պատերազմի ընթացքում, երբ ՔԴԿ-ին վերապահված տարածքում գործող PKK-ն ըստ էության ՔՀՄ-ի դաշնակիցն էր, ՔԴԿ-ն պետք է հանդուրժեր PKK-ի դեմ գործող թուրքական զորքերի ներկայությունը: Եվ թուրքական կողմը գործողությունների ավարտից հետո Իրաքյան Քուրդիստանում էր թողնում ոչ միայն զորքեր, այլև ՔԴԿ-ի հետ կապի ապահովման համար պատասխանատու հետախուզության աշխատակիցների: 1996 թ. ստորագրված Անկարայի համաձայնագիրը և վերջինիս կենսագործման նկատմամբ վերահսկողությունն իրագործելու նպատակով Խաղաղության մոնիթորինգի ուժերի (այսուհետ՝ ԽՄՈՒ)<sup>9</sup> ստեղծումը հրաշալի հնարավորություն էին ընձեռում Թուրքիային՝ վերջինիս քողի ներքո շարունակելու իրենց զորքերի ու կապի հետախուզական կայանների ներկայությունն Իրաքյան Քուրդիստանում, ավելին՝ օրինականացնելու ու ընդլայնելու դրանք, քանզի չիմացության կամ ցանկության դեպքում այդ ուժերը նույնացվում էին ԽՄՈՒ-ի հետ: ԽՄՈՒ-ի՝ գերազանցապես թուրքմաններից կազմված լինելը, նաև լեզվամշակութային տեսանկյունից էր դյուրացնում թուրք զինվորների և կապի ու հետախուզության աշխատակիցների մուտքն Իրաքյան Քուրդիստան, քանզի բուն Թուրքիայից եկած զինյալներից շատերը կարող էին հանդես գալ ԽՄՈՒ-ի քողի ներքո: Անկարայի համաձայնագրի 7-րդ հոդվածը որոշակի սողանք էր թուրքական զորքերի որոշակի կոնտինգենտի տեղաբաշխման, իսկ 8-րդ հոդվածը՝ կապի և հետախուզական կայանների գործունեության ծավալման համար: 1997 թ. սկսած՝ հիշյալ ուժերն ու կայանները սկսեցին ներկայացվել որպես Իրաքյան Քուրդիստանում Խաղաղության գործընթացն ապահովող մեխանիզմի բաղկացուցիչ մաս՝ ոչ մի կապ չունենալով ԽՄՈՒ-ի առաքելության հետ: Եվ նրանց մանդատը յուրաքանչյուր տա-

<sup>9</sup> Տե՛ս Վահրամ Պետրոսյան, Խաղաղության մոնիթորինգի ուժերի խնդիրն Իրաքյան Քուրդիստանում թուրքական ռազմական ներկայության համատեքստում, Ժամանակակից Եվրասիա, Եվրասիական խաչմերուկներ. նոր մարտահրավերներ, Հատոր II (2), Երևան, 2013, էջ 23-36:

րի նորացվում էր: Ընդ որում՝ «թուրքական կանոնավոր ուժերը տեղակայվեցին Քուրդիստանի Ռեգիոնի հյուսիս–արևմուտքում՝ ՔԴԿ–ի վերահսկողության գոտում, իսկ թուրքական հատուկ ուժերը գրասենյակներ հաստատեցին էլ ավելի հարավում՝ Էրբիլ և Սուլեյմանիե քաղաքներում»<sup>10</sup>: Իսկ Սուլեյմանիեն ՔՀՄ–ի վերահսկողության գոտում էր: Հստակ չէ, թե արդյոք Թուրքիան առանձին համաձայնագրեր է կնքել ՔԴԿ–ի ու ՔՀՄ–ի հետ Իրաքյան Քուրդիստանի տարածքում տեղաբաշխված թուրքական ռազմական խմբավորումների ու ռազմակայանների (ռազմական բազաների) և հատուկ զորքերի հրամանատարության կապի գրասենյակների ու հետախուզական բազաների ստեղծման վերաբերյալ, թե՛ այդ ամենը տեղ է գտել բանավոր կամ լուռ համաձայնությամբ: Ինդիրն այն է, որ նմանատիպ փաստաթղթի մասին պնդող հեղինակների գործերից հստակ չէ, թե նրանք, պնդելով որ այդ համաձայնագիրը կնքվել է 1996 թ. կամ 1997 թ., նկատի ունեն 1996 թ. կնքված Անկարայի համաձայնագիրն ու վերջինիս հիման վրա 1997 թ. ստեղծված ԽՄՈՒ–ն, թե նկատի ունեն Անկարայի համաձայնագրից դուրս՝ առանձին կնքված որևիցե այլ համաձայնագիր<sup>11</sup>: Ինչ վերաբերում է թուրքական զորքերի տեղակայման և ռազմակայանների հիմնադրման ուղ-

<sup>10</sup> Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq.–Terrorism Monitor Volume: 6 Issue: 6, March 24, 2008, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1)

<sup>11</sup> Նամըք Դուրուբանը նշում է 1996 թ. ստորագրված պայմանագրի և կայացված որոշման մասին: Տես Namik Durukan, Askeri üslerde kararı Kürt yönetimi verecek.– Milliyet.com.tr (04 Ekim 2012) <http://gundem.milliyet.com.tr/askeri-uslerde-karari-kurt-yonetimi-verecek/gundem/gundemdetay/04.10.2012/1606316/default.htm> Իսկ 1997 թ. պայմանագրի տարբերակն առաջ քաշող Գարեթ Ջենկինսը նշում է. «Առնվազն այսօր Իրաքի քրդերը հակված են համարելու հիշյալ պայմանագիրն իբրև իրենց պարտադրված մի ինչ–որ բան, որի կարիքն իրենք պարզապես չունեն, ՔԴԿ–ի և ՔՀՄ–ի միջև լուրջ բախումների բացակայության ավելի քան մեկ տասնամյակից հետո»: Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq.–Terrorism Monitor Volume: 6 Issue: 6, March 24, 2008, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1) Դրանից բխում է, որ հեղինակը թուրքական ռազմակայաններն ու հետախուզական և կապի կայանները (գրասենյակները) կապում է ԽՄՈՒ–ի հետ: Մինչդեռ 2008 թ. մարտին իր հոդվածը գրած Ջենկինսը պետք է տեղյակ լիներ, որ Խաղաղության մոնիթորինգի ուժերը պաշտոնապես լուծարվեցին 2004 թ. հոկտեմբերի 3–ին, իսկ թուրքական ռազմական խմբավորումների ու ռազմակայանների (ռազմական բազաների), ինչպես նաև կապի ու փոխազդեցության գրասենյակների և հետախուզական բազաների ներկայությունը Իրաքյան Քուրդիստանում պահպանվեց նաև ԽՄՈՒ–ի առաքելության ավարտից հետո:

ղությամբ աշխատանքների սկիզբն ու համաձայնագրի կնքումը 1992–1993 թթ. վերագրող թուրք պաշտոնաթող գեներալ Նեջաթի Էոզգենի այն պնդմանը, թե համաձայնագրի տակ ստորագրած անունների շարքը գլխավորում էր ՔՀՄ առաջնորդ և Իրաքի ներկայիս նախագահ Ջալալ Թալաբանին, ապա այլ անուններ չնշելն իսկ անհավաստի է դարձնում նման պնդումը, առավել ևս, որ ՔՀՄ առաջնորդը չէր կարող գլխավոր դեր խաղալ Մասուդ Բարզանու գլխավորած ՔԴԿ–ի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում թուրքական ռազմակայան կամ ռազմակայաններ հաստատելու գործում: Սակայն միանգամայն համաձայն ենք ռազմակայանների գործընթացի սկիզբը համարել առնվազն 1992–1993 թթ., քանզի Նեջաթի Էոզգենի կողմից պնդվող վարկածն ավելի համոզիչ է թվում, առավել ևս, որ վերջինս հիշյալ ծրագրերի անմիջական ծրագրավորողների ու իրականացնողների շարքում է եղել<sup>12</sup>:

<sup>12</sup> Հյուսիսային Իրաքում թուրքական ռազմակայանների ու հետախուզական բազաների ստեղծման իր պատմությունը ներկայացնող պաշտոնաթող գեներալ Նեջաթի Էոզգենը հանդես է գալիս ականատեսի դերում: Հատուկ նշելով, որ Հյուսիսային Իրաքում Թուրքիան տնօրինում է 10 ռազմակայաններ, պաշտոնաթող գեներալ Նեջաթի Էոզգենը (Necati Özgen) բացահայտման կարգով պնդում էր, որ թուրքական կողմն իր առաջին ռազմական բազաները (ռազմակայանները) հիմնել է 1993 թ.' թուրքական ժանդարմերիայի այն ժամանակվա գլխավոր հրամանատար, բանակի գեներալ Էշրեֆ Բիթլիսի և իր՝ Նեջաթի Էոզգենի համատեղ ու անմիջական ջանքերով: Էոզգենը հիշյալ խնդրի առնչությամբ «Վաթան» թերթին հետևյալ պարզաբանումն էր տալիս. «Հյուսիսային Իրաքում թուրքական զորքերի տեղակայման ուղղությամբ աշխատանքները սկիզբ առան 1993 թ.: Տարածաշրջանում միայն Բամերնիի բազան չէ, որ գոյություն ունի: Որքանով ես եմ հիշում, Բամերնին այս շրջանում մեր ունեցած ամենամեծ բազան է: Մեր ժամանակ Սալահեդդինում ու Դոհուկում էլ ռազմակայանային շրջաններ հիմնվեցին: Իսկ Քանըմասը ռազմակայանային շրջանը Իրաքի տարածքի մեջ է մտնում»: Էոզգենը նաև նշում է. «Ռազմակայանների հիմնադրման առաջին տարիներին՝ 1992–1993 թթ. փուլում գինվորներ էին տեղակայվում դասակի մակարդակով: Հետագայում տանկային ու մեխանիզացված միավորումներ էլ մտցվեցին (տեղակայվեցին): Նույնիսկ ԱՄՆ–ի ու ՄԱԿ–ի զորքերի այստեղ եղած ժամանակ թուրքական ռազմակայանները դուրս չբերվեցին Իրաքից: Իրաքում առկա ռազմակայանները մեր առաջապահ գործոնն են: Իսկ նրանց ամենամեծ խնդիրը PKK–ի սպառնալիքի դեմ հետախուզական գործունեության ծավալումն էր»: Mert İnan, ‘Çuval’ın asil nedeni Irak’taki üsler’ (03.10.2012),– <http://haber.gazetevatan.com/cuvalin-asil-hedefi/484995/1/Haber>

Այսպիսով՝ թուրքական ռազմակայանները դիտվում են նաև իբրև հետախուզական ցանցի ու շղթայի մի օղակ: Պատահական չէ, որ, անդրադառնալով 2012 թ. Իրաքի վարչապետ Նուրի ալ–Մալիքիի՝ «Մեր երկրում մենք չենք ընդունում օտարերկրյա զորքերի ներկայությունը» հայտարարությանը, որտեղ նա առաջին հերթին նկատի ուներ Թուրքիայի ռազմական ներկայությունն ու Հյուսիսային Իրաքում տեղակայված թուրքական զորքերն ու ռազմակայան-

Այսպիսով՝ թեև որոշակի աղբյուրներ Իրաքյան Քուրդիստանում տեղաբաշխված թուրքական ռազմական խմբավորումների ու ռազմակայանների (ռազմական բազաների), ինչպես նաև կապի ու փոխազդեցության գրասենյակների (liaison offices) գործունեության իրավական հիմքերը փորձում են կանխամտածված կամ չիմացության արդյունքում նույնացնել ԽՄՈՒ–ի հետ, թե՛ 1996 թ. Անկարայի համաձայնագիրը, թե՛ վերջինիս կենսագործմանն ուղղված հետագա հանդիպումներն ու քննարկումները չէին նախատեսում բուն թուրքական ռազմական խմբավորումների ու ռազմակայանների (ռազմական բազաների), ինչպես նաև կապի ու փոխազդեցության գրասենյակների ներկայություն: Նույնիսկ եթե անմիջական կապ ունենային ԽՄՈՒ–ի հետ, ապա նրանց գործունեությունը պետք է դադարեցվեր Խաղաղության մոնիթորինգի ուժերի լուծարումից հետո: Մինչդեռ, թեև Խաղաղության մոնիթորինգի ուժերը պաշտոնապես լուծարվեցին 2004 թ. հոկտեմբերի 3–ին, ԽՄՈՒ–ի լուծարումից ու վերջինիս թուրքական անձնակազմի Թուրքիա վերադառնալուց հետո էլ Թուրքիան շարունակեց մի քանի հազարի հասնող թուրքական այլ զորքեր պահել Հյուսիսային Իրաքի տարածքում՝ PKK–ի քուրդ զինյալների գործողությունները վերահսկելու ու կանխելու նպատակով: Ավելին, թուրքական ռազմական ներկայությունն Իրաքյան Քուրդիստանում եղել է նախքան Խաղաղության մոնիթորինգի ուժերի ստեղծումը, այն է՝ նախքան 1997 թ. ապրիլի 15–ը: Թուրքական փոքրաթիվ ռազմական ներկայություն հյուսիսային Իրաքում եղել է 1991 թ. և հատկապես 1993/1994–1995 թթ. սկսած<sup>13</sup>, սակայն

ները, էրզզենը նշում է. «Զախոյում, Սալահեդդինում, Դոհուկում և Սուլեյմանիեում մենք (Թուրքիան — Վ. Պ.) ռազմակայանների շրջաններ ու սպասարկող անձնակազմ ունենք: Եթե ռազմակայանները դուրս բերվեն, մենք չենք կարող տեղյակ լինել Հյուսիսային Իրաքում տեղ գտնող իրողությունների: Տարածաշրջանի հետ ունեցած մեր ողջ հետախուզական և ռազմավարական կապը մենք կկորցնենք: Թուրքական բազաները չեն կարող փակվել, քանի դեռ կա PKK–ն»: Նա նաև նշում է. «Այս քողարկված իրադարձության հետևում կանգնած իրական նպատակը՝ տարածաշրջանում մեր ռազմական ներկայությանը սպառնալն է»:

Mert İnan, ‘Çuval’ın asil nedeni Irak’taki üsler’ (03.10.2012),– <http://haber.gazetevatan.com/cuvalin-asil-hedefi/484995/1/Haber>

<sup>13</sup> PKK–ի դեմ ռազմական երկարատև, երբեմն ավելի քան մեկ ամիս տևող (մասնավորապես 1995 թ. Հաքուրքի (Էժդերի) գործողությունը տևեց 37 օր) գործողություններից հետո, թուրքական զորքերն ու հատուկ ստորաբաժանումները հեռանալով ոչ միայն զորքերի որոշակի խմբաքանակ էին թողնում, այլև հաջողությունից հետո Հյուսիսային Իրաքում բարձրացնում էին Թուրքիայի դրոշը՝ կարծես ֆիքսելով իրենց ներկայությունը: Հյուսիսային Իրաքում 1993–1995 թթ. թուրքական կողմի ձեռնարկած ռազմական գործողությունների, PKK–ի

վերոհիշյալ ռազմական, օժանդակ և հետախուզական ներկայությունը համակարգված ձև ստացավ ու գործոն դարձավ 1997 թ. սկսած:

Վերոհիշյալն ամենևին չի բացառում, որ առնվազն 1996–1997 թթ., օգտվելով իրավիճակից, Թուրքիան Իրաքյան Քուրդիստանի իշխանությունների՝ ՔԴԿ–ի և ՔՀՄ–ի հետ կնքեց մի պայմանագիր կամ ձեռք բերեց բանավոր համաձայնություն, որով օրինականացնում ու ընդլայնում էր իր ռազմական և հետախուզական ներկայությունը Իրաքյան Քուրդիստանում: Քրդական կողմն, ըստ էության, թույլատրեց զրահատեխնիկայով և հրետանիով զինված թուրքական 5 հազարանոց զորախմբի տեղաբաշխումը Հյուսիսային Իրաքի տարածքում: ՔԿԿ–ի առաջնորդ Աբդուլլա Օջալանի ձեռքակալումից հետո՝ 1999 թ. սկսած այդ զորախմբի թվաքանակը գնալով նվազեցվեց, սակայն 2004 թ. ՔԿԿ–ի նոր ակտիվացումից հետո այդ ուժերի թվաքանակն Իրաքյան Քուրդիստանում կրկին սկսեց աճել: Ներկայումս Հյուսիսային Իրաքի տարածքում տեղաբաշխված է ավելի քան 2,5 հազարանոց (2008–ին՝ մոտավորապես 2 հազար) թուրքական ռազմական կոնտինգենտ (հատուկ նշանակության զորախումբ, կոմանդոս և տանկային զորախումբ), որի զգալի մասը կենտրոնացված է 4 հիմնական բազաներում՝ Բամերնիում (որտեղ նախկինում իրաքյան ռազմական օդանավակայան էր), Բատուֆայում, Քանրմասըում և թուրքական բանակի կողմից Դիլմեն Թեփե անվանակոչված լեռնային վայրում: Կա նաև տանկային զորախումբ, որի հիմնական մասը նույնպես Բամերնիում է<sup>14</sup>: Սադամի հեռացումից հետո թուրքական կողմը հասկանում էր, որ ԽՄՈՒ–ի լուծարման արդյունքում Իրաքյան Քուրդիստանի իշխանությունները կարող են պահանջել իրենցից դուրս բերելու կայանած թուրքական զորքերը հյուսիսային Իրաքի տարածքից՝ փակելով թուրքական ռազմակայանները: Նման զարգացումները կանխելու նպատակով դեռ 2006 թ. թուրքական կողմն արդիականացրեց Բամերնիի բազան՝ ստեղծելով նույնիսկ ուղղաթիռներ ընդունելու հնարավորություն և ակնարկելով, որ ամենևին մտադիր չէ մոտ

գործունեության և ճամբարների մասին տե՛ս գործողությունների անմիջական մասնակից, դիվիզիայի գեներալ (գեներալ–լեյտենանտ) Օսման Փամուքօղլուի հուշերը. Osman Pamukoğlu, Unutulmalar dışında yeni bir şey yok: Hakkari ve Kuzey Irak dağlarındaki askerler.– İstanbul: Harmoni yayıncılık, 2004.– 384 s.

<sup>14</sup> Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq.–Terrorism Monitor Volume: 6 Issue: 6, March 24, 2008, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1)

ապագայում հեռանալու Իրաքի տարածքից: Չնայած թուրքական զորքերը դուրս բերելու ու ռազմական բազաները կամ դրանցից մի քանիսը փակելու Քուրդիստանի խորհրդարանի ու քուրդ բարձրաստիճան պաշտոնյաների պահանջներին (որոնք իրենց բարձրակետին հասան 2008 թ. մարտին՝ հյուսիսային Իրաքում թուրքական զորքերի՝ Քրդական աշխատավորական կուսակցության զինյալների դեմ ծավալվող ցամաքային գործողությունների պայմաններում)՝ Թուրքիայի բարձրաստիճան զինվորականությունն ու Գլխավոր շտաբը մերժեցին հիշյալ բոլոր պահանջներն ու մինչև օրս շարունակում են օգտագործել Իրաքյան Քուրդիստանի տարածքում թուրքական ռազմական բազաներ ունենալու ծանրակշիռ լծակը<sup>15</sup>:

Իրաքյան Քուրդիստանում թուրքական ռազմական բազաներն (ռազմակայաններն) ու ռազմական հենակետերն առնվազն քանակային առումով գնալով աճում են: Եթե 2008 թ. որոշակի հավաստի աղբյուրների վկայակոչմամբ խոսվում էր Իրաքի (գերազանցապես Իրաքյան Քուրդիստանի) տարածքում թուրքական 4 կամ 6 ռազմական բազաների (ռազմակայանների) ու ռազմական հենակետերի առկայության մասին (ընդգծելով Իրաքի տարածքում լրացուցիչ ևս 11 թուրքական ռազմակայաններ ստեղծելու Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի մտադրությունների մասին)<sup>16</sup>, ապա 2010 թ. սկզբներին խոսվում էր այն մասին, որ Իրաքյան Քուրդիստանի տարածքում առկա են թուրքական 9 ռազմակայաններ ու ռազմական հենակետեր<sup>17</sup>: Իսկ արդեն 2012 թ. հոկտեմբերի դրությամբ Բաղդադի համար ընդունված փաստ

<sup>15</sup> Turkish Army Refuses to Close Bases in Northern Iraq.– Today’s Zaman, 06 March 2008, <http://www.todayzaman.com/tz-web/detaylar.do?load=detay&link=135688>

<sup>16</sup> 4 ռազմակայանների շարքում էին նշվում Բամերնին (որտեղ նախկինում իրաքյան ռազմական օդանավակայանն էր՝ ներառյալ թուրքական տանկային զորախումբը, որի հիմնական մասը նույնպես Բամերնիում է), Բատուֆան, Քանըմասը և թուրքական բանակի կողմից Դիլմեն Թեփե անվանակոչված լեռնային վայրը: Տես Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq, Terrorism Monitor Volume: 6 Issue: 6, March 24, 2008, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1): Նշված վեց ռազմակայանների շարքում էին հիշատակվում Թուրքիայի սահմանից շուրջ 20 կմ հեռավորության գոտու մեջ մտնող «Բամերնիի մայր ռազմակայանը» և վերջինիս հետ կապի մեջ գտնվող Սերամիշի, Քանըմասըի, Բեգովայի, Ամադիայի և Բատուֆայի ռազմակայանները, որտեղ ավելի փոքրաթիվ զորախմբեր էին տեղակայվել: TSK'nın Kuzey Irak'ta 6 üssü var (02. 22. 2008), <http://www.cnntrk.com/2008/turkiye/02/22/tsknin.kuzey.irakta.6.ussu.var/431089.0/index.html>

<sup>17</sup> 9 Turkish Military Bases Located Inside Iraqi Kurdistan, – PressTV (Uploaded on February 14, 2010), <http://www.presstv.com>, <http://www.youtube.com/watch?v=un5ec3ieMYs>

էր Իրաքի տարածքում թուրքական 16 ռազմական բազաների առկայությունը<sup>18</sup>: Իր հերթին, Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանիին մոտ կանգնած աղբյուրի համաձայն, նույն 2012 թ. հոկտեմբերի դրությամբ Թուրքիան Իրաքյան Քուրդիստանի տարածքում 8 ռազմակայան և հետախուզական բնույթի 12 կապի բյուրո (գրասենյակ) ունի<sup>19</sup>:

Իրաքի լարված ներքաղաքական իրավիճակի բնական արդյունքն է թե՛ Իրաքյան Քուրդիստանի տարածքում թուրքական ռազմական բազաների (ռազմակայանների) ու ռազմական հենակետերի քանակային աճը, թե՛ այն իրողությունը, որ Իրաքի՝ «կենտրոնական» և Քուրդիստանի ռեգիոնալ կառավարությունները միասնական չեն գործում իրաքյան տարածքում թուրքական ռազմական բազաների առկայության ու հյուսիսային Իրաքում թուրքական զորքերի հաճախակի ռազմական ներխուժումների հարցում:

Նախկինում (2003–2008 թթ. ընթացքում) Քուրդիստանի խորհրդարանն ու ՔՌԿ–ն էին ակտիվորեն արձարժում Իրաքյան տարածքում ԽՄՈՒ–ի լուծարման, թուրքական ռազմական բազաների փակման և հյուսիսային Իրաքում թուրքական զորքերի հաճախակի ռազմական ներխուժումները բացառելու հարցը: Ներկայումս թուրք–իրաքյան և Էրբիլ–Բաղդադ հարաբերությունների ծայրահեղ լարվածության պայմաններում, բնականաբար, արդեն իրաքյան կենտրոնական կառավարությունն է ավելի շատ արձարժում այդ խնդիրը:

Այսպես, դեռ 2008 թ. փետրվարի 26–ին Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանը հաստատեց մի որոշում, որի համաձայն՝ քրդական օրենսդիր մարմինը միջնորդությամբ էր հանդես գալիս գործադիրի՝ Քուրդիստանի ռեգիոնալ կառավարության (ՔՌԿ–ի)՝ առջև՝ կոչ անելով վերջինիս պահանջելու Հյուսիսային Իրաքում թուրքական բոլոր ռազմակայանների փակումը<sup>20</sup>: Քրդական աշ-

<sup>18</sup> Shayma Adel, Baghdad to Rethink Allowing Turkish Military Bases in Iraq,– Al-Monitor, October 8, 2012, <http://www.al-monitor.com/pulse/politics/2012/10/iraq-16-turkish-military-bases-on-our-territory.html>, Տես նաև Türk üslerine Kürt desteği!, Vatan (10.10.2012)–<http://haber.ekolay.net/haber/T%C3%BCrk-%C3%BCslerine-K%C3%BCrt-deste%C4%9Fi/64/1059090.aspx>

<sup>19</sup> Namık Durukan, Askeri üslerde kararı Kürt yönetimi verecek,– Milliyet.com.tr (04 Ekim 2012) <http://gundem.milliyet.com.tr/askeri-uslerde-karari-kurt-yonetimi-verecek/gundem/gundemdetay/04.10.2012/1606316/default.htm>: Թուրք պաշտոնաթող գեներալ Սեջաթի Էոզգենն իր հերթին 2012 թ. պնդում էր, որ Հյուսիսային Իրաքում Թուրքիան 10 ռազմակայան է տնօրինում: Mert İnan, ‘Çuval’ın asil nedeni Irak’taki üsler’ (03.10.2012), <http://haber.gazetevatan.com/cuvalin-asil-hedefi/484995/1/Haber>

<sup>20</sup> Տես Today’s Zaman, February 27, 2008: Իսկ արդեն 2008թ. մարտին հյուսիսային



խատավորական կուսակցության (PKK) զինյալների դեմ Հյուսիսային Իրաքի տարածքում թուրքական զորքերի իրագործած ներխուժման ընթացքում կայացված հիշյալ որոշումը, փորձագետների կարծիքով, «ոչ միայն ցույց տվեց ՔՌԿ-ի հաճախ հակասական վերաբերմունքը իր կողմից փաստացի վերահսկվող տարածքներում PKK-ի ներկայության հարցում, այլ նաև ցույց տվեց Իրաքի քրդերից շատերի այն կասկածը, որ PKK-ի դեմ պատերազմը Թուրքիան օգտագործում է իբրև պատրվակ իրաքցի քրդերի անկախության հեռանկարները բացառելու համար»<sup>21</sup>:

Գործնականում ՔՌԿ-ն իր զինանոցում շատ քիչ ազդեցիկ լծակներ ուներ, որ կարողանար ստիպել Թուրքիային փակելու Իրաքյան Քուրդիստանում ունեցած իր ռազմակայանները: ՔՌԿ-ի թե՛ ռազմական, թե՛ քաղաքական ներուժը բավարար չէին որոշման կենսագործումը լուրջ հիմքերի վրա դնելու համար: Պարադոքսն այն էր, որ ժամանակին թուրքական ռազմական ներկայությանը համաձայնած քրդական իշխանություններն այժմ թուրքական կողմից ուղերձներ էին ստանում, որ ոչ թե իրենք՝ ՔՌԿ-ն, այլ Բաղդադի կենտրոնական կառավարությունն է իրավասու այլ պետությունների հետ Իրաքի հարաբերությունների կարգավորման համար: Մինչդեռ Կենտրոնական կառավարությունն իր հերթին այն ժամանակ չէր ցանկանում ռիսկի դիմել ու պահանջել թուրքական բազաների փակումը, քանզի դա միանշանակ կարեր թուրք-իրաքյան հարաբերությունները: Նման պայմաններում Թուրքիայի գլխավոր շտաբը ոչ միայն վստահաբար մերժեց ու անտեսեց քրդական կողմի պահանջները, այլև հայտարարեց, որ կմնա Հյուսիսային Իրաքում այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է PKK-ն արմատախիլ անելու համար<sup>22</sup>: Փա-

Իրաքում թուրքական զորքերի՝ Քրդական աշխատավորական կուսակցության զինյալների դեմ ծավալվող ցամաքային գործողությունների պայմաններում Քուրդիստանի խորհրդարանի Էրբիլում տեղ գտած արտակարգ նստաշրջանից հետո խորհրդարանի փոխխոսնակ Քեմալ Քերքուկին հնչեցրեց Իրաքյան Քուրդիստանի տարածքում (Բամերնի, Բատուֆա, Քանըմասը և Դիվեն Թեփե բազաներում) տեղաբաշխված թուրքական զորքերը դուրս բերելու պահանջը:

<sup>21</sup> Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq, Terrorism Monitor, March 24, 2008, Volume: 6 Issue: 6, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1)

<sup>22</sup> Այդ ժամանակ է, որ լուրեր տարածվեցին (Today's Zaman, February 29, 2008) այն մասին, որ PKK-ի՝ Թուրքիայի տարածք ներթափանցելու հիմնական երթուղիները փակելու նպատակով Թուրքիայի գլխավոր շտաբը ծրագրեր է մշակում Իրաքի տարածքում լրացուցիչ ևս 11 թուրքական ռազմակայանների ստեղծման ուղղությամբ: Թուրքիայի կառավարության խոսնակ Ջեմիլ Զիչեկը

կուղային իրավիճակն ակնհայտ էր: Մինչդեռ նախկինում քրդական կողմն անհամեմատ ավելի լավատես էր Իրաքյան Քուրդիստանից թուրքական զորքերը ցանկության դեպքում հեռացնելու հարցում<sup>23</sup>:

ՔՌԿ-ի՝ իր վերահսկողության ներքո գտնվող տարածքում թուրքական ռազմական ներկայությունը բացառելու վերջին հուսահատ ճիգերից մեկն էլ 2008 թ. վերջերին ԱՄՆ-ին՝ Իրաքյան Քուրդիստանի տարածքում ռազմակայաններ հիմնելու մասին արված առաջարկն էր: 2008 թ. դեկտեմբերին լրանում էր ՄԱԿ-ի մանդատի ժամկետը և 2008 թ. աշնանը Վաշինգտոնը Բաղդադի հետ վարում էր բանակցություններ՝ ձգտելով կնքել մի պայմանագիր, որն իրավական հիմքեր կտար ամերիկյան զորքերին այդ ժամկետից հետո էլ մնալու Իրաքում: Պայմանագրի կետերն

հետագայում հերքեց այն պնդումը, թե Թուրքիան պատրաստվում է Հյուսիսային Իրաքում անվտանգության մի գոտի ստեղծել՝ թերևս հասկանալով, որ նման իրողությանը դեմ կլինեն թե՛ Իրաքի կենտրոնական կառավարությունն ու ՔՌԿ-ն, թե՛ ԱՄՆ-ը: Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq.– Terrorism Monitor, March 24, 2008, Volume: 6 Issue: 6, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1)

<sup>23</sup> Մասնավորապես դեռ 2006 թ. ապրիլի 26-ին Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանի իրաքյան բաժնի (RFE/RL Iraq) վերլուծաբան Քեթլին Ռիդոլֆոյին տրված հարցազրույցում ՔՌԿ-ի Միջազգային հարաբերությունների գծով պատասխանատու Սաֆֆին Դիզային, հստակ չպատասխանելով ռազմակայանների առնչությամբ տրված հարցերին, միաժամանակ ցանկանում էր վստահեցնել, որ թուրքական ռազմական ներկայությունն ու ռազմակայանները ոչ մի խնդիր չեն ներկայացնում: «Ինչ կարգավիճակ ունեն թուրքական ուժերն Իրաքյան Քուրդիստանի ներսում: Մենք գիտենք, որ Քուրդիստանում, օրինակ՝ Բամերնիում, տեղակայված թուրքական զորքեր կան» հարցին Սաֆֆին Դիզային պատասխանեց. «Ինչպես գիտեք, 1992 թ. սկսած՝ անվտանգության հարցերով համագործակցության և փոխըմբռնման մի էական փուլ տեղ գտավ և 1990-ականների կեսերից՝ 1996–1997 թթ., այնտեղ՝ Բամերնիում, իրենց ներկայությունն են պահպանում մոտ 1000-ի հասնող զորքերը: Եվ մենք չունենք խնդիրներ նրանց հետ, և նրանք ձգտում են ուշադրություն չգրավել: Եվ ցանկացած ժամանակ, երբ անհրաժեշտություն կլինի, որ նրանք հեռանան, կամ երբ դաշնային կառավարությունը կխնդրի օտարերկրյա զորքերին հեռանալ, ես համոզված եմ, որ թուրքական կողմը կհեռանա... Արդար լինելու համար նշեմ, որ մենք չունենք որևիցե խնդիրներ նրանց հետ (ընդգծումը մերն է՝ Վ.Պ.)»: Իսկ Քեթլին Ռիդոլֆոյի՝ «Երբ թուրքական այն զորքերը, որոնք տեղակայված են Իրաքի Քուրդիստանում, դուրս են գալիս իրենց բազայից՝ գործողությունների, կամ արդյոք որևիցե պայմանավորվածություն, որ նրանք պետք է ձեռք բերեն ՔՌԿ-ի թույլտվությունը» հարցին Սաֆֆին Դիզային տվեց հետևյալ պատասխանը. «Ո՛չ, նրանք ռազմակայանում են, և նրանք որևիցե գործողություններ չեն իրականացնում: Նրանք այնտեղ գործունակա՛ն իրավասություններ չունեն»:

Iraq: Kurdish Official Discusses Relations With Turkey (April 27, 2006), <http://www.rferl.org/content/article/1067995.html>

ԱՄՆ–ին Իրաքի տարածքում ռազմական բազաներ, ճամբարներ ու կալանավայրեր կառուցելու և ունենալու իրավունք պետք է վերապահեին: Ավելին, ԱՄՆ զինվորները, քաղաքացիները և կապալառուները դատական հետապնդման իմունիտետ պետք է ունենային բազաների տարածքում կամ ծառայողական պարտականությունները կատարելիս հանցանք գործելու դեպքում: Սակայն այսպես կոչված Ջորջերի կարգավիճակի վերաբերյալ համաձայնագրի (Status of Forces Agreement/SOFA) դեմ հանդես եկան Իրաքի քաղաքական և կրոնական մի շարք գործիչներ, որոնք դրանում տեսնում էին «Իրաքի սուվերենության խախտման» վտանգը: Մինչդեռ Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին նշել էր, որ ամերիկյան զորքերը կարող են Իրաքյան Քուրդիստանում բազաներ հիմնել նույնիսկ, եթե չհաջողվի Բաղդադի հետ կնքել Ջորջերի կարգավիճակի վերաբերյալ վիճելի համաձայնագիրը<sup>24</sup>: Քրդական կողմի հիշյալ ծրագրերը, սակայն, չիրականացան: Իսկ թուրքական ռազմակայաններն ու հենակետերը, ինչպես նաև հատուկ զորքերի հրամանատարության կապի գրասենյակներն ու հետախուզական բազաները փակելու համար ՔՌԿ–ի հիմնավորումները նվազում էին: Բացի այդ, հաշվի առնելով Իրաքից ամերիկյան զորքերի հեռանալու հեռանկարը (ինչը տեղի ունեցավ 2011 թ.), ՔՌԿ–ն պետք է նվազագույնի հասցներ իրանական ու թուրքական սպառնալիքը՝ միաժամանակ ձգտելով Իրանի ազդեցության մեծացումը հավասարակշռել Իրաքյան Քուրդիստանում Թուրքիայի ներգրավվածությամբ: Ստեղծված պայմաններում ՔՌԿ–ն չէր կարող բացահայտորեն հանդես գալ ընդդեմ Թուրքիայի:

Թուրքիան, դեռ 1990–ական թթ. կեսերից սկսած, Հյուսիսային Իրաքում անվտանգության գոտի (“Güvenlik Bölgesi» կամ “tampon bölgesi”) ստեղծելու մտադրություն ունի, և առկա ռազմակայաններն այդ ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքի արդյունք են:

Իրաքյան Քուրդիստանում Թուրքիայի ռազմական բազաների ու հենակետերի, ինչպես նաև հատուկ զորքերի հրամանատարության կապի գրասենյակների ու հետախուզական բազաների

<sup>24</sup> «Խաբաթ» թերթը մեջբերում էր Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանու հետևյալ խոսքերը. «Ներկայումս բոլոր ճիգերն են գործադրվում հիշյալ պակտը կնքելու համար: Սակայն եթե պակտը չկնքվի և եթե ԱՄՆ–ը խնդրի իր զորքերը պահել Քուրդիստանում, կարծում եմ, Քուրդիստանի պառլամենտը, Ժողովուրդը և կառավարությունը ջերմորեն կողջունեն դա»: Barzani: Kurdistan Will Allow US Bases, <http://www.campaigniran.org/casmii/index.php?q=node/6741>

տարածման գործում էական դեր խաղաց 2008–2013 թթ. տեղ գտած Թուրքիա–ՔՌԿ աննախադեպ համագործակցությունը, որն ընթանում է Բաղդադ–Էրբիլ և Անկարա–Բաղդադ հարաբերությունների սրման պայմաններում: Հետևաբար Իրաքյան տարածքում թուրքական ռազմական բազաների առկայությունն ու հյուսիսային Իրաքում թուրքական զորքերի նախկինում (մինչ Թուրքիայում սկսված քրդական գործընթացները) սովորական բնույթ կրող և ապագայում չբացառվող ռազմական ներխուժումները ներկայումս մտահոգում են առաջին հերթին Բաղդադի կենտրոնական իշխանություններին և հիշյալ հարցն իր ողջ սրությամբ դրվում է առաջին հերթին վերջինիս կողմից:

Իրաքի և Թուրքիայի միջև հարաբերությունների լարվածության պայմաններում 2012 թ. հոկտեմբերի 2–ին իրաքյան կառավարությունը որոշեց չեղյալ հայտարարել բոլոր այն պայմանագրերը, որոնք Իրաքի տարածքում օտարերկրյա զորքերի ու նրանց ռազմական բազաների կամ հենակետերի առկայության հնարավորություն էին տալիս: Ավելին, Իրաքյան կառավարությունը երկրի խորհրդարանին խորհուրդ տվեց չեղյալ հայտարարելու և չերկարաձգելու բոլոր այն պայմանագրերն ու պայմանավորվածությունները, որոնք Իրաքի տարածքում օտարերկրյա զորքերի ու նրանց ռազմական բազաների կամ ռազմական հենակետերի ներկայության հնարավորություն էին տալիս՝ հիմք հանդիսանալով նման ներկայությունն արդարացնելու համար: Ինքնին հասկանալի էր, որ հիշյալ որոշումն առաջին հերթին ուղղված էր Թուրքիայի դեմ, քանզի թուրքական կառավարությունն իր հերթին դիմել էր ԹԱՄԺ–ին ևս մեկ տարով սահմանից այն կողմ գործողություններ իրագործելու վերաբերյալ իրեն շնորհված լիազորությունները երկարաձգելու խնդրանքով<sup>25</sup>:

Իրաքյան Քուրդիստանում իր ազդեցությունը կորցրած Բաղդադի կենտրոնական կառավարությունը չի կարող հուսալու այս հարցում կստանա ՔՌԿ–ի աջակցությունը: Պատճառը ոչ միայն ՔՌԿ–Թուրքիա սերտ համագործակցությանն է հանգում: Հարցն այն է, որ վերոհիշյալ խնդրի լուծման Բաղդադի կողմից առաջարկվող տարբերակը միանգամայն անընդունելի է ՔՌԿ–ի համար: Պնդելով, որ Իրաքի տարածքում թուրքական 16 ռազմական բազաներ են գործում, որ պետք է պարզել, թե «ինչու է

<sup>25</sup> Namik Durukan, Üslerinizi kaptın askeri çekin, – Milliyet.com.tr (03 Ekim 2012), Namik Durukan, Iraq to Expel Foreign Troops, End Turkish Military Presence, Al-Monitor, October 3, 2012 <http://www.al-monitor.com/pulse/security/01/10/iraq-ejects-turkish-armed-forces.html>

ՔՌԿ-ն լուծում հիշյալ բազաների ներկայության հարցում» և որոշելով վերաքննել ու վերանայել Իրաքի տարածքում թուրքական ռազմական ներկայության վերաբերյալ իրաքյան նախորդ ռեժիմի ու Թուրքիայի միջև կնքված համաձայնագրերը (դրանց առկայության դեպքում), ինչպես նաև նշելով, որ երկրի «հյուսիսային տարածքները մշտապես ենթարկվում են թուրքական հարձակումների» և որ թուրքական կողմի «նման վարքը նոր չէ» ու երկար ժամանակ առկա խնդիրները շտապ լուծման կարիք են զգում՝ Իրաքի կենտրոնական կառավարությունը ՔՌԿ-ի հետ իր բանակցություններում «պատրաստակամություն է հայտնում մոբիլիզացնելու բանակն այդ տարածքներում, որպեսզի պաշտպանի նրանց հարձակումներից»<sup>26</sup>: Այսպիսով՝ թուրքական ներկայությունը բացառելու նպատակով կամ այդ քողի ներքո Իրաքի իշխանությունները ձգտում են ապահովել իրենց ռազմական ներկայությունը հյուսիսային Իրաքում ու մասնավորապես Իրաքյան Քուրդիստանում, տարբերակ, որին, բնականաբար դեմ է Քուրդիստանի ռեգիոնալ կառավարությունը<sup>27</sup>:

Թուրք ու օտարերկրյա փորձագետները գտնում են, որ Իրաքյան կողմի համար գրեթե անհնարին կլինի հիշյալ որոշման իրագործումը, և որ այդ քայլով Իրաքը պարզապես փորձում է միջազգային ասպարեզում թուլացնել Թուրքիայի դիրքերը: Անկարայում գործող Միջին Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի իրաքյան հարցերով փորձագետ Բիլգայ Դումանը մասնավորապես նշում էր. «Նուրի ալ-Մալիքիի կառավարությունը չունի բավարար ուժ ինչպես ռազմական ճանապարհով, այնպես էլ քաղաքականապես Թուրքիայի գործողությունները կանխելու համար: Ավելին, կենտրոնական կառավարության անվտանգության ուժերը չունեն որևիցե ազդեցություն Հյուսիսային Իրաքում: Այս որոշումը չի ունենա որևիցե գործնական ազդեցություն: Դա մի քայլ է, որը միտված է էլ ավելի սրելու երկկողմանի հարաբերությունները: Իրաքը պարզապես խորամանկում է»<sup>28</sup>:

Թուրքական կողմի տեսակետներն այս հարցի առնչությամբ ամբողջականանում են տարբեր գործիչների ու փորձագետների հետևյալ դատողություններով.

<sup>26</sup> Shayma Adel, Baghdad to Rethink Allowing Turkish Military Bases in Iraq,– Al-Monitor, October 8, 2012, <http://www.al-monitor.com/pulse/politics/2012/10/iraq-16-turkish-military-bases-on-our-territory.html>

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Sinem Cengiz, Turkish Military to Stand Ground Despite Iraq’s Move to Expel Foreign Forces, 3 October 2012, [http://www.todayzaman.com/newsDetail\\_getNewsById.action?newsId=294183](http://www.todayzaman.com/newsDetail_getNewsById.action?newsId=294183)

- «Թուրքական զորքերն Իրաքում օպերացիոն նպատակներով չեն տեղաբաշխված, այլ՝ թիկունքային»:

- «Թուրքիան պարտավորված լինելու պատճառով է, որ պահպանում է իր ներկայությունն Իրաքում: Եթե իրաքյան կառավարությունը կարողանար կանխել ահաբեկչական ներթափանցումները դեպի Թուրքիա, վերջինս Իրաքում իր ռազմական [գործողությունների] մանդատը երկարաձգելու կարիքը չէր զգա»: Հետևաբար «Իրաքում թուրքական զորքերի ներկայության վերաբերյալ դիտարկումներ անելու փոխարեն [Իրաքի] կենտրոնական կառավարությունը պետք է կանխեր այն տարրերին, որոնք աջակցում են PKK-ին»:

- «Եթե Իրաքը թույլ է տալիս ահաբեկիչներին ապաստան գտնել իր երկրում, ապա դա դիտվում է իբրև թշնամական գործողություն՝ ընդդեմ Թուրքիայի: Սպառնալիքի դեպքում իրավական տեսանկյունից Թուրքիային ինքնապաշտպանության և ռազմական միջոցառումներ ձեռնարկելու իրավունք է վերապահվում»:

- Պայմանագիրը, որ Իրաքի կառավարությունը ցանկանում է չեղյալ համարել, ստորագրվել է Սադամ Հուսեյնի կողմից 1995 թվականին, որը PKK –ին հետապնդելու նպատակով թուրքական ուժերին Իրաքի հյուսիսային շրջաններում ներկայություն ունենալու հնարավորություն է ընձեռում<sup>29</sup>:

Վերջին պնդումը, սակայն, քիչ հավանական է, քանզի նախկինում (մինչ Սադամ Հուսեյնի հեռացումն իշխանությունից ու նրա մահապատիժը) վերջինիս հետ կնքված նմանատիպ պայմանագրի կամ ձեռք բերված բանավոր պայմանավորվածության մասին ոչ մի հիշատակում չկար: Ավելին, 1995–1997 թթ. (և ընդհուպ մինչև 2003 թվականը) Իրաքը բազմիցս իր բողոք–դիմումներն ու նամակներն է ներկայացրել ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդին՝ հյուսիսային Իրաքում Թուրքիայի ռազմական (տրանս–սահմանային) գործողությունների կապակցությամբ՝ որակելով թուրքական ներխուժումներն ու օդային հարվածներն իբրև իր սուվերետության, տարածքային ամբողջականության և օդային տարածքի խախտում և ակնհայտ ագրեսիայի գործողություն: Ընդ որում՝ դեռ 1996 թ. իրաքյան կողմը դատապարտում էր նաև Թուրքիայի կողմից Հյուսիսային Իրաքում բուժերային գոտիների ստեղծումը՝ դա որակելով իբրև իրաքյան տարածքի օկուպացիա<sup>30</sup>: Իր հերթին

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Funda Keskin, Turkey’s Trans–Border Operations in Northern Iraq: Before and After the Invasion of Iraq,– Research Journal of International Studies – Issue 8 (November, 2008), pp. 68–69. Բուժերային գոտու առնչությամբ Թուրքիան բազմիցս հայտա-

Թուրքիան իր պատասխան նամակներում, այն է՝ պաշտոնական նամակագրությունում երբևիցե իր գործողությունները հիմնավորող փաստարկների շարքում չի հիշատակել 1990-ական թթ. Իրաքի հետ կնքված նմանատիպ համաձայնագրեր կամ Իրաքի առաջնորդ Սադդամ Հուսեյնի հետ ձեռք բերված որևիցե բանավոր պայմանավորվածություն: Պայմանավորվածությունը ոչ թե Թուրքիայի և Իրաքի, այլ Թուրքիայի և Իրաքյան Քուրդիստանի զույգ կուսակցությունների (ՔԴԿ և ՔՀՄ) միջև կարող էր ձեռք բերվել: Ինքը՝ ՔԴԿ վարչապետ Նեչիրվան Բարզանին նույնպես նշել է, որ Թուրքիային՝ քրդական շրջանում ռազմակայաններ պահելու հնարավորություն ընձեռող համաձայնագիրը գործում է 1997 թ. սկսած<sup>31</sup>: Եվ այն (Թուրքիա-ՔԴԿ և ՔՀՄ համաձայնագիրը կամ պայմանավորվածությունը) տրամաբանական է, քանզի գերազանցապես ՔԴԿ-ն ու մասամբ ՔՀՄ-ն էին վերահսկում այն տարածքները, որտեղ ի հայտ եկան թուրքական ռազմական խմբավորումներն ու ռազմակայանները (ռազմական բազաները) և հատուկ զորքերի հրամանատարության կապի գրասենյակներն ու հետախուզական բազաները:

Թուրքական ռազմակայաններն ու ռազմական հենակետերը դուրս բերելու վերաբերյալ Իրաքյան կառավարության որոշմանը Թուրքիան պաշտոնապես չարձագանքեց և անտեսեց այն: Թուրքիայի խորհրդարանը՝ ԹԱՄԺ-ը, պարզապես երկարաձգեց PKK-ի դեմ հյուսիսային Իրաքում ռազմական գործողություններ վարելու թուրքական կառավարության լիազորությունները, որոնց հերթական ժամկետը լրանում էր 2012 թ. հոկտեմբերի 17-ին:

Թեև Իրաքյան Քուրդիստանի տարածքում տեղակայված թուրքական ռազմական բազաներն (ռազմակայանները) ու ռազմական հենակետերը ներկայումս առաջին հերթին մտահոգում են Բաղդադի կենտրոնական կառավարությանը, մեր կարծիքով, վերջինիս վերաբերող որոշակի որակական և թվային տվյալները չեն կարող չանհանգստացնել նաև ՔԴԿ-ին: Մասնավորապես.

րարել է, որ երբեք չի խախտել Իրաքի տարածքային ամբողջականությունը, քանզի սահմանի երկայնքով ձգվող անվտանգության գոտու նեղ շերտը ոչ թե Իրաքի տարածքային ամբողջականությունը խախտելու, այլ Իրաքից Թուրքիայի տարածք ահաբեկիչ-զինյալների ներթափանցումը կանխելու նպատակ է հետապնդում: Թուրքիան նաև հայտարարել է, որ Իրաքի տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, անկախության և քաղաքական միասնության պահպանման կողմնակից է: Տե՛ս նույն տեղում:

<sup>31</sup> Namık Durukan, Üslerinizi kaptın askeri çekin,–Milliyet.com.tr (03 Ekim 2012), Namık Durukan, Iraq to Expel Foreign Troops, End Turkish Military Presence,–Al-Monitor, October 3, 2012 <http://www.al-monitor.com/pulse/security/01/10/iraq-ejects-turkish-armed-forces.html>

➤ Մոտ 1000 զինծառայող և 20 Լեռպարդ տանկեր են տեղակայվել թուրքական սահմանից ոչ հեռու գտնվող Բատուֆայի և Քանըմասըի միջև:

➤ Մոտ 10 տանկ և 1000 զինվորներ են տեղակայված Բամերնիում: Տանկերի մի մասը կոչված է պաշտպանելու օդանավակայանը, իսկ մյուսները տեղաբաշխված են բլրի գագաթներին, որոնցից թուրքական կողմը փորձում է վերահսկել Դոհուկը, Սերսինգը, Գարեն և Մեթինան:

➤ Օդանավակայանն ունի նաև ուղղաթիռների թռիչքի ու վայրէջքի հարթակ, որը պարբերաբար օգտագործվում է մատակարարումների ու անձնակազմի հերթագայության (ռոտացիայի) համար:

➤ Երեք տանկեր տեղաբաշխված են Զաբի շրջանում գտնվող Ամադիա քաղաքի կենտրոնում:

➤ Մոտ 10 տանկ և ավելի քան 500 զինվորներ են տեղաբաշխված Շելադիզեի ու Դերալուքի մոտակայքում<sup>32</sup>:

Պատահական չէ, որ գերազանցապես ՔԴԿ-ն ներկայացնող բարձանիական փեշմերգաները քրդական ռազմական անցակետեր, հենակետեր ու առաջապահ ուղեկալներ են ստեղծել իրաքյան Քուրդիստանում թուրքական զինված ուժերի հենակետերի ընդլայնման գործընթացը վերահսկելու նպատակով: Վերջիններս էրբիլում գտնվող իրենց շտաբին են պարբերաբար զեկուցում թուրքական ուժերի գործունեության վերաբերյալ<sup>33</sup>:

2004 թվականից սկսած՝ անմիջականորեն թուրքական բազաների հարևանությամբ կառուցված քրդական փեշմերգաների հենակետերը, անցակետերն ու առաջապահ ուղեկալները կոչված են ոչ միայն վերահսկելու թուրքական բազաների գործունեությունը, այլև կանխելու վերջիններիս՝ քրդական կողմի համար անթույլատրելի գործողությունները: Մասնավորապես 2008 թ. տեղ գտավ մի միջադեպ, երբ քրդական հենակետերում տեղակայված փեշմերգաները կանխեցին թուրքական կողմի գործողությունները, որոնց մասին իրենք նախապես չէին տեղեկացվել<sup>34</sup>: Սակայն

<sup>32</sup> Namık Durukan, Üslerinizi kaptın askeri çekin, – Milliyet.com.tr (03 Ekim 2012), Namık Durukan, Iraq to Expel Foreign Troops, End Turkish Military Presence, – Al-Monitor, October 3, 2012 <http://www.al-monitor.com/pulse/security/01/10/iraq-ejects-turkish-armed-forces.html>

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> 2008 թ. փետրվարի 21-ին թուրքական կողմի ութօրյա ներխուժման առաջին օրը շուրջ 350 թուրք զինյալներ ռազմական տրանսպորտային միջոցներով 12 տանկերի և զրահապատ տեխնիկայի ուղեկցությամբ փորձեցին դուրս գալ Բամերնիի թուրքական բազայից: Դուրս գալով բազայից՝ թուրքական զորքերը



հետագայում նման միջադեպեր տեղ չեն գտել: Քրդական կողմն էլ, իր հերթին, ներկայումս փորձում է առավելագույնս շրջանցել թուրքական բազաների խնդիրը<sup>35</sup>:

Սակայն խնդիրը շարունակում է մնալ Իրաքյան Քուրդիստանի նկատմամբ փաստացի վերահսկողությունը կորցրած Բաղդադի «կենտրոնական» կառավարության օրակարգում, ինչպես նաև ՔՌԿ-ի և Քուրդիստանի հասարակայնության ուշադրության կենտրոնում: Մասնավորապես 2011 թ. սեպտեմբերին Իրաքյան Քուրդիստանի զանգվածային լրատվամիջոցները և [www.ekurd.net](http://www.ekurd.net) կայքը, վկայակոչելով թուրքական «Թարաֆ» թերթը, հաղորդում էին, որ Թուրքիան պաշտոնապես դիմել է Քուրդիստանի ռեզիոնալ կառավարությանը՝ խնդրելով թույլատրել երկու ռազմակայանների հիմնումը Ռանիյա և Չուրքուրնա շրջաններում՝ Քանդիլի լեռներում PKK-ի քուրդ զինյալների թաքստոցների հարևանությամբ՝ Սուլեյմանիա քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք ընկած շրջաններում: Արձագանքելով հիշյալ տեղեկատվությանը՝ Քուրդիստանի ռեզիոնալ կառավարության Փեշմերգայի (Քրդական պաշտպանական ուժերի) նախարար Ջաֆար Մուստաֆան նշել էր, որ «քրդական ղեկավարությունը ոչ մի դեպքում չի թույլատրի հարևան պետությունների կողմից Քուրդիստանի տարածաշրջանում ցանկացած ռազմական բազաների հիմնումը», և ավելացրել, որ «դա ոչ մի դեպքում հնարավոր չէ»: Ջաֆար Մուստաֆան նաև նշել էր, որ ինքը տեղյակ չէ ռազմական բազաների վերաբերյալ Թուրքիայի կողմից արված նմանատիպ որևէ խնդրանքների մասին<sup>36</sup>: Սակայն հետագայում Ջաֆար Մուստաֆայի այս պնդումները, թվում է, հերքվեցին: 2011 թ. նոյեմ-

ցանկանում էին շեղել PKK-ի ուշադրությունը՝ իրական հարվածը հասցնելով Ջաբի շրջանում: Սակայն նման տեղաշարժի մասին ՔՌԿ-ն նախնական որևէ ծանուցում չէր ստացել, և փեշմերգեները շրջապատեցին բազան՝ արգելելով թուրքական ուժերի դուրսբերումը: Շուրջ 90 րոպե տևած դիմակայությունից հետո թուրքական ուժերը տեղի տվեցին՝ մնալով բազայի շրջանակներում: Մեկուկես ժամ տևած այս դիմակայությունը ցույց տվեց հիշյալ թուրքական բազաների առնչությամբ թուրք-քրդական իրական առճակատման պոտենցիալը:

Gareth Jenkins, Unwelcome Guests: The Turkish Military Bases in Northern Iraq,–Terrorism Monitor Volume: 6 Issue: 6, March 24, 2008, [http://www.jamestown.org/programs/gta/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4807&tx\\_ttnews%5BbackPid%5D=167&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/gta/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4807&tx_ttnews%5BbackPid%5D=167&no_cache=1)

<sup>35</sup> 9 Turkish Military Bases Located Inside Iraqi Kurdistan, –PressTV (Uploaded on February 14, 2010), <http://www.presstv.com>, <http://www.youtube.com/watch?v=un5ec3ieMYs>

<sup>36</sup> Kurds Will Not Permit Turkish Military Bases in Iraqi Kurdistan Region (September 12, 2011), <http://www.politicalforum.com/middle-east/207121-kurds-will-not-permit-turkish-military-bases-iraqi-kurdistan-region-12-9-2011-a.html>, <http://www.ekurd.net/mismas/articles.../state5425.htm>

բերին Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանիի Անկարա կատարած այցի ընթացքում օրակարգային առաջնահերթ խնդիրն անվտանգությունն էր: Բարզանու թիվ մեկ ուղերձը հետևյալ բնույթի էր. «Թուրքիայի և քրդական շրջանի անվտանգությունը փոխկապակցված են»: Բանակցությունների ընթացքում քննարկման դրվեց 1990–ական թթ. (աղբյուրում նշվում էր՝ 1996 թվականից) մինչ օրս հյուսիսային Իրաքում տեղակայված թուրքական զորախմբերի կարգավիճակի ու հետագայի հարցը: Թուրքական «Թարաֆ» թերթի տեղեկատվության համաձայն թուրք–քրդական քննարկումների ընթացքում սկզբունքային համաձայնություն էր ձեռք բերվել այն մասին, որ թուրքական հիշյալ զորամիավորումները ևս վեց տարի պետք է մնան Հյուսիսային Իրաքի տարածքում:

Կարևորագույն երկրորդ խնդիրը Հյուսիսային Իրաքում PKK–ի գործողությունները վերահսկելու նպատակով ևս մեկ թուրքական ռազմական բազա (հենակետ) հիմնելու պահանջն էր: Ռազմավարական կարևորություն ներկայացնող Հաքուրքի, Չաբի և Քանդիլի լեռնային անցումների գոտում PKK–ի գործողությունները կանխելու նպատակով Թուրքիան հանդես եկավ Չիյայե Սաի (Çiyaye Sipi) անունը կրող շրջանում մի նոր թուրքական ռազմական բազա (հենակետ) հիմնելու խնդրանք–պահանջով: Տեղեկատվության համաձայն՝ Մասուդ Բարզանին համաձայնել էր: Բացի այդ՝ հաղորդվում էր, որ Չուքուրջայի հարձակումից հետո, հյուսիսային Իրաքից PKK–ի ներթափանցման ուղիները վերահսկողության տակ վերցնելու նպատակով ավարտին են հասցվում Չայքուրնա շրջանում տեղակայվելիք հետախուզական բազային առնչվող բոլոր աշխատանքները<sup>37</sup>:

Այս դեպքում էլ Իրաքյան Քուրդիստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ֆուադ Հուսեյնը հերքեց թուրքական «Թարաֆ» թերթի այն պնդումը, որ Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին 23–կետանոց մի համաձայնագիր է ստորագրել թուրքական կառավարության հետ, որի հողվածներից մեկի համաձայն՝ ևս վեց տարի ժամկետով երկարաձգվում էր թուրքական զորքերի ու ռազմակայանների ներկայությունն Իրաքյան Քուրդիստանի տարածքում: «Նախագահ Բարզանու և թուրքական կառավարության միջև նմանատիպ ոչ մի պայմանագրեր չեն ստորագրվել», — պնդում էր Ֆուադ Հուսեյնը<sup>38</sup>:

<sup>37</sup> ‘Türk askeri alti yıl daha Kuzey Irak’ta’, – “Taraf”, 16 Kasım 2011, <http://www.yeniekse.com/haber/siyaset/turk-askeri-alti-yil-daha-kuzey-irakta/29608.html>

<sup>38</sup> No Deal to Extend Turkish Troops Presence in Iraqi Kurdistan (19.11.2011), <http://>

Ամենևին չբացառելով այն իրողությունը, որ նախագահ Մասուդ Բարզանու և թուրքական կառավարության միջև նմանատիպ ոչ մի պայմանագրեր չեն ստորագրվել, չենք կարծում, որ թուրքական ռազմական խմբավորումներն ու ռազմակայանները (ռազմական բազաները) և հատուկ զորքերի հրամանատարության կապի գրասենյակներն ու հետախուզական բազաները տարիներ շարունակ գործում են Իրաքյան Քուրդիստանի տարածքում առանց ՔԴԿ-ի ու ՔՀՄ-ի կամ առանց ՔՌԿ-ի հետ կնքված համաձայնագրի, առավել ևս առանց ձեռք բերված որևիցե բանավոր համաձայնության: Բացառվում է նաև, որ Բաղդադի կենտրոնական կառավարության հայտարարությունների կապակցությամբ Թուրքիան չփորձեր այս հարցի առնչությամբ ստանալ ՔՌԿ-ի աջակցությունը: Միաժամանակ հնարավոր չէր անվտանգության հիմնախնդիրների քննարկումն առանց թուրքական ռազմակայանների խնդրի քննարկման:

ՔԴԿ կառավարման բարձր մակարդակի աղբյուրի տեղեկատվության համաձայն՝ Իրաքյան Քուրդիստանում Թուրքիայի ռազմական ներկայության խնդիրն առնվազն 7 անգամ մտել է քրդական խորհրդարանի օրակարգ, սակայն ՔԴԿ բարձրաստիճան ղեկավարությունը կասեցրել է սկսված գործընթացը<sup>39</sup>: Հիշյալ աղբյուրի պնդմամբ ՔԴԿ-ի ու ՔՀՄ-ի համապատասխան կառավարությունների հետ հիշյալ խնդրի վերաբերյալ առաջին համաձայնագիրը թուրքական կողմը ստորագրել է դեռ 1996 թ.: Կայացված որոշումը թուրքական կողմին Իրաքյան Քուրդիստանի տարածքում 6 ռազմական բազա և չորս հետախուզական բյուրո ստեղծելու հնարավորություն ընձեռեց: 1998 թվականին հետախուզական բյուրոների թիվը հասցվեց 10-ի: Համաձայնագիրն ուժի մեջ էր մինչև 2010 թ.: 2011 թ. Քուրդիստանի ռեզիոնալ կառավարությունը որոշեց ևս 6 տարի ժամկետով երկարաձգել Իրաքյան Քուրդիստանի տարածքում տեղաբաշխված թուրքական ռազմակայանների ժամկետը: Մի ժամանակաշրջանում, երբ Իրաքյան կենտրոնական կառավարությունն օտարերկրյա ռազմական բազաները փակելու որոշում էր կայացրել, քրդական կողմն, ըստ էության, ցույց էր տալիս, որ Իրաքյան Քուրդիստա-

[www.ekurd.net/mismas/articles/misc2011/11/state5584.htm](http://www.ekurd.net/mismas/articles/misc2011/11/state5584.htm)

<sup>39</sup> Namık Durukan, Askeri üslerde kararı Kürt yönetimi verecek,- Milliyet.com.tr (04 Ekim 2012) <http://gundem.milliyet.com.tr/askeri-uslerde-karari-kurt-yonetimi-verecek/gundem/gundemdetay/04.10.2012/1606316/default.htm>

նում նմանատիպ վերջնական որոշումների կայացման ու թույլատվությունների իրավունքը պատկանում է իրեն՝ ՔՌԿ-ին<sup>40</sup>:

Իրաքյան տարածքում թուրքական ռազմական ներկայության խնդիրը, ժամանակ առ ժամանակ հայտնվում է ոչ միայն պաշտոնական, այլև մասնագիտական-քաղաքական վերլուծությունների օրակարգում: Մասնավորապես Իրաքյան Քուրդիստանի իշխանությունների քննադատի համբավ ունեցող Մայքլ Ռուբինն այս առիթով նշում է. «...Թուրքիան անբացատրելիորեն որևէ գործողություն չի ձեռնարկում Իրաքյան Քուրդիստանի իր ավելի քան երկու տասնամյակ տևած օկուպացիային վերջ դնելու ուղղությամբ: Իհարկե, 2004 թ.՝ քրդական քաղաքացիական պատերազմի ավարտից տարիներ անց, Թուրքիան իր Խաղաղության մոնիթորինգի ուժերի բաղադրիչը դուրս բերեց Էրբիլից սակայն թուրքերը շարունակում են զինված ֆորպոստ ու ճամբարներ պահպանել Ամադիայում, Բամերնեում, Շելադիզում և Քանը Մասրում: Նման ներկայությունը, հարվածում է թե՛ Իրաքի սուվերենությանը, թե՛ Իրաքյան Քուրդիստանին»<sup>41</sup>: Ռուբինը գտնում է, որ «Քրդական ահաբեկչական սպառնալիքը», որ մեջբերում է Թուրքիան, «չի արդարացնում բազանների պահպանումը», քանզի ինքը՝ Էրդոդանը, հանդես գալով Գազայում և այլուր, **պնդում էր, որ «միջսահմանային ահաբեկչությունը չի արդարացնում ռազմական** օկուպացիան»<sup>42</sup>: Սակայն ՔՌԿ-ի ղեկավարության նկատմամբ մշտական ընդդիմախոսի ու քննադատի դերում հայտնված Մայքլ Ռուբինը գտնում է, որ Իրաքյան Քուրդիստանին ոչինչ չի տալիս այն, որ Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին, Իրաքի քրդական ԶԼՄ-ներում այդքան կոշտ դիրքորոշում ունենալով, միանգամայն հաշտվողական կեցվածք է ընդունում թուրքերի նկատմամբ՝ Վաշինգտոն ու Անկարա կատարած իր այցելությունների ժամանակ: Նա հետևյալ կարծիքին է. «Եթե քրդական ղեկավարությունը խստորեն պահանջի, որ թուրքական զորքերը թողնեն Իրաքի տարածքը, նրանք կարող են հաջողության հասնել: Առնվազն նրանք կհիշեցնեն միջազգային հանրությանը, որ Թուրքիան խաղաղարար չէ, ինչպես ինքն է պնդում: Շվեդիայի, Գերմանիայի և եվրոպական այլ երկրների նշանակալի քրդական համայնքները թերևս նույնպես կարող էին ահազանգել այդ մասին: Եթե Թուրքի-

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Michael Rubin, It's Time for Turkey to End Its Occupation of Iraqi Kurdistan (May 28, 2011), May 28, 2011, The Kurdistan Tribune, <http://kurdistantribune.com/2011/its-time-for-turkey-end-its-occupation-of-iraqi-kurdistan/>

<sup>42</sup> Նույն տեղում:

ան ցանկանում է միանալ Եվրոպային կամ պարզապես դիվանագիտական վստահելիություն ունենալ տարածաշրջանում, նա այժմ պետք է վերջ դնի Իրաքյան Քուրդիստանի իր օկուպացիային»<sup>43</sup>: Սակայն ակնհայտ է, որ ՔՌԿ-ի նման քայլերը միայն կարող են վատթարացնել Թուրքիա-ՔՌԿ հարաբերությունները և որևիցե կոնկրետ արդյունքի չեն հանգեցնի: Իսկ Մայքլ Ռուբինի «խորհուրդը» պարզապես ՔՌԿ-ին քողարկված քննադատելու նպատակ է հետապնդում:

Ներկայումս Թուրքիան շարունակում է ամրապնդել իր ռազմական ներկայությունը Իրաքյան Քուրդիստանում՝ այստեղ առկա ռազմական բազաների ու առաջապահ ուղեկալների շրջանակում: Միաժամանակ թուրքական կողմն ընդլայնում է ռազմական բազաների ստեղծումը իր քրդաբնակ տարածքներում՝ կառուցելով ավելի քան հարյուր նոր առաջապահ ուղեկալներ ու ռազմական բազաներ՝ հակառակ այն իրողությանը, որ PKK-ն զինադադար է հայտարարել ու վերադիրքավորում է իր զինյալներին Հարավային Քուրդիստանի տարածքում: Թուրքական ու քրդական ՋԼՄ-ների համաձայն՝ Թուրքիան ներկայումս արդեն իսկ 149 ռազմակայաններ ունի իր քրդաբնակ տարածքներում՝ ի հավելումն որոնց կառուցվում են ևս 133-ը<sup>44</sup>: Թեև ակնհայտ է, որ «ռազմական բազաներ» հասկացության տակ դիտարկված են նաև առաջապահ ուղեկալները, կարևորվում է մեկ այլ իրողություն. թուրքական կողմն այս զինադադարն օգտագործում է իր ռազմական ցանցն էլ ավելի համակարգելու ու ընդլայնելու նպատակով: Այդ շարքում հատկապես կարևորվում են Ջուլամերգում (Հաքքյարի)՝ Յուքսեկովայի Օրեմար շրջանի հարևանությամբ երկու նոր բազաների կառուցումը: Քրդական աղբյուրների պնդմամբ «Նահատակ Ջինար» և «Նահատակ Սիյար» բլուրների շրջակայքում նոր թուրքական բազաների կառուցումը հարցակալների տակ է դնում թուրքական կողմի՝ խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու պատրաստակամությունը<sup>45</sup>: Իրագործվում է նաև Իրաքյան Քուրդիստանում PKK-ի բազաների և զինյալների վերադիրքավորման գործընթացի մշտական մոնիտորինգը, որում ներգրավված է նաև ռազմական օդուժը<sup>46</sup>: Ներկայումս Թուրքիան

<sup>43</sup> Նույն տեղում:

<sup>44</sup> 133 New Military Bases Under Construction (12.11.2013),– Ajansa Nûçeyan a Firatê 2012, <http://en.firatnews.com/news/news/133-new-military-bases-under-construction.htm>

<sup>45</sup> Նույն տեղում:

<sup>46</sup> Türk savaş uçakları Kuzey Irak'ta (25 Mart 2013),– <http://www.insanhaber.com/guncel/turk-savas-ucaklari-kuzey-irakta-h10826.html>

Իրաքյան Քուրդիստանի տարածքում 8 ռազմակայան և հետախուզական բնույթի 12 կապի բյուրո (գրասենյակ) ունի: Թուրքական հատուկ զորքերի հրամանատարության կապի գրասենյակներն ու հետախուզական բազաներն էլ հիշյալ տարածաշրջանում գործող թուրքական հետախուզական ցանցի ընդամենը մի համեստ օղակն են: Ընդ որում՝ հիշյալ ռազմակայանների ու կապի գրասենյակների շարքում առավել մեծ ուշադրության է արժանի Էրբիլի ու Սուլեյմանիեի միջև՝ Չարքուրնայի շրջանում գտնվող թուրքական ռազմական հետախուզության միավորի գործունեությունը: Մասնավորապես Չարքուրնայի թուրքական ռազմական հետախուզության միավորը շրջանում ռացիաները, ռադիոգրամաներն ու հեռախոսները լսելու կարողություն ունի<sup>47</sup>:

ՔՌԿ-ն քաջատեղյակ է թուրքական սպառնալիքին ու գիտակցում է այդ պոտենցիալ սպառնալիքը: Սակայն ՔՌԿ-ի այլընտրանքային տարբերակներն իրականում մեծ չեն:

---

<sup>47</sup> Namık Durukan, Askeri üslerde kararı Kürt yönetimi verecek,– Milliyet.com.tr (04 Ekim 2012) <http://gundem.milliyet.com.tr/askeri-uslerde-karari-kurt-yonetimi-verecek/gundem/gundemdetay/04.10.2012/1606316/default.htm>

**ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ  
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱ-  
ՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ  
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Խորհրդային Միության փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում առաջացան հինգ նորանկախ հանրապետություններ (Ղազախստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան), որոնք, ազատվելով խորհրդային վերահսկողությունից, փորձում էին ինտեգրվել միջազգային հարաբերությունների համակարգին: Կենտրոնասիական տարածաշրջանը կարևորվում է իր ռազմավարական և աշխարհագրական դիրքով, ուստի նրա նկատմամբ անմիջապես մեծ հետաքրքրություն նկատվեց: Խորհրդային կարգերի վերացումից հետո առաջացել էր վակուում, որտեղ քաղաքական ազդեցության էին փորձում հասնել ԱՄՆ-ն, Եվրոպական երկրները, Չինաստանը, Թուրքիան, Իրանը և ուրիշներ: Կենտրոնասիական տարածաշրջանի նկատմամբ առավել ակտիվ քաղաքականություն որդեգրեցին Թուրքիան և Իրանը: Վերջիններիս դեպքում տարածաշրջանում ազդեցության հասնելու համար մի նոր հնարավորություն էր ստեղծվել, ինչն էլ նրանք փորձում էին օգտագործել: Նման պայմաններում Կենտրոնական Ասիայում թուրք-իրանական հարաբերություններն ունեին մրցակցային բնույթ, որը տարածվում էր քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Կենտրոնական Ասիայում Թուրքիայի և Իրանի մշակութային քաղաքականության մի քանի առանցքային հիմնախնդիրները, առանձնահատկությունները և նպատակները: Անդրադարձ է կատարվում Թուրքիայի և Իրանի կրթական, լեզվական և մշակութային միջոցառումների իրականացման քաղաքականությանը, որոնք երկու երկրնե-

րի կողմից դիտարկվում էին կարևոր գործընթացներ տարածաշրջանում ազդեցության հաստատման խնդրում: Հատկանշական է կենտրոնասիական տարածաշրջանի հետ այս երկրների ունեցած պատմական և մշակութային ընդհանրությունները, որոնք էլ հանդիսանում են կրթամշակութային քաղաքականության համապատասխան հիմքը: Հասկանալու համար Թուրքիայի և Իրանի մշակութային քաղաքականության յուրահատկությունները անհրաժեշտ է դիտարկման ենթարկել առանձին խնդիրներն ու ձեռնարկումները, որոնք այս երկրների գործողություններում առանցքային տեղ են գրավել՝ փորձելով տալ դրանց գնահատականը:

### **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ**

Թուրքիան Կենտրոնական Ասիայի երկրների հետ սկսեց համագործակցել Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, որն, ըստ էության, արտահայտվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ, փոխադարձ բարձրաստիճան այցելություններով և բազմաթիվ համագործակցային պայմանագրերի ստորագրմամբ: Թուրքական կառավարությունը հենց սկզբից մեծ ուշադրություն դարձրեց մշակութային համագործակցությանը, որն անգամ ընդգծվեց Թուրքիայի պետական պլանավորման վեցերորդ ծրագրում<sup>1</sup>: Փաստորեն 1990–ական թթ. սկզբից Թուրքիան իր առջև խնդիր էր դրել կենտրոնասիական տարածաշրջանում հասնելու ազդեցության, ուստի այդ նպատակով իրականացվող քաղաքականության համատեքստում կարևորվեց նաև մշակութային համագործակցությունը:

Նախևառաջ Թուրքիան իր մշակութային քաղաքականությամբ սկսեց բարձրաձայնել ու ընդգծել կենտրոնասիական երկրների հետ ունեցած էթնիկական, պատմական, լեզվական, կրոնական և մշակութային ընդհանրությունները: Ըստ էության՝ Թուրքիան նպատակ ուներ տարածելու թյուրքական մշակութային և փորձում էր հասնել մշակութային միասնության: Այս նկատառումներով մեծ տեղ հատկացվեց «Թյուրքական մշակույթի և արհեստների միացյալ ղեկավարում» (Türk Kültür ve Sanatları Ortak Yonetimi–TÜRKSOY) կազմակերպությանը, որը ստեղծվել էր

<sup>1</sup> Altinci Beş yıllık kalkınma planı (1990–1994), Ankara, 1989, s. 293, <http://ekutup.dpt.gov.tr/plan/plan6.pdf>



Մշակույթի նախարարությանը կից 1993 թ. հուլիսին<sup>2</sup>: Ընդհանրապես թյուրքալեզու երկրների հետ մշակութային հարաբերությունների զարգացմամբ հիմնականում զբաղվում էր մշակույթի նախարարությունը: Կարճ ժամանակահատվածում TÜRKSOY-ը ներկայացուցչություններ բացեց կենտրոնասիական երկրներում և տարածաշրջանում իրականացնում է ակտիվ գործունեություն, թերևս ավելի սահմանափակ է գործում Տաջիկստանում<sup>3</sup>: TÜRKSOY-ը կազմակերպում է բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում գիտական ու մշակութային նստաշրջաններ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, իրականացնում է տարբեր տեսակի ծրագրեր, որոնք հիմնականում կապում է թյուրքական աշխարհում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հետ<sup>4</sup>: Նման միջոցառումների ու ծրագրերի իրականացմամբ Թուրքիան փորձում է թյուրքալեզու երկրների հետ հարաբերություններում կարևորել համաթյուրքական մշակութային ավանդույթներն ու սովորույթները:

Կենտրոնական Ասիայում Թուրքիայի մշակութային քաղաքականության մաս են կազմում տասնյակ խորհուրդների ու ֆոնդերի հիմնադրումը, որոնք հիմնականում զբաղվում են մշակութային ու կրթական հարցերով<sup>5</sup>: Տարածաշրջանում առավել ակտիվ գործունեություն է ծավալում Թյուրքական աշխարհի հետազոտությունների հիմնադրամը (Türk Dünyası Araştırmaları Vakfı)<sup>6</sup>: Հարկավ նմանատիպ կառույցների ստեղծումը միտված է համաթյուրքական մշակութային արժեքների պահպանմանը և տարածմանը:

Թյուրքալեզու երկրների նկատմամբ Թուրքիայի մշակութային քաղաքականության մեջ առանձնակի ուշադրություն հատկացվեց կրթական համակարգին: Թուրքական ղեկավարությունն իր գործունեությունը բաժանեց մի քանի ուղղությունների՝ թյուրքալեզու երկրներում հիմնում էր դպրոցներ ու համալսարաններ,

<sup>2</sup> TÜRKSOY-ի գործունեության բնագավառների և նպատակների մասին ավելի մանրամասն տե՛ս կազմակերպության պաշտոնական կայքէջը՝ <http://www.turksoy.org.tr/tr/turksoy/faaliyetler>

<sup>3</sup> TÜRKSOY-ի գրասենյակներ են գործում Ղազախստանում, Ղրղզստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում, Ադրբեջանում և այլ վայրերում: Ավելի մանրամասն տե՛ս TÜRKSOY-ի պաշտոնական կայքէջը՝ <http://www.turksoy.org.tr/tr/uyeler>

<sup>4</sup> Yedinci Beş yıllık kalkınma planı (1996–2000), s. 31, <http://ekutup.dpt.gov.tr/plan/vii/plan7.pdf>

<sup>5</sup> Yazgan Turan, Türkiye'nin Türk Dünyasındaki eğitim-öğretim faaliyetleri, Kamu-İş, Cilt 7, Sayı 2, 2003, s. 2–21.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 3:

թուրքական բուհերում կազմակերպում էր կենտրոնասիական երիտասարդների մասնագիտական ու բարձրագույն ուսումնառությունը և աշխատանքներ էր իրականացնում ընդհանուր այբուբենի հաստատման ուղղությամբ<sup>7</sup>: Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում Թուրքիան հիմնադրեց ավագ դպրոցներ, լիցեյներ, համալսարան ընդունվելու համար նախապատրաստական կուրսեր, իսլամական կրթության կենտրոններ և համալսարաններ<sup>8</sup>: Բավական է նշել, որ տարածաշրջանում գործում են թուրքական ութ համալսարաններ, որոնցից չորսը պատկանում է Ֆ. Գյուլենի համայնքին<sup>9</sup>, ինչպես նաև տասնյակ ավագ դպրոցներ, օրինակ՝ Ղրղզստանում գործում են 13 ավագ դպրոցներ, Ղազախստանում՝ 27, Թուրքմենստանում՝ ավելի քան 20 և Ուզբեկստանում՝ 25<sup>10</sup>: Թուրքիան մեծ տեղ հատկացրեց նաև կրոնական կրթությանը՝ նախևառաջ աջակցելով Կենտրոնական Ասիայում գյուլենական շարժման կողմից հիմնադրված ուսումնական հաստատություններին<sup>11</sup>: Մյուս կողմից՝ Թուրքիայի նախաձեռնությամբ տարածաշրջանում հովանավորվում էր մզկիթների ու մեդրեսների շինարարությունը<sup>12</sup>, տարածվում էր կրոնական գրականություն, անգամ բացվեցին աստվածաբանության ֆակուլտետներ՝ Ադրբեջանում, Ղրղզստանում և Թուրքմենստանում<sup>13</sup>: 1990–ական թթ. սկզբից մինչև օրս հարյուրավոր երիտասարդներ կրթություն են ստանում Թուրքիայի համալսարաններում և այլ ուսումնական հաստատություններում<sup>14</sup>: Վերո-

<sup>7</sup> Bayram Sinkaya, Turkey–Iran Geopolitical Competition over Central Asia and The Caucasus: 1989–2001, *Avrasya Etüdüleri*, Sayı 27–28, Sonbahar–Kış 2005, p. 80.

<sup>8</sup> Ն. Մինասյան, Կրթամշակութային հարաբերությունները Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև (1990–ական թթ.), Մերձավոր Արևելք, հ. VIII, Երևան, 2012, էջ 290–291:

<sup>9</sup> Bill Park, The Fethullah Gulen Movement, *The Middle East Reviv of International Affairs*, vol. 12, no. 3, September 2008, <http://www.merajournal.com/en/asp/journal/2008/december/park/index.asp>, Ն. Մինասյան, Ֆեթուլլահ Գյուլենի գործունեությունը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1 (637), Երևան, 2013, էջ 228–237:

<sup>10</sup> Turkish Ministry of Education, <http://www.meb.gov.tr/Stats/ist97/MYHTML45.htm>, Bülent Aras, Turkey’s Policy in the Former Soviet South: Assets and Options, *Turkish Studies*, 1:1, 2000, p. 36–58.

<sup>11</sup> Bayram Balci, Fethullah Gülen’s Missionary Schools in Central Asia and their Role in the Spreading of Turkism and Islamism, *Religion, State & Society*, vol. 31, no. 2, 2003, p. 151–177.

<sup>12</sup> Farhad Ataei, Iran and Turkey in Post–Soviet Central Asia, *An Iranian Quarterly*, vol. 2, no. 1, Summer 2000, p. 153.

<sup>13</sup> Bayram Sinkaya, Turkey–Iran Geopolitical Competition over Central Asia and The Caucasus: 1989–2001, p 81.

<sup>14</sup> Philip Robins, Between Sentiment and Self–Interest: Turkey’s Policy toward Azerbaijan and Central Asian States, *Middle East Journal*, 47, Autumn, 1993, p. 598.

շարադրյալից կարող ենք եզրակացնել, որ Թուրքիան կենտրոնասիական երկրների հետ փորձում էր ձևավորել միասնական կրթական համակարգ:

Թուրքիան թյուրքալեզու երկրներում ուշադրություն դարձրեց նաև թուրքերենի տարածման խնդրին, որն արտահայտվեց ընդհանուր այբուբենի հաստատման կոչով՝ նկատի ունենալով լեզվական ընդհանրությունները: 1993 թ. մարտին Անկարայում տեղի ունեցած Թյուրքախոս երկրների գագաթնաժողովում ընդունվեց ընդհանուր այբուբենի մասին որոշումը, որը լատինատառ էր և կազմված էր 34 տառից<sup>15</sup>: Այբուբենը քննարկվում և մշակվում էր Թյուրքագիտական հետազոտությունների ինստիտուտում, որը ստեղծվել էր Ստամբուլի Մարմարա համալսարանին կից: Հարկավոր է փաստել, որ այբուբենը փոխելու Թուրքիայի կոչերին թյուրքալեզու երկրները միանշանակ չպատասխանեցին: Կենտրոնասիական երկրներից առաջինը լատինատառ այբուբենին անցավ Թուրքմենստանը, այնուհետև Ուզբեկստանը և Ղազախստանը, սակայն վերջին երկու երկրները, լեզվական որոշ անհարթություններ նկատի ունենալով, ընդունեցին սեփական լատինատառ այբուբենները: Ղրղզստանը թյուրքալեզու երկրներից միակն է, որ դեռևս օգտագործում է կիրիլյան այբուբենը<sup>16</sup>: Ըստ էության՝ Թուրքիան, այբուբենը լատինականացնելով փորձում էր տարածաշրջանում ապահովել թուրքերենի գերակայությունը, ինչն էլ հնարավորություն կընձեռեր հաստատելու միասնական կրթական ու մշակութային համակարգ: Այս նկատառումով Թուրքիան ուշադրություն դարձրեց նաև հեռուստառադիո հաղորդումների պատրաստմանը և դրանք Կենտրոնական Ասիայում հեռարձակելուն<sup>17</sup>, անգամ ստեղծվեց հատուկ ծրագիր՝ “Avrasya”, որը 1992 թ. հեռարձակվեց կենտրոնասիական բոլոր հանրապետություններում: Հեռարձակվող հաղորդաշարերում մեծ տեղ էր հատկացվում համաթյուրքական պատմության ու մշակույթի ներկայացմանը: Անշուշտ նման ծրագրերով փորձ էր կատարվում նպաստելու համաթյուրքական մշակութային արժեքների տարածմանը<sup>18</sup>:

<sup>15</sup> А. Сваранц, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, М., 2002, с. 167.

<sup>16</sup> Kara Mehmet, Türk Cumhuriyetleri ve otuz dört harfli ortak Latin alfabesi, Turkish Studies, International for the Languages, Literature and History of Turkish or Turkic, vol. 4/3, Spring 2009, s. 1307.

<sup>17</sup> Martha Brill Olcott, Central Asia's Catapult to Independence, Foreign Affairs, №71, Summer 1992, p. 121–122.

<sup>18</sup> Heinz Kramer, Will Central Asia Become Turkey's Sphere of Influence, Perception: Journal of International Affairs, March–May, 1996, <http://www.sam.gov.tr/perception/>

Այսպիսով՝ Կենտրոնական Ասիայում Թուրքիան ազդեցության հասնելու համար մեծ տեղ հատկացրեց մշակութային բնագավառին: Իր մշակութային քաղաքականությամբ Թուրքիան փորձում է ձևավորել միասնական մշակութային հանրություն, որին բնորոշ կլինի ընդհանուր ծագման մասին գաղափարը, պատմությունը, ավանդույթները, լեզուն և ինքնագիտակցությունը: Հարկավոր է նշել, որ Թուրքիայի իրականացրած որոշ ծրագրեր հաջողություններ չունեցան, ուստի որոշ ոլորտներում նրա քաղաքականությունը ձախողվեց: Ըստ էության՝ ավելի տեսանելի արդյունքներ Թուրքիան ունեցավ կրթության բնագավառում: Վերոշարադրյալից կարող ենք փաստել, որ Թուրքիան ունեցավ որոշ ձեռքբերումներ և կարողացավ տարածաշրջանում հաստատել իր ներկայությունը:

### **ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ**

Իրանը Կենտրոնական Ասիայի երկրների հետ ունի ավանդական պատմական մշակութային և քաղաքակրթական կապեր, որոնք ձևավորվել են դարերի ընթացքում: Այս հենքի վրա Իրանը փորձեց հետխորհրդային Կենտրոնական Ասիայում ակտիվ դերակատարում ստանձնել՝ օգտվելով ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունից: Պետք է նշել, որ քաղաքական տեսանկյունից կենտրոնասիական երկրների հետ համագործակցությունը բխում էր Իրանի շահերից, քանի որ վերջինս կկարողանար ամրապնդել իր հյուսիսային շրջանների անվտանգությունը: Իրանը ամեն կերպ փորձում էր նպաստել Կենտրոնական Ասիայի երկրներում կայունության ու անվտանգության հաստատմանն ու պահպանմանը:

Իրանը կենտրոնասիական տարածաշրջանում ազդեցության հասնելու համար մեծ տեղ հատկացրեց մշակութային քաղաքականությանը՝ փորձելով հասնել մշակութային գերակայության: Նա սկսեց ակտիվորեն քարոզել կենտրոնասիական երկրների հետ ունեցած ընդհանուր մշակութային ժառանգությունը: Այս համատեքստում Իրանում հատկապես ուշադրություն դարձրեցին մշակութային վերածննդի գաղափարին, որը փաստորեն կդառնար այս երկրների անկախության ու ինքնուրույնության կարևոր

գրավականներից մեկը, իսկ Իրանը ցույց կտար համապատասխան աջակցություն<sup>19</sup>: Հենց այս խնդիրներն էլ դրվեցին Իրանի կենտրոնասիական քաղաքականության հիմքում: Ըստ էության՝ Իրանում քարոզում էին սեփական ավանդական մշակութային տարրերը, մասնավորապես շեշտը դրվում էր իրանական դասական մշակույթի վրա, որը հարազատ էր նաև տարածաշրջանի ժողովուրդներին<sup>20</sup>: Փաստորեն Իրանը կենտրոնասիական երկրների հետ մշակութային համագործակցության հիմքում դրեց ընդհանուր մշակութային ավանդույթների գաղափարը: Այս առումով անհերքելի է այն փաստը, որ կենտրոնասիական տարածաշրջանում գոյություն ունեցող մշակույթի ու քաղաքակրթության վրա մեծ է եղել Իրանի ազդեցությունը<sup>21</sup>: Բավական է միայն նշել, որ տեղական լեզուներում կան բազմաթիվ պարսկերեն բառեր, իսկ տեղի բնակչությունը մինչև օրս էլ օգտագործում է պարսկական ասույթներ ու բանաստեղծություններ, ինչպես նաև կան ընդհանուր ավանդույթներ ու տոներ, որոնք հիմնականում ձևավորվել են իսլամի ազդեցությամբ: Հատկանշական է, որ Կենտրոնական Ասիայում Իրանի իրականացրած մշակութային քաղաքականությունը ենթադրում էր վերադառնալ սեփական մշակութային արմատներին, որոնց հետ իրանական մշակույթն ուներ բազում ընդհանրություններ: Բացի այդ Իրանում կարևորեցին մշակութային ժառանգությունը, քանի որ առկա ընդհանրությունները վերաբերում էին հիմնականում այս բնագավառին<sup>22</sup>: Իրանական կողմի կարծիքով նման համագործակցությունը

<sup>19</sup> В. Варнавский, Иран и государства Центральной Азии: генезис, состояние и перспективы сотрудничества, Центральная Азия и Кавказ, No. 2(56), 2008, с. 146.

<sup>20</sup> Իրանի կողմից լայնորեն տարածվում էր միջնադարյան մշակութային ավանդույթներն ու ժառանգությունը, մասնավորապես մեծ տեղ էր հատկացում Ֆիրդուսիի պոեզիային: Հատուկ տեղ էր հատկացվում նրա էպոսին, որը մեծ տեղ էր գրավում նաև Կենտրոնական Ասիայի ժողովուրդների ազգային մշակույթների մեջ: Պարսկական կրթական համակարգի ազդեցության շնորհիվ 15–17-րդ դարերում կենտրոնասիական բազմաթիվ հեղինակներ գրում էին պարսկերեն: Հայտնի մտածողներ, որոնք ծնվել են Կենտրոնական Ասիայի տարածքում ճանաչվել են իրանա-մուսուլմանական մշակույթի հայտնի դեմքեր: Օրինակ՝ համաշխարհային մակարդակով կարող ենք առանձնացնել Ռուդաքիին, Ուլուգբեկին, իբն Սինային, Նասեր Խոսրովին և այլոց, որոնք նախևառաջ հայտնի են որպես պարսիկ գործիչներ:

<sup>21</sup> М. Санаи, Взаимоотношения Ирана и стран Центральной Азии, Алматы, 1997, с. 15.

<sup>22</sup> В. Кляшторина, Эволюция роли культуры в процессе модернизации Ирана и стран региона: особенности модернизации на мусулманском Востоке, М., 1997, с. 156–158.

կարող է հիմք հանդիսանալ նախկին հարաբերությունների վերականգնման համար, ուստի փորձում էին շեշտել ընդհանուր մշակութային ներուժը և ընդհանուր ժառանգությունը: Այսպես՝ Կենտրոնական Ասիայի երկրներում պահպանվել է տարածաշրջանի գրային մշակույթը, օրինակ Տաջիկստանի Հանրապետության Գիտությունների Ակադեմիայի արևելյան ձեռագրերի միայն մեկ ֆոնդում պահպանվել են ավելի քան 56 հազար ձեռագրեր, որոնք վերաբերում են 10–20–րդ դարերին և դրանց ուսումնասիրությունը կարևոր է ինչպես այդ երկրների, այնպես էլ Իրանի գիտության, մշակույթի, պատմության և գրականության ուսումնասիրման համար<sup>23</sup>: Իրանական ղեկավարությունը փորձում էր լայնորեն տարածել այն գաղափարը, որ իրանական մշակույթը ոչ թե այդ ժողովուրդների հոգևոր մշակույթի մի մասն է, այլև նրանց պատմամշակութային ժառանգության հենքն է: Նկատի ունենին, որ կենտրոնասիական տարածքները պատմական տարբեր ժամանակաշրջաններում ընդգրկված են եղել իրանական պետական կազմավորումների մեջ, ուստի այս կամ այն չափով ենթարկվել են իրանական մշակութային ազդեցությանը: Այսինքն՝ այս տարածաշրջանը պատմականորեն կապված է Իրանի հետ, ինչը չենք կարող ասել Թուրքիայի դեպքում:

1992 թ. Իրանը դիվանագիտական ներկայացուցչություններ բացեց Կենտրոնական Ասիայի բոլոր հանրապետություններում, որոնցում հատուկ աշխատակիցը զբաղվում էր մշակույթի, կրթության և գիտության հարցերով, ավելին, մշակույթի նախարարության աջակցությամբ տարածաշրջանում բացվեցին մշակութային կենտրոններ, որոնք սերտորեն համագործակցում էին իրանական դեսպանատների հետ և քարոզում էին մշակութային ժառանգության մասին՝ հենվելով պատմական ընդհանուր կապերի և փոխառնչությունների վրա: Իրանը մշակութային քաղաքականությամբ հիմնականում ուշադրություն է դարձնում լեզվին, պատմությանը, գրականությանը և կրոնին<sup>24</sup>:

Կենտրոնասիական տարածաշրջանում Իրանի իրականացրած մշակութային քաղաքականության մեջ տեղ հատկացվեց կրոնին, անգամ ակտիվորեն քարոզվում էին իսլամական արժեքներ: Սակայն նրա այս ձեռնարկումները հաջողված չի կարե-

<sup>23</sup> В. Месамед, Иран в Центральной Азии: два десятилетия диалога, М., 2010, с. 41.

<sup>24</sup> У. Джонстон, Культурная политика Ирана в республиках Центральной Азии и Южного Кавказа после 1991 года, Центральная Азия и Кавказ, No 4(52), 2007, с. 126–140.

լի համարել, քանի որ կենտրոնասիական երկրներում նման գաղափարներին տուրք չեն տալիս, ավելին երբեմն շատ կոշտ են պատասխանում: Այսպես, 1993 թ. ապրիլին Տաշքենդում կազմակերպվել էր իսլամական մշակույթի վերաբերյալ ցուցահանդես, որը Ուզբեկստանի կառավարության կողմից արգելվեց և անգամ սպառնում էին փակել մշակութային բոլոր կենտրոնները: Պետք է նշել, որ Ուզբեկստանում թե՛ Թուրքիայի և թե՛ Իրանի իրականացրած նման գործողություններին շատ կոշտ են պատասխանում: Կարծում ենք Իրանը այս հարցում չի կարող հաջողություններ ունենալ, քանի որ թյուրքալեզու երկրները դավանում են իսլամի սուննի ուղղությունը:

Իրանը, հետևելով Թուրքիայի օրինակին, փորձեց տարածաշրջանում տարածել արաբա-պարսկական այբուբենը: Ըստ էության՝ Իրանում ևս փորձում էին ստեղծել միասնական այբուբեն, որի հաստատման պայմաններում տարածաշրջանում կապահովվեր պարսկերենի գերակայությունը: Պետք է փաստել, որ Իրանը լեզվական ընդհանրություններ ուներ միայն Տաջիկստանի հետ, հետևաբար նա հաջողություններ ունեցավ միայն Տաջիկստանում<sup>25</sup>: Իսկ թյուրքալեզու երկրներն ավելի շատ հակված էին թուրքական լատինատառ այբուբենի ընդունմանը:

Իրանը պարսկերենի ուսուցումը քարոզում էր նաև թյուրքալեզու երկրներում: Այս տեսանկյունից նա թյուրքալեզու երկրներում աջակցում էր ուսումնական ձեռնարկների ու բառարանների հրատարակմանը: Թեհրանի և Ղրղզստանի ազգային համալսարանների գիտնականների համագործակցության արդյունքում 1990-ական թթ. սկզբին հրատարակվեցին առաջին պարսկերեն-ղրղզերեն և �ղրղզերեն-պարսկերեն բառարանները: Չնայած Իրանի և Թուրքմենստանի միջև դարերի ընթացքում գոյություն ունեցած պատմամշակութային կապերին՝ 1966 թ. դադարեցվել էր պարսկերենի ուսումնասիրումը, որը վերականգնվեց 1990 թ.: Այստեղ, բացի ուսումնական ձեռնարկների ու բառարանների հրատարակումից, բացվեցին նաև պարսկերենի և պարսկական գրականության ուսումնասիրման դպրոցներ: Նման ծրագրերից անմասն չմնաց նաև Ուզբեկստանը: Իրանի տեխնիկական ու ֆինանսական աջակցությամբ հրատարակեցին պարսկերենի ձեռնարկներ և ժամանակակից ուզբեկական գրական ստեղծագործություններ: Իրանի ԱԳՆ-ի քաղաքական ու միջազգային

<sup>25</sup> Farhad Kazemi and Zohreh Ajdari, Ethnicity, Identity and Politics Central Asia and Azerbaijan between Iran and Turkey, Central Asia Meets the Middle East, Ed. by David Menashri, 1998, p. 59–60.

հետազոտությունների կենտրոնի աջակցությամբ պարսկերեն հրատարակվեցին Ուզբեկստանի նախագահ Իսլամ Բարիմովի մի շարք աշխատություններ, մասնավորապես տնտեսական բարեփոխումներին նվիրված նրա գիրքը, որի առաջաբանը գրել է Տաշքենդում Իրանի նախկին դեսպան Մոհսեն Պակ-Այիինը:

Իրանն աջակցում էր նաև թյուրքալեզու երկրներում իրանագիտության ամբիոնների բացմանը: Այսպես՝ Բիշկեքի երեք համալսարաններում՝ Ղրղզա-սլավոնական, Ազգային և Հումանիտար, բացվեցին իրանագիտության ամբիոններ, որոնց Իրանը տրամադրեց մասնագիտական գրականություն և արդիական տեխնիկա: Նման ամբիոններ բացվեցին նաև Ղազախստանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում: Այս երկրներում բացվեցին նաև իրանական մշակույթի ու լեզվի ուսումնասիրման կենտրոններ:

Իրանական ղեկավարությունը նույնպես ուշադրություն դարձրեց տարբեր մասնագետների, մասնավորապես իրանագետների պատրաստման խնդրին. այստեղ ևս փորձում էին կենտրոնասիական երիտասարդության ուսումնառությունը կազմակերպել իրանական ուսումնական հաստատություններում: Այս հարցում ևս Իրանի ձեռքբերումները մեծ չեն, քանի որ երիտասարդները նախընտրում են կրթություն ստանալ արտասահմանում կամ Թուրքիայում:

Մշակութային գերակայությունն ավելի ընդգծվեց Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում, որտեղ բնակչության մեծամասնությունը խոսում է պարսկերենին մոտ տաջկերենով և իրեն համարում է իրանալեզու աշխարհի մի մասը: Երկու երկրների հարաբերությունների գաղափարական հիմքում ընկած է Տաջիկստանի կողմից ընդունված այն փաստը, որ «Ժամանակակից Իրանի Իսլամական Հանրապետությունը և Տաջիկստանի Հանրապետությունը երբեմնի միասնական արիական քաղաքակրթության ժառանգներն են»<sup>26</sup>: Սա ինչ-որ տեղ նման է Թուրքիայի քարոզած ընդհանուր ծագման գաղափարներին: 1990-ական թթ. սկզբից Իրանի կողմից Տաջիկստանին տրված օգնությունը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ վերջինս համարվում էր տարածաշրջանում Իրանի դաշնակիցը: Հատկանշական է, որ առաջինը Տաջիկստանում փորձեցին ամրապնդել իրանական մշակութային ազդեցությունը: Այսպես, Տաջիկստանում հիմնադրվել և ակտիվորեն գործում են իրանական մշակույթի երկու

<sup>26</sup> X. Додихудоев, В. Ниятбеков, Таджикистан–Иран: Достижения и перспективы сотрудничества, Центральная Азия и Кавказ, No 2(56), 2008, с. 154.



կենտրոններ, որոնցից մեկը մայրաքաղաք Դուշանբեյում է, իսկ մյուսը՝ երկրի հյուսիսում՝ Խուջանգում: Վերջինը սկսել է աշխատել 2010 թ., որտեղ կա գրադարան և անցկացվում են պարսկերեն լեզվի, պատմության ու մշակույթի վերաբերյալ դասընթացներ<sup>27</sup>: Նկատվում է նաև իսլամական գաղափարների տարածում, ուստի մեծ տեղ է հատկացվում Ղուրանի ուսուցմանը, անգամ ստեղծվել և գործում են սուրբ գրքի ուսումնասիրման խմբեր: Տաջիկստանում Իրանն ուշադրություն է դարձնում նաև բարձրագույն կրթությանը, մասնավորապես տարբեր բուհերում գործում է իրանական մշակույթի 17 անկյուններ: Տաջիկստանում 2008 թ. սեպտեմբերի 1-ից բոլոր հանրակրթական դպրոցներում սկսեցին դասավանդել նոր առարկա՝ իսլամական կրթություն: Լայնորեն տարածված են նաև իրանական հեռուստառադիո հաղորդաշարերը: Տաջիկստանում Իրանի իրականացրած մշակութային նախագծերից է նաև տարբեր հրապարակումների ֆինանսավորումը, այսպես հրատարակվում են պարսկական դասականների ստեղծագործությունները, Արևելքի պատմության վերաբերյալ գրքեր, բառարաններ, կրոնական գրականություն և այլն: Իրանական կողմն անգամ ֆինանսավորեց «Տաջիկական ժողովրդի պատմությունը» երկհատոր աշխատությունը, որը գրվել էր խորհրդային շրջանում անվանի արևելագետ և պետական գործիչ ակադեմիկոս Բաբաջան Գաֆուրովի կողմից: Նշենք, որ բավականին ակտիվորեն զարգանում են նաև իրանա-տաջիկական առևտրատնտեսական հարաբերությունները: Չնայած վերոնշյալ ակտիվ գործունեությանը՝ Տաջիկստանն իր արտաքին քաղաքականության բնագավառում Իրանին առանցքային տեղ չի հատկացնում: Այս մասին նշել է Տաջիկստանի նախագահ Իմամալի Ռահմոնովը 2006 թ. նոյեմբերի 18-ին արված հայտարարության մեջ, երբ նա ընդգծեց, որ իր երկիրն առաջինը կհամագործակցի Ռուսաստանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի, այնուհետև կենտրոնասիական երկրների և վերջում միայն Աֆղանստանի և Իրանի հետ<sup>28</sup>:

Իրանը տարածաշրջանի երկրներում կազմակերպում է մշակութային շաբաթներ ու ցուցահանդեսներ, հատկապես մանրանկարչության ու զեղազրության թեմատիկայով: Արվեստի այս ճյուղերը տարածաշրջանում շատ բարձր են գնահատվում, օրինակ՝ Ուզբեկստանում գործում են իրանական մանրանկարչության կենտրոններ: Իրանը ևս ուղիղ և հեռուստատեսային հաղորդա-

<sup>27</sup> В. Месамед, նշվ. աշխ., էջ 43:

<sup>28</sup> Л. Исамова, Рахмонов пообещал продолжить политику открытых дверей, РИА Новости, 18. 11. 2006.

շարեր է հեռարձակում Կենտրոնական Ասիայում: Նման հաղորդաշարերում մեծ տեղ են գրավում մշակութային բնույթի ծրագրերը և լուրերը<sup>29</sup>, որոնց միջոցով Իրանը փորձում է թարմացնել ընդհանուր մշակութային ժառանգության վերաբերյալ հիշողությունները:

Այդուամենայնիվ Իրանն իր մշակութային քաղաքականության մեջ ևս ընդգրկեց տարածաշրջանի երկրների հետ ունեցած ընդհանրությունները: Նա փորձեց իր ազդեցությունը տարածել ողջ տարածաշրջանում, ուստի միջոցառումներ էր իրականացնում նաև թյուրքալեզու երկրներում: Ըստ էության՝ թյուրքալեզու երկրներում Իրանը տեսանելի ձեռքբերումներ չունեցավ, ուստի նրա քաղաքականությունը հաջողված գնահատել չենք կարող: Մյուս կողմից նա ավելի ակտիվ գործունեություն ծավալեց Տաջիկստանում, որտեղ էլ կարող ենք փաստել իրանական մշակութային ներկայության մասին:

### **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Խորհրդային Միության փլուզումը Թուրքիայի և Իրանի համար կենտրոնասիական երկրների կրթական, մշակութային և մեդիա ոլորտներում ներկայանալու հնարավորություն ստեղծեց: Ըստ էության՝ նրանք ուշադրություն դարձրեցին այդ երկրների հետ ունեցած ընդհանրություններին: Իրանի հետ համեմատած՝ Թուրքիան ավելի մասշտաբային ծրագրեր իրականացրեց՝ միանգամից ուշադրությունը կենտրոնացնելով մի քանի ոլորտների վրա: Սրանով էր պայմանավորված, որ Թուրքիան ավելի տեսանելի ձեռքբերումներ ունեցավ, քան Իրանը: Հատկանշական է, որ տարածաշրջանում Թուրքիային նախևառաջ հետաքրքրում էին թյուրքալեզու երկրները, իսկ Իրանին՝ Տաջիկստանը: Այս տեսանկյունից էլ Թուրքիան հիմնական գործունեությունը կենտրոնացրեց թյուրքալեզու երկրներում, իսկ Իրանը՝ Տաջիկստանում: Պետք է ընդունել, որ տարածաշրջանի մշակութային արմատները բավականին խոր են և թուրքական կամ իրանական ազդեցության հաստատման համար պահանջվում է զգալի ներդրումներ ու երկարատև ժամանակ:

<sup>29</sup> John Calabrese, Turkey and Iran: Limits of a Stable Relationship, British Journal of Middle Eastern Studies, vol. 25, May 1998, p. 83–84.

**ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՌԴ  
ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Կովկասյան տարածաշրջանը պատմական տարբեր ժամանակաշրջաններում գտնվել է աշխարհաքաղաքական տարբեր ուժերի շահերի բախման կիզակետում: Հարավային Կովկասի տարածաշրջանը, որպես Եվրոպան և Մերձավոր Արևելքը Կենտրոնական Ասիային կապող բնական միջանցք, պայմանավորված աշխարհագրական դիրքով, բնական հարստություններով, ինչպես նաև տարանցիկ գոտի լինելու հանգամանքով, գերտերությունների համար մշտապես ունեցել է կարևոր ռազմավարական նշանակություն: Այս համատեքստում միանգամայն հիմնավորված է հնչում հետազոտող Ա. Մարինչենկոյի պնդումն առ այն, որ ով վերահսկում է Անդրկովկասը, վերահսկում է նաև Կասպից ծովը, ելքերը դեպի Միջին Ասիա և Մերձավոր Արևելք<sup>1</sup>:

ԻՍՀՄ փլուզումից, «սառը պատերազմի» ավարտից և Հարավային Կովկասի երեք պետությունների անկախության հռչակումից ի վեր տարածաշրջանում ձևավորվել է բոլորովին նոր աշխարհաքաղաքական իրավիճակ, որտեղ ազդեցության համար մրցակցում են որոշ գերտերություններ, ուժային կենտրոններ, ինչի համար պարարտ հող են նաև սկիզբ առած միջէթնիկական հակամարտությունները:

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԵՎ ԳԼՈՐԱԼ ՈՒԺԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**

Ինչպես նշում է Վ. Կուլագինը, «Միջազգային անվտանգության գլոբալ խնդիրներն աստիճանաբար առավել շատ են արտացոլվում տարածաշրջանային անվտանգության համակար-

<sup>1</sup> А. В. Маринченко, Геополитика: Учеб. пособие.– М., ИНФРА–М, 2009, с. 161–162.

գերում: Սակայն տարբեր տարածաշրջաններում նրանք միանման չեն դրսևորվում: Տարածաշրջանային գործընթացների վրա ազդեցություն է ունենում առաջատար տերությունների՝ դրսից պրոյեկտվող քաղաքականությունը: Սակայն, այս կամ այն տարածաշրջանում հատուկ նշանակություն ունեն յուրահատուկ տեղային բնույթի խնդիրները, որոնք գլխավորապես կամ բացառապես բնորոշ են կոնկրետ տարածաշրջանի»<sup>2</sup>:

Մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական ներկա իրավիճակը վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն առանցքային տեղ է գրավում Եվրասիայում, ինչն էլ բացատրում է այստեղ բազմաթիվ ուժային կենտրոնների ակտիվությունը և ուղղակիորեն անդրադառնում տարածաշրջանում քաղաքական դերակատարների միջև հակոտնյա կամ բարեկամական հարաբերությունների ձևավորման վրա<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ հարավկովկասյան երեք հանրապետությունները՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, անվտանգության առումով որդեգրել են տրամագծորեն տարբեր քաղաքականություն և ունեն տարբեր մոտեցումներ՝ ռազմական դաշինքներին, քաղաքական, տնտեսական միություններին անդամագրվելու և վերջիններիս հետ համագործակցության ձևաչափերի վերաբերյալ:

Որպես Խորհրդային Միության ժառանգորդ՝ Ռուսաստանի Դաշնությունն ավանդաբար լայնորեն ներգրավված է Հարավային Կովկասում, և թեպետ տարածաշրջանում անսահմանափակ ազդեցություն չունի, սակայն զգալի լծակների է հիմնավորապես տիրապետում<sup>4</sup>:

Ակնհայտ է նաև, որ ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած ժամանակահատվածում ՌԴ ազդեցության թուլացմանը զուգընթաց Հարավային Կովկասում առաջացած ռազմաքաղաքական ազդեցության վակուումը փորձեցին լրացնել ԱՄՆ-ն, Եվրոպայի մի շարք պետություններ, ինչպես նաև տարածաշրջանային տերությունները՝ Թուրքիան և Իրանը: Չնայած դրան՝ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական քարտեզի վրա կարելի է առանձնացնել երկու առանցքային դերակատարներ, որոնց շահերի և վարած

<sup>2</sup> В. М. Кулагин, Современная международная безопасность. Учеб. пособие, М, 2012, с. 93.

<sup>3</sup> Վ. Աթոյան, Հարավային Կովկասի անվտանգության հարցերի շուրջ, Բանբեր ՀՊՏՀ, Երևան, N 4 (32), 2013, էջ 138:

<sup>4</sup> Maria Raquel Freire, Security in the South Caucasus: the EU, NATO and Russia, The Norwegian Peacebuilding Resource Centre, Feb/2013, pp. 2–3.

քաղաքականության հարաբերակցությունն էլ պայմանավորում է տարածաշրջանային գործընթացների տրամաբանությունը: Այդ դերակատարներն են ՌԴ-ն և ԱՄՆ-ն՝ որպես գլոբալ ուժային կենտրոններ:

Իհարկե, վերոնշյալ երկու գերտերություն-ուժային կենտրոններին կարելի է որոշ վերապահումներով ավելացնել նաև ԵՄ-ն, սակայն վերջինիս վերաբերյալ՝ որպես միասնականորեն հանդես եկող դասական ուժային կենտրոն, այսօր դեռևս վաղ է խոսել: Այս համատեքստում հատկանշական է մեջբերել ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի դիտարկումը. «Ինչ վերաբերում է Եվրամիությանը, ապա կարծում եմ՝ այն առաջիկայում ո՛չ տնտեսական և ո՛չ էլ ռազմական տեսանկյունից չի ամրապնդվի այնքան, որպեսզի կարողանա հանդես գալ որպես 4-րդ ուժային կենտրոն (ԱՄՆ-ի, ՌԴ-ի և Չինաստանի հետ մեկտեղ — հեղ.): Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը երևան հանեց Եվրամիության հյուսիսի և հարավի միջև տնտեսական կարողությունների և կառավարչական մեխանիզմների միջև անհամապատասխանությունը: Միևնույն ժամանակ Եվրամիության ռազմական ամրապնդումն ինքնին հակասում է ՆԱՏՕ-ի գոյության գաղափարին և հետևապես՝ արժանանում ԱՄՆ թաքնված դիմադրությանը: Այս համատեքստում Եվրամիությունը որպես միասնական ուժային կենտրոն դիտարկելու փոխարեն մենք նրա անդամ երկրներին՝ Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Իտալիա, դիտարկում ենք որպես 2-րդ դասի գերտերություններ»<sup>5</sup>:

Համաձայնելով վերոնշյալ տեսակետի հետ՝ տեղին ենք համարում հիշատակել նաև ամերիկացի հայտնի քաղաքագետ Ռոբերտ Քյոհանի (Robert Owen Keohane) դիտարկումը, ըստ որի՝ գերտերությունն այն պետությունն է, որի առաջնորդները համարում են, որ այն միայնակ կարող է իրագործել լայն, հնարավոր է նաև՝ վճռական ազդեցություն միջազգային համակարգի վրա<sup>6</sup>: Ուստի կարծում ենք, որ ԵՄ-ն, զոնե կարճաժամկետ հեռանկարում, չի կարող հանդես գալ որպես գլոբալ ռազմաքաղաքական ուժային կենտրոն:

Հարավային Կովկասում հատկապես զգալի է ՌԴ ազդեցությունը, քանի որ նրա կողմից այդ տարածքները դիտարկվում է

<sup>5</sup> Ս. Օհանյան, Միջազգային և տարածաշրջանային ռազմաքաղաքական իրավիճակը, 21-րդ ԴԱԲ, թիվ 1 (53), 2014, էջ 11-12:

<sup>6</sup> R. O. Keohane, Lilliputians; Dilemmas: Small States in International Politics, International Organization, 23 (2), 1969, p. 296.

որպես իր ազդեցության պատմական գոտի<sup>7</sup>: Հարկ է նշել, որ 2000 թ. սկսած՝ ՌԴ-ն նորից ամրապնդում է իր դիրքերը: Իսկ վերջին տարիներին ՌԴ քաղաքականությունը դառնում է ավելի նպատակաուղղված՝ ձգտելով տարածաշրջանի բոլոր պետությունները կապել իր հետ և բացառել մյուս արտաքին ուժերի ներկայությունը<sup>8</sup>:

Համառոտ անդրադառնալով տարածաշրջանում ԱՄՆ շահերին՝ պետք է նշել, որ Անդրկովկասը նրա կողմից դիտարկվում է որպես «աշխարհագրական հենակետ», որը միացնում է Եվրոպան և Մերձավոր Արևելքը Կենտրոնական Ասիայի և Աֆղանստանի հետ<sup>9</sup>:

Գաղտնիք չէ նաև, որ ԱՄՆ-ի կողմից տարածաշրջանի նշանակությունը մեծապես կարևորվում է՝ պայմանավորված Իրանի Իսլամական Հանրապետության հետ ունեցած աշխարհագրական սահմանով: Միաժամանակ, ըստ ԱՄՆ ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի (CSIS) փորձագետների, ԱՄՆ-ն որոշ հարցերում որպես տարածաշրջանում իր շահերի առաջնղման միջնորդ Թուրքիային է դիտարկում<sup>10</sup>:

## **ԵՄ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ**

Դեռևս 1993 թ. Մասստրիխտի պայմանագրով հաստատվեց ԵՄ միասնական արտաքին քաղաքականությունը՝ որպես անդամ պետությունների միջև համագործակցության 3 հիմնական ոլորտներից մեկը: Այդ պայմանագիրը ներմուծեց ԵՄ եռսայուն համակարգը, որի երկրորդ սյունն էլ ստացավ «Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն» անվանումը (CSDP):

<sup>7</sup> Dov Lynch, The Security Dimension of the European Neighbourhood, The International Spectator, 1/2005, p. 38, տես <http://www.iai.it/pdf/articles/lynch.pdf>

<sup>8</sup> Դ. Հովհաննիսյան, Հարավային Կովկասի ինտեգրման հեռանկարների շուրջ, (22.03.2007), [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=811](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=811)

<sup>9</sup> Г. Тищенко, Военно–политическая обстановка в Кавказском регионе, (01/11/13), տես <http://www.riss.ru/analitika/2276–voenno–politicheskaya–obstanovka–v–kavkazskom–regione#.UwrlmmKSxZg>

<sup>10</sup> Anthony H. Cordesman, Bryan Gold, Robert Shelala, Michael Gibbs, US and Iranian strategic competition. Turkey and the South Caucasus, Second Edition, Center for Strategic and International Studies, Feb. 6, 2013, p. 57, տես [https://csis.org/files/publication/130612\\_turk\\_casp\\_chap9.pdf](https://csis.org/files/publication/130612_turk_casp_chap9.pdf)

Հարավային Կովկասի երկրների անկախացումից ի վեր Արևմուտքը մի շարք առանցքային ուղղություններով սկսեց տարածաշրջանում գործունեություն ծավալել.

- աջակցություն ժողովրդավարացմանը և քաղաքական բարեփոխումներին,
- օգնություն սեփականաշնորհմանն ու շուկայական տնտեսության անցման գործում,
- անվտանգության ապահովման և ահաբեկչության դեմ պայքար,
- տարածաշրջանում առկա հակամարտությունների հանգուցալուծում<sup>11</sup>:

Վերջին տարիներին տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակը բնութագրվում է ԵՄ դերի աստիճանական մեծացմամբ: Վերջինս դարձել է տարածաշրջանում կարևոր խաղացողներից մեկը: 2008 թ. օգոստոսի ռուս-վրացական հակամարտությունն անկասկած շրջադարձային էր Հարավային Կովկասում ԵՄ դերի վերագնահատման և տարածաշրջանում ազդեցության ընդլայնման համար ստեղծված աննախադեպ հնարավորության տեսանկյունից:

Մյուս կողմից՝ Հարավային Կովկասի շուրջ ծավալվող գործընթացները այքի են ընկնում աննախադեպ շարժընթացով: Ինչպես նշում է քաղաքագիտության դոկտոր Հ. Քոթանջյանը. «Արաբական գարնան» դժվար կանխատեսելի զարգացումը, Իրանի միջուկային ծրագրի շուրջ միջազգային լարվածության աճը, իսլամական աշխարհի նկատմամբ Թուրքիայի «նոր-օսմանականության» արտաքին քաղաքականության կերպափոխումը, Կենտրոնական Ասիայում անվտանգային դինամիկայի զարգացման հեռանկարների բարդացումը՝ կապված Աֆղանստանից դաշնադրային զորքերի նախատեսվող դուրսբերման հետ, ինչպես նաև Եվրոպական Միության աշխարհառազմավարական տարածքում համակարգային ճգնաժամի խորացումը այն հիմնական արտաքին գործոններն են, որոնք ազդում են Հարավային Կովկասում անվտանգային միջավայրի փոփոխությունների դինամիկայի վրա»<sup>12</sup>:

<sup>11</sup> Р. Гирагосян, Запад и Южный Кавказ в 2010 г., КАВКАЗ–2010. Ежегодник Института Кавказа, Ред. А. Искандарян, Ер., Институт Кавказа, 2012, с. 156.

<sup>12</sup> Հ. Քոթանջյան, Զ. Մարշալի անվան կենտրոնի շրջանավարտների հայկական Ասոցիացիայի, Եվրոպական անվտանգության ուսումնասիրման կենտրոնի և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան կողմից համատեղ կազմակերպված «Հարավային Կովկաս՝ նոր մարտահրավերներ» թեմայով սեմինարի զեկույց, Երևան, 02/02/2012, էջ 2, տե՛ս [http://www.mil.am/files/Final%20Marshall%20Center%20Conference\\_ARM.pdf](http://www.mil.am/files/Final%20Marshall%20Center%20Conference_ARM.pdf)

Հատկանշական է սակայն, որ ԵՄ-ն ընդհանուր առմամբ տարածաշրջանի երկրների և առկա խնդիրների ու հակամարտությունների հանգուցալուծման նկատմամբ համապարփակ մոտեցում դեռևս չի կարողանում մշակել: Մյուս կողմից՝ ԵՄ-ն քաղաքականության հարաբերականորեն նոր և յուրահատուկ սուբյեկտ է: Այս համատեքստում կարևոր է նշել, որ, որոշ փորձագետների կարծիքով, ԵՄ-ն որպես առանձին ուժային կենտրոն չի հանդես գալիս, և Հարավային Կովկասի նկատմամբ եվրոպական և հյուսիսատլանտյան քաղաքական ծրագրերն իրարից շատ չեն տարբերվում:

Ընդհանրապես շատերն են խոսում միասնական Արևմուտքի անվտանգության քաղաքականության մասին՝ նկատի ունենալով բազմաթիվ գլոբալ հարցերում ԱՄՆ-ի և ԵՄ-ի ու նրա առաջատար երկրների շահերի ընդհանրությունը: Սակայն ռազմավարական ընդհանրությունների համապատկերում վերջին տարիներին ակնհայտ են դարձել նաև նրանց մարտավարական տարածայնությունները (գլոբալ բնապահպանական խնդիրներ, Բալկանյան և Իրաքյան ճգնաժամեր, ՆԱՏՕ-ին Ուկրաինայի և Վրաստանի, ինչպես նաև ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը, ՌԴ-ի հանդեպ քաղաքականությունը և այլն): Դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով: Այսպես, ԱՄՆ-ն նախընտրում է գործել գլոբալ մասշտաբով և միակողմանի, ԵՄ-ն՝ տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների միջոցով, ԱՄՆ-ն միջազգային հակասությունները հաճախակի նախընտրում է լուծել ուժային մեթոդներով, մինչդեռ ԵՄ-ն՝ նախապատվությունը տալիս է «փափուկ ուժին», ԱՄՆ-ի անվտանգության քաղաքականության մեջ ՆԱՏՕ-ն մնում է միակ նախապատվելի ռազմաքաղաքական կառույցը, մինչդեռ ԵՄ-ն՝ փորձում է եվրոպական թատերաբեմում և մերձակա տարածաշրջաններում ամրապնդել նաև ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության մեխանիզմները<sup>13</sup>: Չնայած այս ամենին՝ չի կարելի բացառել այն վարկածը, որ սա ընդամենը Արևմուտքի կողմից դերերի բաժանում է և տարբեր ուղղություններով ընթացող, սակայն՝ միասնական քաղաքականություն:

Փաստ է նաև, որ ԵՄ ընդլայնման վերջին գործընթացներից հետո Հարավային Կովկասի տարածաշրջանը դարձավ ԵՄ անմիջական հարևան: Հաշվի առնելով տարածաշրջանի անկայու-

<sup>13</sup> Ն. Գալստյան, Ա. Սարգսյան, Ա. Հակոբյան, Լ. Հակոբյան, Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում, Միջմասնագիտ. հետազոտ., Երևան, 2009, էջ 82:



նությունը և էքսկլյուզիոն ներուժով օժտված հակամարտությունների առկայությունը՝ ԵՄ արտաքին սահմանների անվտանգության ապահովման համար նոր մեխանիզմներ մշակելու անհրաժեշտություն է առաջացել:

Ներկա գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս ԵՄ հետաքրքրությունը Հարավային Կովկասի հանդեպ պայմանավորված է մի շարք գործոններով.

1. Տարածաշրջանի նկատմամբ վերահսկողությունը թույլ կտա ազդեցություն ունենալ ոչ միայն հարավկովկասյան երկրների վրա, այլ նաև քաղաքական ազդեցությունը տարածել Մերձավոր Արևելքի տարածաշրջանի ուղղությամբ:

2. ԵՄ-ը շահագրգռված է տարածաշրջանում ՌԴ ազդեցության թուլացմամբ, ինչը վերջինիս վրա ազդելու լրացուցիչ լծակ է՝ ԵՄ շահերից բխող քաղաքականություն պարտադրելու համար:

3. Թուրքիայի և Իրանի աշխարհագրական հարևանությունը տարածաշրջանին, ինչը նաև պայմանավորված է առաջինի՝ ԵՄ անդամ դառնալու ցանկությամբ, երկրորդի՝ ԵՄ-ին անհանգստացնող միջուկային ծրագրով:

4. Լրջագույն խնդիր է նաև ԵՄ ներքին շուկայի և ածխաջրածնային ռեսուրսների մատակարարման բազմազանեցման հարցը: Այստեղ պետք է նշել, որ ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովման հարցը բավականին մտահոգիչ է, քանի որ ԵՄ ներմուծվող գազի շուրջ 34 տոկոսը մատակարարվում է ՌԴ-ից<sup>14</sup>, որի 80 տոկոսը՝ Ուկրաինայի տարանցիկ գազամուղով, ինչն առավել խոցելի է դարձնում ԵՄ էներգետիկ անվտանգությունը, հատկապես Ուկրաինայի և Ղրիմի շուրջ ներկայումս ծավալվող ներքաղաքական և աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում: Այս տեսանկյունից Հարավային Կովկասը դիտարկվում է որպես Կասպյան ավազանի ռեսուրսների վրա վերահսկողություն սահմանելու և ՌԴ տարածքը շրջանցող՝ Կասպյան ավազանի և Կենտրոնական Ասիայի ածխաջրածնային պաշարների տարանցման ուղի:

5. Հարավային Կովկասը դիտարկվում է նաև որպես զենքի և թմրանյութերի հնարավոր տարանցման ուղի: Այս համատեքստում հիշատակման է արժանի ս. թ. հունվարի 18-ին ՀՀ ԱԱԾ տպավորիչ հաջողությունը, երբ վերջինիս կողմից ձեռնարկված օպերատիվ-որոնողական աշխատանքների արդյունքում ձերբա-

<sup>14</sup> Sftu Market Observatory for Energy. KEY FIGURES, June/2011, p. 7, [http://ec.europa.eu/energy/observatory/countries/doc/key\\_figures.pdf](http://ec.europa.eu/energy/observatory/countries/doc/key_figures.pdf)

կալվել էր Թուրքիայի քաղաքացի, ով մաքսանենգության ճանապարհով Հայաստանի և Վրաստանի տարածքով դեպի Թուրքիա առանձնապես խոշոր չափերով՝ 927 կգ, հերոինի մաքսանենգության փորձ էր իրականացրել<sup>15</sup>:

6. ԵՄ ընդլայնումից հետո նրա սահմանները մոտեցել են Հարավային Կովկասին, ուստի ԵՄ գլխավոր հետաքրքրություններից մեկն էլ հարևան երկրներում քաղաքական և տնտեսական կայունության ապահովումն է:

Վերոնշյալ չորրորդ դրույթի հետ կապված՝ կարելի է նշել, որ եթե 2006 թ. և 2009 թ. ռուս-ուկրաինական «գազային ճգնաժամից» հետո էներգամատակարարման աղբյուրների և ուղիների բազմազանեցման ուղղությամբ ԵՄ ջանքերի ակտիվացումը մի շարք հեղինակներ համարում են ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությունում հարավկովկասյան տարածաշրջանի դերի և նշանակության աճի հիմնագործոն, ապա նույն այդ ուղեգծի բաղկացուցիչ ԵՄ տարածաշրջանային քաղաքականության հիմնադրույթներից (հոչակված սկզբունքներից) շեղվող երկկողմ էներգետիկ գործակցության զարգացումն Ադրբեյջանի հետ կարելի է դիտել որպես ԵՄ տարածաշրջանային քաղաքականության փոխակերպման՝ էներգետիկ շահի վրա հիմնված «ադրբեյջանակենտրոն» քաղաքականության ձևավորման գործոն<sup>16</sup>:

Հարավային Կովկասում ԵՄ հետաքրքրությունների իրացման հիմնական մեխանիզմներից պետք է առանձնացնել տեխնիկական օժանդակության՝ ԵՄ ՏԱՍԻՍ ծրագիրը, որը երկու այլ տարածաշրջանային ծրագրերի հետ համատեղ (ԻՆՕԳԵՅԹ և ՏՐԱՍԵԿԱ) կարելի է դիտարկել որպես ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության ուղղությամբ իրականացված առավել նշանակալի գործիք: Չնայած որոշակի օբյեկտիվ թերություններին, որոնք 2006 թ. հանգեցրեցին նշված ծրագրի փակմանը՝ ՏԱՍԻՍ ծրագիրը Հարավային Կովկասում ԵՄ-ին սեփական դերակատարումը մեծացնելու հնարավորություն տվեց:

Փոխհարաբերությունների հետագա զարգացման տրամաբանությունը հանգեցրեց ԵՄ-ի և Հարավային Կովկասի երկրների հետ գործընկերության և համագործակցության երկկողմ համաձայնագրերի կնքման, որոնք շարունակություն գտան Եվրոպա-

<sup>15</sup> Տե՛ս ԱԱԾ պաշտոնական կայք, (20.01.2014), <http://nss.am/index.php/am/news/248-20012014>

<sup>16</sup> Ա. Թերզյան, Հարավային Կովկասը Եվրամիության էներգետիկ անվտանգության քաղաքականության համատեքստում, 21-րդ ԴԱԲ, թիվ 1 (53), 2014, էջ 79:

կան Հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներգրավմանը: Հենց այդ ծրագրի շրջանակներում է հստակեցվում հարավկովկասյան գործընկերների հետ ԵՄ փոխհարաբերությունները:

Կարելի է ենթադրել, որ ընդհանուր առմամբ ԵՀՔ-ն մի լուծում էր այն պետությունների հետ համագործակցության համար, որոնք չունեն ԵՄ-ին անդամակցելու կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկար: Այս քաղաքականությամբ ԵՄ-ն դարձավ ավելի ինտրովերտ և սահմանափակեց իրեն հարևաններով, որը, մեր կարծիքով, դարձավ մի բուֆերային շղթա Եվրոպայի համար<sup>17</sup>:

2008 թ. մայիսին ԵՄ երկու պետությունների՝ Լեհաստանի և Շվեդիայի կողմից առաջ քաշվեց «Արևելյան գործընկերության» նախաձեռնությունը, որն, ի թիվս այլոց, ներառում էր նաև հարավկովկասյան երեք երկրները և կոչված էր չեզոքացնելու եվրոպական քաղաքականության բացթողումները ԵՄ-ի և գործընկեր երկրների միջև երկկողմ հարաբերությունների խորացման միջոցով:

«Արևելյան գործընկերության» բոլոր պետություններին առաջարկվել էր ԵՄ-ի հետ կնքել այսպես կոչված «Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր» (DCFTA)՝ որպես Ասոցացման համաձայնագրի՝ ավելի լայն քաղաքական համաձայնագրի գլխավոր մաս<sup>18</sup>:

2013 թ. նոյեմբերին կայացած Վիլնյուսյան գագաթաժողովում տարածաշրջանի երկրներից Վրաստանը նախաստորագրեց Ասոցացման համաձայնագիրը, Հայաստանը չնախաստորագրեց այն և բավարարվեց ՀՀ-ԵՄ համատեղ հայտարարության ընդունմամբ, իսկ Ադրբեջանն, իր հերթին, ստորագրեց վիզային ռեժիմի դյուրացման պայմանագիրը: Դրանից վաղ՝ նույն թվականի սեպտեմբերին, Հայաստանը հայտարարեց Մաքսային միության անդամ դառնալու նպատակների մասին:

Ինչպես դիպուկ նկատել է «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գ. Հարությունյանը, ՀԱՊԿ անդամ Հայաստանը հայտարարել է Մաքսային միություն, այնուհետև՝ նաև Եվրասիական մի-

<sup>17</sup> Հ. Խեմչյան, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները եվրոպական կառույցների հետ և համագործակցության հիմնական ծրագրերը, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012, էջ 18:

<sup>18</sup> H. Khachatryan, DCFTA Between EU and Armenia: Expectations and Implications, 15/March/2011, տես <http://www.easternpartnership.org/community/debate/dcfta-between-eu-and-armenia-expectations-and-implications>

ություն մտնելու մասին: Այդպիսով Հայաստանը կատարել է իր վերջնական աշխարհաքաղաքական ընտրությունը և դրանով իսկ պարզություն մտցրել Հարավային Կովկասի քարտեզում<sup>19</sup>:

Բազմաթիվ փորձագետներ «Արևելյան գործընկերություն» նախաձեռնությունը դիտարկում են որպես տարածաշրջանում Ռուսաստանի հետաքրքրություններին ուղղված մարտահրավեր: Որոշ առումով այդպես է: Պատահական չէ, որ Պրահայի գազաթափողովի նախապատրաստական նյութերում և նրանց կողմից ընդունված փաստաթղթերում «Արևելյան գործընկերությունը» դիտարկվում է ոչ միայն որպես «վեցյակի» (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս — հեղ.) տնտեսական ինտեգրման, այլ նաև քաղաքական համագործակցության հարթակ՝ ընդհուպ մինչև ընդհանուր Խորհրդարանական վեհաժողովի ստեղծում<sup>20</sup>:

Անշուշտ, պետք է արձանագրել, որ ՌԴ իշխանություններն ի սկզբանե մեծ խանդավառությամբ չընդունեցին ծրագրի գաղափարը՝ այն որակելով որպես նախկին խորհրդային երկրների ներքին գործերին միջամտելու և ԵՄ ազդեցության գոտու ընդլայնման փորձ: Ակնհայտ է, որ ծրագրի առաջնային դեր է կատարում էներգետիկ բաղադրիչը, մասնավորապես՝ ԵՄ էներգառեսուրսների մատակարարման ՌԴ-ն շրջանցող այլընտրանքային ուղիները ստեղծումը: Մյուս նպատակը նախկին խորհրդային տարածքում ՌԴ ազդեցության թուլացումն է:

Այսպես, դեռևս 2009 թ. ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը նշում էր, որ որոշ պետությունների կողմից այդ գործընկերությունն ընկալվում է որպես գործընկերություն ընդդեմ Ռուսաստանի, և Մոսկվան չէր ցանկանա, որ այն նման բնույթ ստանա<sup>21</sup>: Ըստ ռուսաստանցի փորձագետ Ս. Ժիցովի՝ ԱՄՆ-ն, նրա հետ նաև ԵՄ-ն իրականացնում են իրենց սեփական քաղաքականությունը՝ գործնականում ՌԴ աշխարհաքաղաքական հետաքրքրություններն ու հավակնությունները հաշվի չառնելով: Եվրոպացիների և յուրաքանչյուր հաջորդ ամերիկյան վարչակազմի քաղաքականությունը դառնում է ավելի ու ավելի վճռական և պրագմատիկ: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության էվոլյուցիան (սկսած Զ. Բուշ ավա-

<sup>19</sup> Գ. Հարությունյան, Տարածաշրջանի վերաձևավորումը, 21-րդ ԴԱԲ, թիվ 1 (53), 2014, էջ 30:

<sup>20</sup> В. Дымарский, Восточное партнерство—дело тонкое, (14/05/2009), <http://www.regnum.ru/news/1167047.html>

<sup>21</sup> Д. Медведев, Восточное партнёрство не должно становиться партнёрством против России, (22.05.2009), <http://www.regnum.ru/news/1167047.html>

գից մինչև Բ. Օբամա)՝ հետխորհրդային տարածքում ՌԴ–ի ազդեցությունը թուլացնելու ջանքերի շարունակական ընդլայնման քաղաքականությունն է: Եվրոպացիները որդեգրել են ամերիկացիների փորձը՝ լիարժեք օգտագործելով դիվանագիտությունը, էներգետիկայի, տնտեսության ոլորտում նախաձեռնությունները, աջակցելով նախկին խորհրդային հանրապետությունների նոր միավորումների ստեղծմանը: Եվ այս ամենի նպատակը մեկն է՝ մասնատել հետխորհրդային տարածքը և ԱՊՀ երկրները դուրս բերել ՌԴ ազդեցությունից: «Արևելյան գործընկերությունը» գործնականում ՌԴ–ին կանգնեցնում է փաստի առաջ, երբ իրեն քողարկված ձևով առաջարկում են հրաժարվել իր աշխարհաքաղաքական հավակնություններից և չդիտարկել հետխորհրդային տարածքը որպես իր հատուկ հետաքրքրությունների գոտի: Այսպիսի ենթադրության է դրդում նաև այն, որ ԵՄ նախաձեռնության հաստատումից հետո հատուկ հարաբերություններ են հաստատվելու նախկին խորհրդային բոլոր երկրների հետ՝ բացառությամբ ՌԴ–ի, որին ընդդեմ էլ, փաստորեն, առաջարկվում է «ընկերանալ»<sup>22</sup>:

Հարկ է նշել, որ «Արևելյան գործընկերության» նկատմամբ Մոսկվայի դիրքորոշումը հստակ ձևակերպել է նաև ԵՄ–ում ՌԴ ներկայացուցիչ Վ. Չիժովը, ըստ որի՝ իրենց դիրքորոշումը չի հանգում «Արևելյան գործընկերության» հակազդմանը և ինչպես յուրաքանչյուր տարածաշրջանային նախաձեռնություն, այն ևս գոյության իրավունք ունի: Նա կարևոր է համարում, որ այն, ինչ է արվում է այդ նախաձեռնության շրջանակներում, ուղղված չլինի ՌԴ շահերի դեմ և ՌԴ–ի հետ համագործակցությունում արհեստական ընդհատմանը: ՌԴ–ն դեմ է, որ ԱՊՀ այդ երկրներն արհեստական երկրնտրանքի առջև կանգնեցվեն՝ կան առաջ՝ դեպի «պայծառ ապագա» ԵՄ–ի հետ, կան հետ՝ ՌԴ–ի հետ: Իսկ այն, որ «Արևելյան գործընկերության» սկզբնական փուլում այդպիսի նշաններ եղել են, փաստ է<sup>23</sup>:

Հետագա գործընթացները ապացուցեցին, որ երկու ուղղությամբ (և՛ ՌԴ–ի, և՛ ԵՄ–ի հետ — հեղ.)՝ «Արևելյան գործընկերության» մասնակից երկրների ինտեգրացման քաղաքականությունը

<sup>22</sup> С. Жильцов, СНГ под натиском Восточного партнерства, (30/04/2009), [http://www.ng.ru/politics/2009-04-30/3\\_kartblansh.html](http://www.ng.ru/politics/2009-04-30/3_kartblansh.html)

<sup>23</sup> В. Чижов, «Южный поток» надо сделать приоритетным проектом ЕС, (18/05/2009), [http://www.ng.ru/courier/2009-05-18/9\\_chizhov.html?mright=0](http://www.ng.ru/courier/2009-05-18/9_chizhov.html?mright=0)

նը չէր շարունակվելու և առաջին հերթին ԵՄ կողմից ընտրության հստակ պահանջ էր ներկայացվելու<sup>24</sup>:

Հատկանշական է, որ ԵՄ և անդամ-երկրների ներկայացուցիչները պարբերաբար հավաստիացնում էին, որ ծրագիրը ոչ մի կերպ ուղղված չէ ՌԴ-ի դեմ: Մասնավորապես «Արևելյան գործընկերության» վերաբերյալ ԵՄ հուշագրերից մեկում ասվում է. «Սա ամենևին էլ հակառուսական նախաձեռնություն չէ: Սա պատասխան է մեր արևելյան գործընկերների ձգտմանը՝ էականորեն խորացնել և ընդլայնել իրենց հարաբերությունները ԵՄ հետ: Ռուսաստանը շարունակում է մնալ ԵՄ կարևորագույն գործընկերը, որի հետ մենք այժմ բանակցություններ ենք վարում նոր համապարփակ համաձայնագրի շուրջ: Մենք միշտ ընդգծում ենք, որ Արևելյան գործընկերության ծրագրի մասնակիցները իրենց հարևան երկրների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ լավ աշխատանքային հարաբերությունների հաստատման կարիք ունեն»<sup>25</sup>:

Բացի այդ՝ 2009 թ. հուլիսին՝ «Արևելյան գործընկերություն» ծրագրի և տարածաշրջանում դրա ազդեցության դրսևորումների վերաբերյալ միջազգային փորձագետների մասնակցությամբ Երևանում կայացած քննարկմանը, գերմանական Հենրիխ Բյոլի անվան հիմնադրամի հարավկովկասյան բաժնի տնօրեն Իրիս Կեմպեն նույնիսկ պնդում էր, որ «Արևելյան գործընկերությունը» բխում է հենց Ռուսաստանի շահերից, քանի որ ՌԴ-ի ու ԵՄ-ի համար ժողովրդավարական հարևանության ստեղծումը հնարավորություն կտա երկուսին էլ ապրելու ավելի ապահով միջավայրում, և սա քաղաքական, հասարակական ու տնտեսական համագործակցության լավ դաշտ է: Ուստի ՌԴ-ն պետք է օգտվի «Արևելյան գործընկերության» ստեղծած հնարավորությունից: Այն ուղղված չէ նրա դեմ»<sup>26</sup>:

<sup>24</sup> Տե՛ս մասնավորապես Շ. Ֆյուլե, Ասոցացման համաձայնագիրը մասնատել չենք կարող, հարցազրույց Եվրամիության ընդլայնման և հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատարի հետ, (09/12/2013), <http://www.mediamax.am/am/news/interviews/7973/>, ինչպես նաև Ռ. Մորել, Հայաստանն այլևս չի կարող ինքնուրույն բանակցել, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպանի մամլո ասուլիս, (03/10/2013), <http://www.a1plus.am/77017.html>

<sup>25</sup> Eastern Partnership European Commission – MEMO/09/217, 05/05/2009, տե՛ս [http://europa.eu/rapid/press-release\\_MEMO-09-217\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_MEMO-09-217_en.htm)

<sup>26</sup> Տե՛ս Ս. Հարությունյանի Քննարկվեցին «Արևելյան գործընկերություն» ծրագրին առնչվող հարցեր հաղորդագրությունը, (26.06.2009), <http://www.armenialiberty.org/articleprintview/1763434.html>

ՌԴ-ն էներգետիկայի ոլորտում սերտորեն համագործակցում է Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ: Հետևապես այստեղ ևս ԵՄ-ն միջնորդավորված կերպով ՌԴ-ից կախվածության մեջ է: Բնական է, որ ՌԴ դիրքերի թուլացումը տարածաշրջանում ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովման հարցում առանցքային նշանակություն ունի: Սակայն, էներգետիկ անվտանգության ապահովման առումով ՌԴ-ից կախվածության նվազմանը զուգահեռ, կարևորվում է նաև տարածաշրջանում կայունության ապահովումը: ԵՄ-ն չի ցանկանում միջամտել և չի տիրապետում բավականին լծակների՝ տարածաշրջանի հակամարտությունների լուծման առումով<sup>27</sup>:

Խնդրի քննարկման համատեքստում էական է նաև նշել, որ Հայաստանը Հարավային Կովկասի երկրներից թերևս միակն է, որ իր արտաքին քաղաքականության նախապատվություններում կողմնորոշվում է դեպի ՌԴ՝ բազմակողմանիորեն խորացնելով և ընդարձակելով իր համագործակցությունը ռազմաքաղաքական, տնտեսական և հումանիտար ոլորտներում: Այդ ամենն իր արտացոլումն է գտել նաև «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում, որտեղ մասնավորապես նշվում է. «Ռուսաստանի ռազմական ներկայությունը Կովկասում կարևորվում է որպես Հայաստանի անվտանգության և տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության ապահովման գործոն... Հայաստանը մեծապես կարևորում է Ռուսաստանի հետ համագործակցությունը պաշտպանական, ռազմատեխնիկական և էներգետիկայի բնագավառներում, տրանսպորտային երթուղիների գործարկման, տարածաշրջանային կայունության և անվտանգության խնդիրներում, Հայաստանի ռուսաստանաբնակ քաղաքացիների իրավական կարգավիճակի բարելավման հարցերում<sup>28</sup>»:

Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ ԵՄ-ն դեռևս պատրաստ չէ Հարավային Կովկասի հարցում բացահայտ առճակատման գնալու ՌԴ-ի հետ՝ հաշվի առնելով նաև Ուկրաինայի և Ղրիմի հարցի շուրջ ստեղծված ճգնաժամը, Սիրիայի շուրջ ծավալվող դեպքերը,

<sup>27</sup> S. Vasilyan, The Policy of Regional Cooperation in the South Caucasus՝ Argentine Center of International Studies, 2008, p. 27, տես՝ [http://edoc.bibliothek.uni-halle.de/servlets/MCRFileNodeServlet/HALCoRe\\_derivate\\_00001901/The%20Policy%20of%20Regional%20Cooperation.pdf](http://edoc.bibliothek.uni-halle.de/servlets/MCRFileNodeServlet/HALCoRe_derivate_00001901/The%20Policy%20of%20Regional%20Cooperation.pdf)

<sup>28</sup> Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Հայկական բանակ ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Երևան, 2007, էջ 38:

և ակնհայտ է, որ ներկա պահին ԵՄ–ն առավելապես հակված է ՌԴ–ի հետ համագործակցության եզրեր փնտրելուն, քան մրցակցության ուժեղացմանը:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Փաստ է, որ այսօր աշխարհը հարափոփոխ է: Ղրիմի շուրջ տեղի ունեցող գործընթացները հստակորեն ցույց տվեցին Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված աշխարհակարգի թերությունները և նորի սկիզբ դրեցին: Ինչպես իրավացիորեն նշում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ռ. Սաֆրաստյանը, «Մենք պետք է տեսնենք, թե ինչ նոր կառուցվածք կունենա նոր աշխարհակարգը: Եվ այս նոր աշխարհակարգում Ռուսաստանի դերը կլինի ավելի մեծ, քան մենք տեսնում ենք»<sup>29</sup>:

Կարելի է արձանագրել նաև, որ աշխարհը կորցնում է իր գունային երանգները՝ կրկին բաժանվելով սպիտակների և սևերի: Այս նոր ձևավորվող աշխարհակարգի կողմից թելադրվող խաղի կանոնները ստիպում են Հայաստանին կատարել իր վերջնական աշխարհաքաղաքական կողմնորոշումը՝ որոշակիորեն շտկումներ մտցնելով որդեգրած կոմպլեմենտար քաղաքականության մեջ:

Ակնհայտ է, որ ԵՄ–ի կողմից կիրառվող քաղաքական ազդեցությունը վերջինիս համար դեռևս բավարար արդյունքներ չի ապահովում: Չնայած նրան, որ ԵՄ–ն դեռևս տարածաշրջանի նկատմամբ միասնական ռազմավարություն մշակելու փուլում է, սակայն վերջին տարիներին ԵՄ արտաքին քաղաքականությունը հարավկովկասյան տարածաշրջանում դառնում է առավել նպատակաուղղված, ինչը պայմանավորված է մի կողմից՝ ԵՄ ընդլայնմամբ, մյուս կողմից՝ էներգետիկ ռեսուրսների մատակարարման բազմազանեցման խնդրի հրատապությամբ՝ հաշվի առնելով նաև ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումները:

Հարավային Կովկասում ԵՄ շահերը մի շարք հարցերում հակադրվում են տարածաշրջանի գլխավոր խաղացող ՌԴ շահերին: Միաժամանակ, եթե ԵՄ–ն ցանկանում է նվազեցնել իր էներգետիկ կախվածությունը ՌԴ–ից, վերջինս, ընդհակառակը,

<sup>29</sup> Ռ. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, մամուլի ասուլիսից, (19/03/2014), <http://www.tert.am/am/news/2014/03/19/Rubern-safrastyan/>



փորձում է պահպանել իր բոլոր, այդ թվում՝ էներգետիկ ազդեցության լծակները:

ԵՄ-ն դեռևս պատրաստ չէ Հարավային Կովկասի հարցում բացահայտ առճակատման գնալու ՌԴ-ի հետ, միաժամանակ ԵՄ-ն ՌԴ-ի էներգետիկ ռեսուրսների սպառման կարևորագույն շուկան է, հետևաբար ներկա պահին, չնայած ուժգնացող աշխարհաքաղաքական մրցակցությանը, ԵՄ-ն և ՌԴ-ն առավել հավանական է, որ կհակվեն ավելի շուտ համագործակցության եզրեր փնտրելուն, քան մրցակցության ուժգնացմանը:

Կարելի է եզրակացնել նաև, որ ԵՄ արտաքին քաղաքականության արևելյան վեկտորը, մասնավորապես հարավկովկասյան տարածաշրջանը, մոտ ապագայում ԵՄ-ի համար կմնա իր շահերի իրականացման համար առաջնային ուղղություններից մեկը:

Հայաստանի Հանրապետության վերաբերյալ պետք է նշել, որ Մաքսային միության և Եվրամիության հետ հարաբերությունների առաջնահերթությունների մեջ ամեն ինչ առավելապես հստակ է: ՀՀ-ի համար ազգային անվտանգության ապահովման խնդիրները առաջնային նշանակություն ունեն: Գաղտնիք չէ նաև, որ ՀՀ անվտանգության ապահովումն էապես պայմանավորված է ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցությամբ՝ ԱՊՀ, ՀԱՊԿ և առաջիկայում արդեն ՄՄ շրջանակներում: Պետք է նշել նաև, որ ՌԴ-ի հետ երկկողմանի համագործակցության ընդլայնումը ոչ միայն ՀՀ, այլև ողջ տարածաշրջանի անվտանգության և կայունության ապահովման կարևորագույն գործոնն է:

Միևնույն ժամանակ կարելի է կանխատեսել, որ չնայած ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական և տնտեսական կապերի խորացմանը՝ ՀՀ-ն կշարունակի ԵՄ-ի հետ տնտեսության, հումանիտար և այլ ոլորտներում հարաբերությունների խորացման որոշակի ձևաչափերի որոնումը: Վերջինս թույլ է տալիս ՀՀ-ին մի կողմից՝ իրականացվող բազմաոլորտ բարեփոխումների շարունակականության ապահովում, բազմավեկտոր ներգրավվածության շնորհիվ անվտանգության ամրապնդում, տարածաշրջանում առկա հակասությունների մեղմում, իսկ մյուս կողմից՝ ՀՀ շահերի դեմ այդ գործոնների օգտագործմամբ նշյալի՝ Ադրբեյջանի կողմից ամբողջությամբ մենաշնորհման արգելափակում:

## **FROM THE HISTORY OF THE FORMATION OF THE POST-SOVIET FOREIGN POLICY ORIENTATIONS OF THE RULING ELITE IN GEORGIA: A RETROSPECTIVE LOOK**

The main purpose of our tour is the scientific understanding and, therefore, leading to a common denominator stories which is an extremely difficult and painful process to form the post-Soviet foreign policy orientations of the ruling elite in Georgia. During the last 22 years since regaining its independence the main goal of Georgian foreign and internal policy was to dissociate itself from its Soviet past and escape from Russia's historic, strategic and civilizational space. Similarly, it often alienated itself from the post-Soviet institutions and regional groupings like the Collective Security Treaty Organization, the Customs Union, etc. dominated by Moscow. In this context, the important task of clarifying the specific reasons for the refusal of Georgia to participate in the significant post-Soviet education – the Commonwealth of Independent States (CIS).

The solution of this problem is determined by the current Russian-Georgian relations. After the armed conflict between Russia and Georgia last question of membership in the CIS was firmly out of the agenda. The problem permanently was transferred to history. However, the future settlement of interstate relations between Moscow and Tbilisi seems possible if only set forth in the previous article, the negative trends and phenomena will be overcome by both sides.

The disappearance of the Soviet Union has been facilitated by the fact that the legal consolidation of this fact was presented not as liquidation, and as a transformation of a pre-existing state into a new quality – Commonwealth. The process of «construction» CIS passed without Georgia, as its new political elite, fundamentally refusing to take part in the post-Soviet integration projects, strongly rejected

the possibility of their country's membership in the organization. Given that by virtue of Russia will play a dominant role in the CIS, the Georgian public opinion strongly exaggerated the idea of «decolonization» and «deoccupation» of Georgia that is breaking all former ties with Moscow.

The collapse of the USSR has created a situation of political and legal uncertainty in relations between the former Soviet republics. Union within the CIS to determine the potential shape and direction of the new interaction. The Russian leadership hoped to keep the CIS format integrated security system, which implies the existence of a military – strategic space. Initially, even the hope of saving smoldering within the CIS unified the army. This, however, was not fulfilled. Relations between Russia and its closest neighbors soured. New states began an intensive search for new political and economic allies in the world, especially among the EU and NATO. The Russian leadership is satisfied that at first giving Georgia itself, yet tried, whenever possible, do not let her out of their influential area.

Russian policy in the Caucasus in the 1990s was often inconsistent and contradictory. This is partly due to nomenclature crisis that struck the Russian political elite after the collapse of the USSR. Internal political struggle in Russia led to the formation of two roughly equal camps with nearly opposite to the foreign policy program. Each of the two groups had one of the branches of the government and tried to pursue their own policies, regardless of the other one. This state of «dual power» aggravated inevitable bureaucratic «tug of war» over whether, in whose competence will be security issues and who will finally control over foreign policy. Most important of all was the fact that due to the collapse of the Soviet armed forces commanders of all ranks have gained a certain degree of independence. The final result was that because of the constantly arising between them and civil official contradictions decision-making process was temporarily torn apart.

It is better to state that the Russian military played the most prominent role in the South Caucasus in 1992–1993. The control forces were scattered throughout the region, and they had a significant impact on local policy makers. Significance of Russian generals relied solely on the most important asset in any conflict situation, namely the control of arms and other military infrastructure. Authorities then established independent states often acted as unimportant Russian military customers. Consequence of the new political alignment was

the transformation of Defense Minister P. Grachev to the main adviser to President Boris Yeltsin of Caucasus Affairs<sup>1</sup>. A key element of Russia's influence in the South Caucasus began delivering armament. Militarization of Russia's Caucasian policy, thus led to the politicization of the Russian military in that region.

Compared with the military, whose strength was based on the physical state on the ground, the Russian Foreign Minister clearly weakened because its employees were initially virtually incompetent in Caucasian affairs. One result of the lack of embassies, experts or trusted contacts was the reduction of diplomatic activity before the 1993 bilateral negotiations in Moscow and the occasional trip to the region Minister A. Kozyrev or his deputies.

Russian policy towards the CIS countries in the 1990s determined confrontation between the two tendencies. Part of the politicians considered it necessary to maintain the Commonwealth as a cohesive geopolitical association with the Russian prevailing role. Preservation and strengthening of multilateral cooperation within the CIS was seen as the main direction of Russian policy. Another approach, most peculiar to the Russian neoliberals, recognized the inevitability of geopolitical and geo-economic diversity and pluralism in the post due to formerly known limitations of political and economic resources of Russia itself. Until the mid-90s, however, only the first line prevailed, largely due to previous relapses, «imperial» policy of the Kremlin. There was a lasting impression that the CIS system was considered as an effective instrument for the preservation and strengthening of Russia's influence in relation to other members of the Commonwealth, which were considered as «satellites» and had to follow the common policy produced in Moscow.

The inevitable consequence of this policy was the realization that Russia should play the role of a great power in the Caucasus. The aim of the Russian leadership, apparently was to try every possible way to restore the Kremlin's influence throughout the region and prevent conflicts in South Caucasus gaining momentum shifting to the phase, which inevitably would have opened the floodgates for the intervention of the third, more powerful extra-regional forces.

The Russian political elite may have made a contribution to return the former communist leader that of the Caucasian republic Eduard Shevardnadze to Tbilisi in March 1992. After the violent overthrow of

---

<sup>1</sup> Д. Тренин, Интересы безопасности и политика России в кавказском регионе. Спорные границы на Кавказе, Москва, 1996, с. 111.

Zviad Gamsakhurdia, other governments were reluctant to recognize the legitimacy of his successors. The former exiled president Gamsakhurdia was a motley group intended to use the name of the former head of the Soviet Foreign Ministry to legitimize its semi-criminal regime, including abroad. The ex-president of Georgia and his supporters – «Zviadists», unanimously asserted, that the organizers of the coup clearly ruled «the hand of Moscow»<sup>2</sup>. It is possible that a number of senior politicians in Moscow indirectly, and some Russian military were directly involved in the chain of events that eventually led to a military coup and the removal of Zviad Gamsakhurdia. While it supposed to happen, certainly, it was wrong to say that Shevardnadze was put to power as a «puppet» of the Kremlin. We can't deny the fact that «personnel policy» of Moscow against Shevardnadze was in those circumstances the best possible choice for preserving fast melting of Russian influence on Georgia. This position is shared by the former military elite of the Russian Defense Ministry, which ran a special policy in the South Caucasus, and for Yeltsin there was no visible reason not to trust her in this respect. Russia recognized Georgia's independence and appointed an ambassador in October 1992. Russia's official position was that security was needed for a stable Georgia along Russia's southern border.

Shevardnadze's diplomatic contacts and personal relationships with many of the world's leaders ended Georgia's international isolation in 1992. In March, Germany became the first Western country to post an ambassador to Georgia; Shevardnadze's close relations with German foreign minister Hans-Dietrich Genscher were a key factor for that decision. By December 1992, six countries had diplomatic missions in Tbilisi: Germany, Russia, China, Israel, Turkey and the United States.

Among the former Soviet republics, the neighboring Transcaucasian nations of Armenia and Azerbaijan have special significance for Georgia. Despite Georgia's obvious cultural and religious affinities with Armenia, relations between Georgia and Azerbaijan generally have been closer. Economic and political factors have contributed to this situation. First, Georgian fuel needs to make good relations with Azerbaijan vital to the health of the Georgian economy. Second, Georgians have sympathized with Azerbaijan's position concerning the conflict between Armenia and Azerbaijan over of Nagorno-

<sup>2</sup> Независимая газета, 21 февраля, 1992.

Karabakh because of similarities to Georgia's internal problems with Abkhazia and South Ossetia. Both countries have cited the principle of «inviolability of state borders» in defending national interests against claims by ethnic minorities. In February 1993, Georgia, ruled by Shevardnadze, concluded a far-reaching treaty of friendship, cooperation, and mutual relations with Azerbaijan, including a mutual security arrangement and assurances that Georgia would not re-export Azerbaijani oil or natural gas to Armenia. Turkey and Azerbaijan exerted some pressure on Georgia to join the blockade of Armenia.

Armenia maintained fundamentally good relations with Georgia and Shevardnadze signing a friendship treaty with Armenia in May 1993. The main incentive for this policy was the fact that blockade of Armenian transport routes and pipelines meant that routes through Georgia were Armenia's only direct connection with the outside world.

Of all countries, Georgia's relations with Russia were both the most important and the most ambivalent. Russia (previously the Soviet Union) was deeply involved in the conflicts in the South Ossetia and Abkhazia, and in 1993 Ajarian leader Aslan Abashidze also declared Russia the protector of their interests. Thus Russia seemingly holds the key to the resolution of those conflicts in a way that would avoid the fragmentation of Georgia.

According to the point of view shared by the majority of Georgians, namely Kremlin Center provoked all the conflicts in the post-Soviet Georgia. It certainly had an obvious exaggeration, since the potential for conflict in them had largely been laid before the formation of the USSR. In addition, the Georgian position towards this issue can be regarded as the desire to absolve themselves of all responsibility. Georgian society reacted to any manifestations of non-Georgian identity within Georgia inadequately, hysterically, thereby contributing to further radicalization of the separatist movements. Russia really had a great influence on the events in Abkhazia and South Ossetia, which largely contributed not to discharge. Armed conflicts in these regions had been considered by the Georgian side as a conflict primarily with Russia.

In early summer 1992, Russia was really on the edge of war with Georgia over South Ossetia. Some Russian officials (Khasbulatov, Rutskoï, Gaidar) declared harsh statements against the Georgian side<sup>3</sup>. Conflict situation was temporarily resolved through tripartite

---

<sup>3</sup> Независимая газета, 23 июня, 1992.

Russian– Georgian–Ossetian «Dagomis agreement» signed in June 1992 cessation of hostilities in South Ossetia opened for official Tbilisi way to get part of the Soviet weapons based on the «Tashkent Agreement» (May 1992). Georgia, unlike the other former Soviet republics, declared that procedure rather complicated by the fact that it was not a member of the CIS. In Dagomis, Shevardnadze obviously persuaded the Russian president of the desire for an early entry into the CIS, but only after the consolidation of his power in the country. At this meeting, Boris Yeltsin, in his turn, assured the Georgian leader to help Georgia become a member of the UN<sup>4</sup>. Georgia became the 179<sup>th</sup> member of the United Nations in July 1992; it was the last of the former Soviet republics to be admitted. Of course, some politicians and military officials of Yeltsin’s inner circle alarming position of the Georgian leader, who, despite promises, did not hurry to join his country to the CIS and under various pretexts, delayed the solution of this extremely important issue (from the Russian point of view). Opposing this context, the Abkhazians, apparently had all the chances to rely on a more careful attitude of the Russian militaries<sup>5</sup>.

The war in Abkhazia re aggravated Russian–Georgian relations. With regard to this conflict Russian leadership apparently did not have a unified and coherent policy. It was quite clear what was at Russia’s interest in the Caucasus: to see Georgia as strong and united or weak and disjointed. There was a confrontation between Yeltsin, fully focused on Shevardnadze, who saw him as their political ally in Georgia, and Ruslan Khasbulatov, standing on a pro–Abkhazian positions<sup>6</sup>. Deteriorated anti–Russian sentiment in Georgia after the first failure of Georgian troops in Abkhazia. Russian military was accused of helping the Abkhaz separatists. Georgian parliament demanded the immediate withdrawal of the Russian troops from the country. Under such circumstances similar statements about the withdrawal of Russian troops from Georgia were calculated at putting pressure on Russia in order to get her to help guide military victory of Georgians in Abkhazia. The Georgian side realized that it does not have enough troops to reverse the military situation in their favor. In this scenario, the theme of Georgia’s participation in the CIS had

<sup>4</sup> Независимая газета, 27 июня, 1992.

<sup>5</sup> С. Лакоба, Абхазия де-факто или Грузия де-юре? О политике России в Абхазии в постсоветский период 1991–2000 гг., Саппоро, Хоккайдо, 2001, с. 52.

<sup>6</sup> В. Митяев, Грузино–абхазский конфликт и гражданская война в Западной Грузии. Грузия: проблемы и перспективы развития, Т. 2–й, Москва, 2002, с. 51.

been subject to much political bargain between Tbilisi and Moscow. At the top of debate, even Shevardnadze said that his country would never be a member of the Commonwealth<sup>7</sup>. At the same time the Russian leadership matured quite clear its geostrategic plan – to force Georgia to join the CIS through the war in Abkhazia.

There are several versions of the commonplaces about the role and participation of the Russian leadership in the development of the Abkhaz conflict. According to one of them, the Kremlin had linked the changing attitudes to Tbilisi on the participation in the CIS with Shevardnadze coming to the power. Without realizing his plan, he set forth with a change of sentiment in Moscow against the Georgian state. Russia had begun to provide substantial military assistance to the Abkhaz side. Another version claims that the decision to help the Abkhaz separatists took no political leadership of Russia, and a certain portion of its generals, who allegedly believed Shevardnadze one of the main culprits of the collapse of the Soviet Union<sup>8</sup>.

Military defeat in Abkhazia, Georgia, triggered a fierce but short-term anti-Russian campaign, though, forcing the Georgian leadership to a significant rapprochement with Moscow. Rapprochement with Russia gave hope to preserve Abkhazia within a single Georgian statehood. Therefore, it was important for Tbilisi to confirm the position of the Russian Federation recognizing the integrity of Georgia within its previous borders, as well as favorable mediation Kremlin negotiation with Abkhaz leaders.

With the beginning of October 1993 under the influence of the recent fall of Sukhumi, in the conditions of an anti-government uprising development in Samegrelo under the leadership of the former President Gamsakhurdia, Shevardnadze apparently assessed the situation as catastrophic for his government and frantically searched a way out. It was no longer just about saving Abkhazia within Georgia, but also about how to prevent the Gamsakhurdia's come back to power in Tbilisi.

Possibility of Georgia to join the CIS was one of the few trump cards that had been in the hands of Eduard Shevardnadze. Radical solution to this problem was to preserve their power. Another, no less important point, which was agreed was to maintain the continual presence of Russian troops in Georgian territory. Such commitments

---

<sup>7</sup> Независимая газета, 22 сентября, 1993.

<sup>8</sup> Шакарянц С., Политика постсоветской России на Кавказе и ее перспективы, Ереван, 2001, с. 131.



were given by Shevardnadze on October 8, 1993, during his visit to Moscow. «Zviadists» were in close proximity to the second largest city of Georgia – Kutaisi. As a result, railway Batumi–Poti–Tbilisi–Yerevan was completely blocked. The country was clearly at the edge of collapse. Thus, agreed between Tbilisi and Moscow, wording of urgent measures «to eliminate military reasons preventing the normalization of the situation on the railway lines»<sup>9</sup>, standing commitment to assist the Government of Russia Eduard Shevardnadze military assistance against the broad offensive «Zviadists» in western Georgia. After this agreement the ex–President Gamsakhurdia’s armed actions supporters lost the total meaning: Russian troops took custody of settlements and other strategic sites, and any attempt to «Zviadists» meant to take their inevitable clash with the army of the Russian Federation. Russian Marines entered the center of rebellion – Zugdidi, to completely demoralize «Zviadists» and provide a quick and final victory of the pro–government forces.

A more obvious retrospective analysis of the events shows that the Russian military assistance played the most important role. Weakening central leadership of Georgia, Boris Yeltsin’s refusal to assist perishing Shevardnadze regime inevitably led to his downfall. In this respect, Shevardnadze traveled to Moscow immediately after the defeat in Abkhazia and took a sharp turn in policy towards Russia. Supporting the regime of Eduard Shevardnadze, Georgia had to pay entry into the CIS. The highest point in the development of friendly relations between the former Soviet republics – Georgia and Russia – was the visit of Boris Yeltsin to Tbilisi on February 3, 1994 and the subsequent short–term rapprochement between the two countries. Moreover, the fact that this could not prevent the political opponents of the Russian president, it led to the removal of R. Khasbulatov and A. Rutskoi from power in October 1993.

Georgian political elite felt too weak to withstand the pressure of Russia. Symbolic act of joining the CIS was mostly observed from Georgian political spectrum as the beginning of the end, as surrender to Russia, gradually being followed by a refusal from the rest of Georgia’s independence. Shevardnadze’s agreement on the presence of Russian military bases on its territory, was considered as the de facto loss of sovereignty<sup>10</sup>. Moreover, becoming a member of

<sup>9</sup> Дипломатический Вестник, 1993, № 21–22, с. 26.

<sup>10</sup> Г. Нодиа, Образ Запада в грузинском сознании. Этнические и региональные конфликты в Евразии, Общ. ред. Б. Коппитерс, Кн. 3–я, Москва, 1997, с. 167, 171.

